21-ՐԴ ԴԱՐ

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

3 (73)

ԵՐԵՎԱՆ

2017

21-ՐԴ ԴԱՐ
տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից **3 (73), 2017**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ալեքսանդր Գասպարիշվիլի
Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետհամալսարանի լաբորատորիայի վարիչ, փ.գ.թ. (Մոսկվա, ՌԴ)

Ալեքսանդր Կորնիլով
Նիժնի Նովգորոդի Ն.Ի. Լոբաչևսկու անվան պետական համալսարանի արտասահմանյան տարածաշրջանագիտության և տեղային պատմության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր (Նիժնի Նովգորոդ, ՌԴ)

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Արամ Սաֆարյան
Բանասիրական գիտությունների թեկնածու

Արթուր Աթանեսյան
ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, ք.գ.դ.

Բաբկեն Վարդանյան
«Հայք հաստատություն» հ/կ տնօրեն, ՀՀ պաշտպանության նախարարի ավագ խորհրդական

Գագիկ Հարությունյան *(համակարգող)*
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Զավեն Եկավյան
Դոկտոր, պրոֆեսոր (Լիսաբոն, Պորտուգալիա)

Էդուարդ Լ. Դանիելյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ.Կարապետյան
ՀՀ վարչապետ, տ.գ.դ.

Հրանուշ Հակոբյան
ՀՀ Սփյուռքի նախարար, ի.գ.դ.

Միհրան Դաբաղ
Դոկտոր, պրոֆեսոր, Ռուրի համալսարանի պատմության ֆակուլտետին առընթեր Սփյուռքի և Ցեղասպանության ինստիտուտի տնօրեն (Բոխում, Գերմանիա)

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.

Սեյրան Օհանյան
Պահեստի գեներալ-գնդապետ

Սերգեյ Գրինյան
Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, տ.գ.դ. (Մոսկվա, ՌԴ)

Վահագն Ազլյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի նախագահ, տ.գ.թ.

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Թիվ 3 (73), 2017թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալ
Վահագն Ագլյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Կարեն Վերանյան
Վահրամ Հովյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Հարությունյան, Արա Մարջանյան
Բազմակենտրոն աշխարհակարգի
գիտատեխնոլոգիական բնապատկերը …..... 5

Սամվել Մարտիրոսյան
Հայաստանի տեղեկատվական անվտանգությունը
և կրիտիկական ենթակառուցվածքները 28

Կարեն Վերանյան
Մարդկային և մտավոր կապիտալ
հասկացությունների շուրջ 38

Սամվել Մանուկյան
Արժեքային համակարգը որպես բնակչության
բնական աճը խթանող գործոն 51

Ռոբերտ Խաչատրյան, Ֆրիդա Հակոբյան
Բարձրագույն կրթության գործառույթները
կրիտիկական ենթակառուցվածքների
անվտանգության պաշտպանության
գործընթացում 73

Վահրամ Հովյան
Հայկական սփյուռքի
անվտանգության մարտահրավերները 107

Վահագն Ագլյան
ՌԴ ռազմական կարողությունների գնահատումը.
սկանդինավյան հետազոտական կենտրոնների
որոշ մոտեցումներ 126

Հուշագիր հեղինակին 141

ՀՏԴ 001.89:330.4+91.001

ԲԱԶՄԱԿԵՆՏՐՈՆ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԲՆԱՊԱՏԿԵՐԸ

Գագիկ Հարությունյան**, *Արա Մարջանյան**

Բանալի բառեր ՝ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական մշակումներ, «Հիերոգլիֆների աշխարհ», «Անգլոսաքսոնական աշխարհ», «Մայրցամաքային Եվրոպա», «Սլավոնական աշխարհ», «Կիսալուսնի աշխարհ», *BRICS*, գիտատեխնոլոգիական ծանրության կենտրոն, կենտրոնարար։

Գլլոբալ բազմակենտրոն հարթությունում տեղի ունեցող բարդ գործընթացները մեկնաբանելու համար վերլուծաբանները հղում են կատարում խոշոր տերությունների առաջնորդների հայտարարություններին և բարձր մակարդակում ընդունված որոշումներին, փորձում վեր հանել աշխարհաքաղաքական դերակատարների ակնհայտ և ոչ ակնհայտ մտադրությունները՝ հաշվի առնելով վերջիններիս քաղաքակրթական առանձնահատկությունները։ Ներկայումս որոշակի ուշադրություն է հատկացվում նաև տեղեկատվական հարցերին, սակայն տպավորություն է ստեղծվում, թե այդ հասկացության նախնական իմաստը հաճախ մոռացվում է (լատ.՝ *informare* - «տեսք, ձև տալ, ուսուցանել, մտածել, երևակայել»), և հիմնական ուշադրությունը հատկացվում է ցանցահենների, բլոգերների գործողություններին՝ չմոռանալով, սակայն, սոցցանցերում *like*-երի և *fake*-երի մասին։ Միևնույն ժամանակ, կարծես թե մոռացվում է, որ արդի զարգացումների օրինաչափություններն էապես կախված են որոշումներ ընդունող անձանց, կազմակերպությունների և այն հանրույթների տեղեկացվածության մակարդակից (գիտելիքների իմաստով), որոնք նրանք ներկայացնում են։ Ավելին, գիտելիքային ռեսուրսների որակն ու չափն է, որ պայմանավորում են այս կամ պետության կամ հանրության դիրքը և տեղը արդի աշխարհակարգում։ Նման մոտեցումը հիմնավորելու նպատակով հոդվածում դիտարկվել է այն կապը, որն առկա է տարբեր հանրությունների գիտատեխ-

* «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն։

** ՄԱԿ ԶԾ էներգետիկայի ազգային փորձագետ, տ.գ.թ., «Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ։

նոլոգիական ներուժի և նրանց աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական բնութագրերի միջև:

Այս նպատակով օգտագործվել են այնպիսի ինտեգրալ ցուցանիշներ, ինչպիսին են.

- տվյալ երկրի (երկրների խմբի) համախառն ներքին արտադրանքը (ՀՆԱ), բերված գնողունակության պարիտետի *(ՀՆԱգուպ)* համեմատ;
- գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական մշակումների՝ *ԳՀՓԿՄ* (*R&D, НИиОКР*) ընդհանուր ծախսերը՝ նույնպես բերված գնողունակության պարիտետի (*ԳՀՓԿՄ*գուպ), ինչպես նաև՝ *ՀՆԱգուպ* հանդեպ *ԳՀՓԿՄգուպ* ծախսերի %-ը (այսուհետ, պարզության նպատակով, «գուպ» ինդեքսը չի նշվի):

Այս վերջին ցուցանիշի առանձին դիտարկումը պայմանավորված է նրանով, որ այն առավել ընդհանրական կերպով նկարագրում է տվյալ երկրում *ԳՀՓԿՄ* ոլորտում վարվող քաղաքականությունը, քանի որ հենց այս ցուցանիշն է նախօրոք պլանավորվում տվյալ երկրում *ԳՀՓԿՄ* զարգացման այս կամ այն ռազմավարության իրականացման ընթացքում:

Նշված ցուցանիշների առավել հասանելի և ընդգրկուն աղբյուր է հանդիսանում *R&D Magazine* ամսագիրը, որում, մասնավորապես, ներկայացված են *ԳՀՓԿՄ* ծախսերի առումով աշխարհի 40 առաջատար երկրների ցանկը և ցուցանիշները՝ 2012-2016թթ. ժամանակահատվածի համար [1, 2]:

Համաձայն նշված աղբյուրների՝ ակնկալվում էր, որ ընդհանուր առմամբ 2016թ. աշխարհում *ԳՀՓԿՄ-ի* վրա կծախսվի մոտ $1.9 տրլն, ինչը կազմում է համաշխարհային ՀՆԱ-ի 1.74%-ը (մոտ $112 տրլն): 2016-ին *(տե՛ս Նկ. 1) ԳՀՓԿՄ* համաշխարհային ծախսերում ԱՄՆ մասնաբաժինը առավելագույնն է՝ ընդհանուր ծախսերի ավելի քան մեկ քառորդը (26.4%, $514 մլրդ): Չինաստանի մասնաբաժինն ավելի քան մեկ հինգերորդն է (20.3%, $396 մլրդ): Առաջին հնգյակը, որի կազմը և հաջորդականությունն անփոփոխ են 2012 թվականից, եզրափակում են Ճապոնիան (8.6%, $167 մլրդ), Գերմանիան (5.6%, $109 մլրդ) և Հվ. Կորեան (4.0%, $77 մլրդ): Հատկանշական է, որ այդ հինգ երկրներից երեքը՝ Չինաստանը, Ճապոնիան և Հվ. Կորեան, ներկայացնում են Արևելյան Ասիան, այն դեպքում, երբ մայրցամաքային Եվրոպան ներկայացված է միայն Գերմանիայով: Բացի արդեն նշված երկրներից, առաջին տասնյակում են Հնդկաստանը, Ֆրանսիան, Ռուսաստանն ու Մեծ Բրիտանիան: Առաջատարների տասնյակը եզրափակում է Բրազիլիան՝ Լատինական Ամերիկայի միակ ներկայացուցիչը: 2016-

ին այս տասը երկրների ընդհանուր բաժինը *ԳՀՓԿՄ* համաշխարհային ծախսերում կազմել է 78.5%, իսկ մյուսների՝ աշխարհի ավելի քան 190 երկրի բաժինը կազմել է ընդամենը 21.5%: 2016-ին ՀՆԱ-ի հանդեպ %-ով արտահայտված *ԳՀՓԿՄ* համաշխարհային առաջատարը Հարավային Կորեան էր՝ ավելի քան 4.0%, որին հաջորդում են Իսրայելը (3.93%, մինչ 2014թ.՝ աշխարհի առաջատարը), Ֆինլանդիան, Շվեդիան և Ճապոնիան:

Նկ. 1

ԳՀՓԿՄ համաշխարհային գումարային ծախսերում առաջին տասնյակ երկրների բաշխումը (%, վերևում): Առաջատար երկրների հնգյակն՝ ըստ ՀՆԱ-ի հանդեպ ԳՀՓԿՄ ծախսերի (%, ներքևում)



Ուշագրավ օրինաչափություններ են ի հայտ գալիս, երբ լեզվական և քաղաքակրթական հենքի վրա խմբավորվում են մի շարք երկրներ ու դիտարկվում դրանց *ԳՀՓԿՄ* ներուժն առանձին: Այդ եղանակով առանձնացվել են հետևյալ 6 խմբերը.

1. «Հիերոգլիֆների աշխարհ»՝ Չինաստան, Ճապոնիա, Հվ. Կորեա, Թայվան և Սինգապուր (բոլորը՝ 40 առաջատարների ցանկից);
2. «Անգլոսաքսոնական աշխարհ»՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Կանադա, Ավստրալիա և Նոր Զելանդիա (վերջինը չի մտնում 40 առաջատար երկրների ցանկի մեջ);
3. «Մայրցամաքային Եվրոպա»՝ ԵՄ հատված, որի մեջ մտնում են Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան, Իսպանիան, Պորտուգալիան, Ավստրիան, Բելգիան, Նիդեռլանդները, Դանիան, Շվեյցարիան, Շվեդիան, Ֆինլանդիան և Նորվեգիան (բոլորը՝ 40 առաջատարների ցանկից);
4. «Սլավոնական աշխարհ»՝ ՌԴ, Լեհաստան և Չեխիա, ինչպես նաև 40 առաջատար երկրների 2016թ. ցանկ չմտնող Ուկրաինա, Սլովենիա, Սլովակիա, Բելառուս, Սերբիա և Չեռնոգորիա;
5. «Կիսալուսնի աշխարհ»՝ Իսլամական աշխարհի հատված, որի մեջ մտնում են Թուրքիան, Իրանը, Կատարը, Մալայզիան, Պակիստանը, Սաուդյան Արաբիան, Ինդոնեզիան, Եգիպտոսը և Բանգլադեշը (բոլորը՝ 40 առաջատարների ցանկից);
6. *BRICS* երկրների խումբ՝ Բրազիլիա, ՌԴ, Հնդկաստան, Չինաստան և ՀԱՀ:

Աղյուսակ 1-ում ի մի են բերված երկրների այս խմբերի ցուցանիշները՝ գումարային տարածքի, բնակչության ու ՀՆԱ-ի համար, և խմբային միջինը՝ ՀՆԱ-ի հանդեպ *ԳՀՓԿՄ* ծախսերի %-ի համար: Ինչպես երևում է աղյուսակից, «Հիերոգլիֆների աշխարհը» ոչ միայն գերազանցում է մյուս խմբերը (հասկանալի է՝ բացի *BRICS*-ից) բնակչության թվաքանակով, այլև $4 տրլն-ով գերազանցում է «Անգլոսաքսոնական աշխարհը» խմբային ՀՆԱ–ով: Առավելությունը նկատելի է նաև *ԳՀՓԿՄ* գծով, թեև այստեղ տարբերությունն այնքան էլ նկատելի չէ՝ $678 մլրդ, $619 մլրդ-ի դիմաց: Սակայն «Հիերոգլիֆների աշխարհը» դրա վրա ծախսում է իր խմբային ՀՆԱ-ի 2.87%-ը, իսկ «Անգլոսաքսոնական աշխարհը»՝ 1.98%: Բնական է, որ այս միտման պահպանման պարագայում *ԳՀՓԿՄ* ընդհանուր ծախսերի տարբերությունը կաճի հօգուտ «Հիերոգլիֆների աշխարհի»:

Աղյուսակ 1

Ընդամենը (և միջինը ՀՆԱ-ի հանդեպ *ԳՀՓԿՄ*%-ի համար)	Մակերես, մլն km²	Բնակչություն, մլրդ	ՀՆԱ, մլրդ $	*ԳՀՓԿՄ*, մլրդ $	*ԳՀՓԿՄ*, % ՀՆԱ-ից
Հիերոգլիֆների աշխարհ	10.1	1 580	28 414	678.3	2.87%
Անգլոսաքսոնական աշխարհ	28.1	451	24 084	618.7	1.98%
BRICS	39.7	3 087	35 606	562.7	1.30%
Մայրցամաքային Եվրոպա	3.3	337	13 831	311.2	2.38%
Սլավոնական աշխարհ	18.6	261	5 758	76.6	1.15%
Կիսալուսնի աշխարհ	8.9	957	9 948	71.7	0.90%

Ինչպես հետևում է աղյուսակից, զբաղեցրած տարածքով «Անգլոսաքսոնական աշխարհը» գերազանցում է «Սլավոնականը» 1.5 անգամ, ընդհանուր ՀՆԱ-ով՝ 4 անգամ, իսկ *ԳՀՓԿՄ* ծախսերով՝ 8 անգամ: «Հիերոգլիֆների աշխարհը» գերազանցում է «Սլավոնականը» խմբային ՀՆԱ-ով 5 անգամ, *ԳՀՓԿՄ* ծախսերով՝ 9 անգամ, իսկ ՀՆԱ-ի հանդեպ *ԳՀՓԿՄ* %-ով՝ 2.5 անգամ: Շոշափելի է նաև «Մայրցամաքային Եվրոպայի» գերազանցությունը «Սլավոնական աշխարհի» նկատմամբ. ըստ բնակչության՝ 1.3 անգամ, խմբային ՀՆԱ-ով՝2.4 անգամ, *ԳՀՓԿՄ* ծախսերով՝ 4 անգամ, ըստ ՀՆԱ-ի հանդեպ *ԳՀՓԿՄ* %-ով՝ 2.1 անգամ: Այս վերջին ցուցանիշով «Մայրցամաքային Եվրոպան» գերազանցում է «Անգլոսաքսոնական աշխարհը» 0.4%-ով և զիջում է միայն «Հիերոգլիֆների աշխարհին»: Թեև «Սլավոնական աշխարհն» այս ցուցանիշով գերազանցում է «Կիսալուսնի աշխարհը» 0.25%-ով, սակայն դրանց *ԳՀՓԿՄ* խմբային ծախսերը գրեթե հավասար են՝ մոտ $77 և $72 մլրդ համապատասխանաբար: Համեմատության համար նշենք, որ միայն Հվ. Կորեայի *ԳՀՓԿՄ* ծախսերը 2016-ին կազմել են $77.14 մլրդ: Իսկ խմբային ՀՆԱ-ով «Սլավոնական աշխարհը» զիջում է «Կիսալուսնի աշխարհին» 1.7 անգամ, բնակչությամբ՝ գրեթե 4 անգամ:

Դժվար չէ նկատել, որ երկրների դիտարկվող խմբերից յուրաքանչյուրն ունի իր հստակ արտահայտված տնտեսական-ժողովրդագրական առաջատար երկիրը: Օրինակ, «Հիերոգլիֆների աշխարհում» դա Չինաստանն է, որը զբաղեցնում է իր խմբի տարածքի 95%-ը, ընդհանուր բնակչության 87%, ընդհանուր ՀՆԱ 70% և *ԳՀՓԿՄ* ընդհանուր ծախսերի 58%-ը: «Անգլոսաքսոնական աշխարհում» ԱՄՆ-ն է՝ զբաղեցնելով իր խմբային

տարածքի ընդամենը 35%-ը, բայց ընդհանուր բնակչության 72%-ը, խմբային ՀՆԱ-ի 77% և *ԳՀՓԿՄ* խմբային ծախսերի 83%-ը: Գերմանիան զբաղեցնում է «Մայրցամաքային Եվրոպայի» տարածքի ընդամենը 11%-ը, բայց բնակչության 24%-ը, ընդհանուր ՀՆԱ 27% և *ԳՀՓԿՄ* խմբային ծախսերի 35%-ը: Ռուսաստանը զբաղեցնում է «Սլավոնական աշխարհի» խմբային տարածքի 92%-ը, բնակչության 55%, խմբային ՀՆԱ 59% և *ԳՀՓԿՄ* ծախսերի 67%-ը: «Կիսալուսնի աշխարհում» Թուրքիան թեև զբաղեցնում է իր խմբի երկրների տարածքի ընդամենը 9%-ը և նրա ընդհանուր բնակչության 8%-ը, բայց *ԳՀՓԿՄ* ընդհանուր ծախսերի մեծությամբ (մոտ $14 մլրդ) շոշափելիորեն գերազանցում է իր խմբի մյուս բոլոր երկրները, իսկ ՀՆԱ մեծությամբ (մոտ $1.62 տրլն) զիջում է միայն Սաուդյան Արաբիային (մոտ $1.71 տրլն): Այս երկրներն են, որոնք հիմնականում պայմանավորում են իրենց խմբի պայմանական «ծանրության կենտրոնը» ՀՆԱ-*ԳՀՓԿՄ* առանցքներով հարթությունում և այդ իսկ պատճառով դրանք կանվանենք *«կենտրոնարար երկրներ»*:

Երկրների խմբավորումն առանձին «լեզվա-քաղաքակրթական աշխարհներում» թեև արտահայտում է քաղաքակրթական, աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական որոշակի միտումներ, միևնույն ժամանակ առաջ է բերում մի շարք կարևոր խնդիրներ: Պարզաբանենք դրանցից մի քանիսը «Հիերոգլիֆների աշխարհի» օրինակով:

Այսպես, *Նկ. 2*-ում (վերևում) 2016թ. ցուցանիշների համար ներկայացված է «Հիերոգլիֆների աշխարհի» երկրների դիրքը *ԳՀՓԿՄ* ծախսեր (X-առանցք) - ՀՆԱ (Y-առանցք) հարթությունում՝ լոգարիթմական մասշտաբով (վերջինս ընտրված է արժեքների չափազանց մեծ սփռվածություն ունեցող պատկերը մեկ միասնական նկարում ակնառու ամփոփելու նպատակով): Ինչպես տեսնում ենք, այս խմբի երկրները դիրքավորված են մոտավորապես մեկ գծի երկայնքով, և Չինաստանն այստեղ զբաղեցնում է ամենավերին և աջ դիրքը՝ ՀՆԱ $20 տրլն, *ԳՀՓԿՄ* ծախսեր՝ $514 մլրդ կոորդինատներով: Երկրների նիշերի տրամագիծը համապատասխանում է տվյալ երկրում 2016-ին ՀՆԱ-ի հանդեպ *ԳՀՓԿՄ* ծախսերի մեծությանը՝ %-ով: Օրինակ, այստեղ ամենամեծ տրամագիծն ունի Հվ. Կորեան ռեկորդային՝ 4.04% ցուցանիշով (տե՛ս վերը, *Նկ. 1*): Այժմ, եթե ամբողջ «Հիերոգլիֆների աշխարհը» պատկերելու լինենք միայն մեկ՝ ենթադրյալ երկրով, ապա դա հնարավոր է կատարել երեք տարբեր եղանակով: Առաջին՝ կարելի է պարզապես գումարել այս խմբի բոլոր երկրների ՀՆԱ արժեքները և

Նկ. 2

«Հիերոգլիֆների աշխարհը» բացարձակ (վերևում) և տեսակարար (ներքևում) ցուցանիշներով, 2016թ.





ԳՀՓԿՄ ծախսերն ու ստանալ մի ենթադրյալ դիրք՝ ՀՆԱ $28.4 տրլն և *ԳՀՓԿՄ* $678.3 մլրդ կոորդինատներով: Ընդ որում, այս դիրքում գտնվող ենթադրյալ երկրի նիշի տրամագիծը կորոշվի գումարային արժեքների հարաբերությամբ (2.39%): Մեր նկարում այսպիսի ենթադրյալ երկիրը տեղ կզբաղեցնի Չինաստանից հետո՝ նրանից աջ ու վեր: *Նկ. 2*-ում այն ունի «խմբի գումարային դիրք» վերտառությունը: Սակայն «Հիերոգլիֆների աշխարհի» խմբի այսպիսի *ներկայացումը* մեզ հետաքրքրող գիտատեխնոլոգիական ասպեկտում առնվազն բավարար չէ, իսկ իրականում սխալ է:

Նախ՝ ՀՆԱ արժեքների և *ԳՀՓԿՄ* ծախսերի նման *ադիտիվությունը* ենթադրում է խմբի անդամ երկրների միջև չափազանց զորեղ համախմբում՝ բնորոշ մեկ միասնական երկրի: Երկրների խմբի դեպքում այն ենթադրում է լեզվական, քաղաքակրթական, աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական սերտ կոնսոլիդացիա: Ինչն ակնհայտորեն բացակայում է մերօրյա «Հիերոգլիֆների աշխարհում»: Հիշատակենք միայն Չինաստանի և Թայվանի, Ճապոնիայի, Հվ. Կորեայի միջև այսօր առկա աշխարհաքաղաքական հակասությունները: Ներկայումս այսպիսի սերտ կոնսոլիդացված իրավիճակը բնութագրական է միայն «Անգլոսաքսոնական աշխարհին»: Եվ հետո, ՀՆԱ ու *ԳՀՓԿՄ* ծախսերի բացարձակ մեծությունները, ինչպես և բնակչության կամ զբաղեցրած տարածքի ցուցանիշները թեև ինքնին կարևոր են, օրինակ՝ երկրների (երկրների խմբի) հզորությունը գնահատելու համար, սակայն մեր դեպքում բավարար չեն: Դրանց կիրառումը քողարկում է խմբի երկրներին բնորոշ աշխարհագրական, ժողովրդագրական և տնտեսական առանձնահատկությունները, համահարթեցնում է *ԳՀՓԿՄ* առանձնահատկություններն ու հագեցվածության աստիճանը:

Երկրների խմբի գիտատեխնոլոգիական համարժեք ներկայացման համար անհրաժեշտ է օգտվել տեսակարար ցուցանիշներից՝ բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ (հազ. $/մարդ), *ԳՀՓԿՄ* տեսակարար ծախսեր (հազ. $/մարդ): Ընդ որում, անցումը տեսակարար ցուցանիշների կարող է էականորեն փոխել դիտարկվող խմբի կոնֆիգուրացիան: Այսպես, *Նկ. 2*-ի ներքևում բերված են «Հիերոգլիֆների աշխարհ» խումբը «տեսակարար ՀՆԱ - *ԳՀՓԿՄ* տեսակարար ծախսեր» հարթությունում, այժմ արդեն սովորական մասշտաբով: Նախորդի նման, այստեղ երկրների նիշերի տրամագիծը համապատասխանում է ՀՆԱ-ի հանդեպ *ԳՀՓԿՄ* ծախսերի տոկոսին: Ինչպես տեսնում ենք, խմբի կառուցվածքը զգալիորեն փոխվել է: Ամենավերին և աջ դիրքն այստեղ զբաղեցնում է Սինգապուրը, տեսակարար ցուցանիշների իր

բացառիկ արժեքներով՝ մեկ շնչին ընկնող $84.3 հազ. ՀՆԱ և $2.2 հազ. *ԳՀՓԿՄ* ծախսեր (2.6%): Ինչպես կտեսնենք ստորև, այս ցուցանիշները ողջ աշխարհում գերազանցվում են միայն Կատարի համար («Կիսալուսնի աշխարհ»): Մինչդեռ «Հիերոգլիֆների աշխարհ» խմբի *կենտրոնարար* երկիրը՝ Չինաստանը, այստեղ գտնվում է ստորին ձախ անկյունում՝ բնակչության մեկ շնչին ընկնող $14.6 հազ. ՀՆԱ-ով (մոտ 6 անգամ ավելի քիչ, քան Սինգապուրի համար), և $0.29 հազ. *ԳՀՓԿՄ* ծախսերով (այսինքն՝ մոտ 8 անգամ ավելի քիչ, քան Սինգապուրում 2016-ին):

Այժմ, եթե «Հիերոգլիֆների աշխարհ» խմբի արդեն այս կոնֆիգուրացիան ներկայացվի միայն մեկ՝ ենթադրյալ երկրով, ապա դա հնարավոր է անել երկու եղանակով: Նախ՝ կարելի է շարունակել նախորդ մոտեցման տրամաբանությունը, այսինքն՝ «Հիերոգլիֆների աշխարհի» վերը գտնված «գումարային դիրքի» արժեքների հարաբերությամբ որոշել այս ենթադրյալ երկրի կոորդինատները (տեսակարար ցուցանիշները)՝ բնակչության մեկ շնչին ընկնող $18.0 հազ. ՀՆԱ և $0.429 հազ. *ԳՀՓԿՄ* տեսակարար ծախս (2.39%): Նման հիփոթետիկ երկիրը կգտնվի Չինաստանին մոտ, նրանից փոքր-ինչ վերև և աջ (տե՛ս *Նկ. 2*, ներքևում): Ինչը հասկանալի է, քանի որ այս երկրորդ մոտեցմամբ մենք շարունակում ենք համարել, որ Չինաստանի՝ այս խմբի *կենտրոնարարի,* տնտեսա-ժողովրդագրական բացարձակ ցուցանիշները որոշիչ են խմբի ներկայացման համար: Մինչդեռ, գիտատեխնոլոգիական և տեղեկատվական գործունեության կոորդինատներում «Հիերոգլիֆների աշխարհի» խմբի համարժեք ներկայացումն անհրաժեշտաբար պահանջում է հաշվի առնել անդամ բոլոր երկրների *ԳՀՓԿՄ* տեսակարար ցուցանիշների առանձնահատկությունները:

Ուստի, խմբի համարժեք ներկայացումը պետք է հիմնվի խմբի անդամ երկրների տեսակարար ցուցանիշների միջինացման, այլ ոչ թե գումարման վրա: Այս՝ երրորդ մոտեցման դեպքում «Հիերոգլիֆների աշխարհը» ներկայացնող մեկ՝ ենթադրյալ երկիրը կունենա բնակչության մեկ շնչին $44.4 հազ. ՀՆԱ և $1.28 հազ. *ԳՀՓԿՄ* ծախս կոորդինատները՝ նիշի 2.89% տրամագծով (տե՛ս *Նկ. 2*, ներքևում): Պատկերավոր ասած, այս ենթադրյալ երկիրը կգտնվի «Հիերոգլիֆների աշխարհ» խմբի «գիտատեխնոլոգիական ծանրության» կենտրոնում: Հատկանշական է, որ Սինգապուրը և Հվ. Կորեան գտնվում են այս «գիտատեխնոլոգիական ծանրության» կենտրոնից խիստ աջ, ինչն արտացոլում է նրանց որոշիչ դերակատարումը խմբի հատկապես «գիտատեխնոլոգիական ներկայացման» համար: Այսպիսի երկրնե-

ը մենք այսուհետ կկոչենք տվյալ խմբի *նորմալիզատոր* երկրներ (երկիր): Հակառակ Սինգապուրի և Հվ. Կորեայի, օրինակ՝ Թայվանը, ճիշտ է, գտնվում է խմբի «գիտատեխնոլոգիական ծանրության» կենտրոնից ավելի վեր, բայց ոչ ավելի աջ: Այսինքն՝ նրա առավելությունը կենտրոնի հանդեպ պայմանավորված է տեսակարար ՀՆԱ-ով, բայց ոչ *ԳՀՓԿՄ* տեսակարար ծախսերով, ուստի այն խմբի *նորմալիզատորը* չէ: Հասկանալի է նաև, որ Չինաստանը հանդիսանում է «Հիերոգլիֆների աշխարհի» *կենտրոնարար, բայց ոչ նորմալիզատոր երկիր:* Ահա այս եղանակով հաջորդ երկու նկարներում իրականացված է դիտարկվող բոլոր խմբերի ներկայացումը «տեսակարար ՀՆԱ - *ԳՀՓԿՄ* տեսակարար ծախս» հարթությունում:

Նկ. 3-ի վերևում ներկայացված է «Անգլոսաքսոնական աշխարհ» խմբի կոնֆիգուրացիան: Այս խմբի «գիտատեխնոլոգիական ծանրության» կենտրոնի կոորդինատներն են. բնակչության մեկ շնչին $45.3 հազ. ՀՆԱ և $0.94 հազ. *ԳՀՓԿՄ* ծախս՝ նիշի 2.89% տրամագծով: Խմբի *նորմալիզատորներն* են ԱՄՆ-ը և Ավստրալիան, քանի որ դրանք գտնվում են խմբի «ծանրության կենտրոնից» աջ (և վերև): ԱՄՆ-ը հանդիսանում է խմբի նաև *կենտրոնարարը:* Նույն նկարի ներքևում բերում ենք «Սլավոնական աշխարհի» և *BRICS* երկրների խմբերը: Ինչպես երևում է գծապատկերից, Ռուսաստանը, Չեխիան և Սլովենիան հանդիսանում են «Սլավոնական աշխարհի» *նորմալիզատորները*, քանի որ դրանք գտնվում են այս խմբի «գիտատեխնոլոգիական ծանրության» կենտրոնից (բնակչության մեկ շնչի հաշվով $21.6 հազ. ՀՆԱ, *ԳՀՓԿՄ* $0.28 հազ. տեսակարար ծախս, տրամագիծը՝ 1.31%) աջ: Այսպիսով, ՌԴ-ն հանդիսանում է «Սլավոնական աշխարհի» և՛ *կենտրոնարարը,* և՛ *նորմալիզատորը*: Հատկանշական է, որ եթե ՌԴ-ն (և Չինաստանը) դիտարկենք *BRICS* խմբի կազմում, ապա *BRICS*-ը ներկայացնող հիփոթետիկ երկիրը (բնակչության մեկ շնչի հաշվով ընդամենը $14.5 հազ. ՀՆԱ և $0.20 հազ. *ԳՀՓԿՄ* տեսակարար ծախս, տրամագիծը՝ 1.38%) կգտնվի ոչ միայն ՌԴ-ից և Չինաստանից, այլև ընդհանրապես «Սլավոնական աշխարհից» ձախ և ներքև: Այսպիսով, ՌԴ-ն հանդիսանում է ոչ միայն «Սլավոնական աշխարհի», այլև *BRICS* երկրների խմբի *նորմալիզատորը*: Ընդ որում՝ գիտատեխնոլոգիական տեսակետից *BRICS*-ը զգալիորեն զիջում է «Սլավոնական աշխարհին»:

Նկ. 3

Վերևում՝ «Անգլոսաքսոնական աշխարհը», ներքևում՝ «Սլավոնական աշխարհը» և BRICS երկրների խմբերը





Նկ. 4

Վերևում՝ «Մայրցամաքային Եվրոպան»,
ներքևում՝ «Կիսալուսնի աշխարհը» (2016թ.)





«Մայրցամաքային Եվրոպայի» երկրների կոնֆիգուրացիան ներկայացված է *Նկ. 4*-ի վերևում: Այս խմբի «գիտատեխնոլոգիական ծանրության» կենտրոնի կոորդինատներն են. բնակչության մեկ շնչին $44.0 հազ. ՀՆԱ և $1.07 հազ. *ԳՀՓԿՄ* ծախս՝ նիշի 2.43% տրամագծով: Խմբի *նորմալիզատորներն* են Գերմանիան, սկանդինավյան երկրների ենթախումբը (Շվեդիա, Ֆինլանդիա, Նորվեգիա), Դանիան և Ավստրիան: Գերմանիան միևնույն ժամանակ հանդիսանում է նաև խմբի *կենտրոնարարը*: *Նկ. 4*-ի ներքևում բերված է «Կիսալուսնի աշխարհ» խումբը: Ինչպես տեսնում ենք, այն հստակ բաժանվում է երեք ենթախմբի՝ «հետնապահ» (Ինդոնեզիա, Բանգլադեշ, Պակիստան և Եգիպտոս), կենտրոնական (Իրան, Թուրքիա, Մալայզիա և Սաուդյան Արաբիա) և գիտատեխնոլոգիական բացարձակ առաջատար՝ Կատար, ողջ աշխարհի համար իր ռեկորդային տեսակարար ցուցանիշներով. բնակչության մեկ շնչի հաշվով *ԳՀՓԿՄ* $3.86 հազ. ծախսեր, $143.1 հազ. տեսակարար ՀՆԱ (2.7%): Ընդ որում, դրանց սփռվածությունն այնքան մեծ է, որ այստեղ կրկին ստիպված ենք կիրառել լոգարիթմական մասշտաբ: «Կիսալուսնի աշխարհի» «գիտատեխնոլոգիական ծանրության կենտրոնն» ունի հետևյալ կոորդինատները. բնակչության մեկ շնչի հաշվով *ԳՀՓԿՄ* $0.532 հազ. տեսակարար ծախսեր, $31.4 տեսակարար ՀՆԱ, տրամագիծը՝ 1.7%: Ինչպես նշել էինք վերը, այս խմբի *կենտրոնարարը* Թուրքիան է, որը, սակայն, խմբի *նորմալիզատորը* չէ. այն գտնվում է խմբի կենտրոնից ձախ և ներքև: Այս խմբի *նորմալիզատորը*, բնականաբար, Կատարն է:

Այժմ կարող ենք պատկերել երկրների դիտարկված բոլոր 6 խմբերի դիրքը մեկ միասնական պատկերում (տե՛ս *Նկ. 5*): Առաջատարն այստեղ «Հիերոգլիֆների աշխարհն» է՝ բնակչության մեկ շնչին *ԳՀՓԿՄ* $1.28 հազ. ծախսով (ՀՆԱ 2.89%): Նրան հաջորդում են «Մայրցամաքային Եվրոպան» և «Անգլոսաքսոնական աշխարհը»՝ $0.9-1.1 հազ. *ԳՀՓԿՄ* տեսակարար ծախսերով: Հաջորդը «Կիսալուսնի աշխարհն» է: Այն գրեթե կրկնակի զիջում է առաջատարներին, բայց գտնվում է առաջատարներին «հետապնդող ուղեծրում»: Պատկերը եզրափակում են «Սլավոնական աշխարհը» և *BRICS*-ը՝ բնակչության մեկ շնչին $300-ից ավելի քիչ *ԳՀՓԿՄ* ծախսով:

Նկ. 5-ը պատկերում է միայն 2016թ. ստատիկ վիճակը: Գործող միտումների վերհանումն այնինչ ենթադրում է պատկերը դիտարկել դինամիկայի մեջ: Այդ նպատակով կատարվել է *ԳՀՓԿՄ* առաջատար 40 երկրների ցուցանիշների վերլուծություն 2012-2016թթ. համար [1, 2]: Առանձին համեմատվել են 2014թ. համար կատարված կանխատեսումները *ԳՀՓԿՄ* փաստացի ծախսերի հետ: Ընդհանուր առմամբ, անցած 5 տարիներին

ԳՀՓԿՄ ծախսերը նկատելիորեն աճել են: Այդ աճը հատկապես նկատելի է դիտարկված երկրների խմբի կենտրոնարար 5 երկրներից 4-ի դեպքում՝ ԱՄՆ, Չինաստան, Գերմանիա և Կատար: 2012-ին 40 առաջատար երկրների ցանկն ընդհատվում էր *ԳՀՓԿՄ* $2.0 մլրդ եզրագծով (Ինդոնեզիա): Ընդ որում, դրանց գումարային ցուցանիշը՝ $1.48 տրլն, կազմել էր 2012թ. համաշխարհային *ԳՀՓԿՄ* ծախսերի 97.63%-ը: 2014-ին ցուցակն ընդհատվել էր արդեն $3.86 մլրդ եզրագծով (Պորտուգալիա), իսկ առաջատար 40 երկրների *ԳՀՓԿՄ* գումարային ծախսերը՝ $1.75 տրլն, կազմել էր 2014թ. համաշխարհային *ԳՀՓԿՄ* ծախսերի 96.84%-ը: Դե, իսկ 2016-ին, ցուցակն արդեն ընդհատվել էր $4.27 մլրդ եզրագծով (Բանգլադեշ), դրանց գումարային ցուցանիշը կազմել է $1.89 տրլն՝ 2016թ. համաշխարհային *ԳՀՓԿՄ* ծախսերի 96.87%-ը: *ԳՀՓԿՄ* ծախսերի աճի տեսակետից անցած 5 տարիներին հատկապես նկատելի է «Կիսալուսնի աշխարհի» երկրների խմբի ուժեղացումը:

Նկ. 5

Դիտարկվող խմբերի դիրքն աշխարհի գիտատեխնոլոգիական բնապատկերում, 2016թ.



Այսպես, համեմատական վերլուծությունը վկայում է, որ 2013-ին կատարված կանխատեսումների համեմատ *ԳՀՓԿՄ* 2014թ. փաստացի ծախսերի առումով թերագնահատվել էր դիտարկվող 40 երկրների կեսից ավելին՝ 23 երկիր: Ամենաթերագնահատվածը Չինաստանն էր, ուր 2014-ի *ԳՀՓԿՄ* փաստացի ծախսերը $60 մլրդ-ով ավելին էին, քան կանխատեսված ցուցանիշը, որին հետևում էր ԱՄՆ-ը (թերագնահատումը՝ $20 մլրդ), Հնդկաստանը (թերագնահատումը՝ $18 մլրդ), ՌԴ-ն ($14 մլրդ), Գերմանիան ($11 մլրդ) և Ֆրանսիան ($6 մլրդ): Ուշագրավ է, որ թերագնահատվել էին նաև 40 առաջատար երկրներում անցած 5 տարիներին երբևէ տեղ գտած բոլոր իսլամական երկրները՝ Կատարը ($2.7 մլրդ), Ինդոնեզիան ($2.6 մլրդ), Թուրքիան ($2.3 մլրդ), Պակիստանը ($2.3 մլրդ), Սաուդյան Արաբիան ($2.2 մլրդ), Իրանը և Մալայզիան [1, 2]:

Ավելին, 2013-ին փաստացի ծախսերով *ԳՀՓԿՄ* առաջատար 40 երկրների ցանկը լքել էին Իռլանդիան և Ուկրաինան, որոնց տեղը 2014-ից զբաղեցրել է ևս երկու իսլամական երկիր՝ Եգիպտոսը և Բանգլադեշը: Այսպիսով, եթե 2012-ին իսլամական երկրների մասնաբաժինը առաջատար 40 երկրների ցանկում կազմում էր 18%, ապա 2016-ին այն հասավ 23%-ի: Այստեղ մնում է միայն գուշակել, թե ինչպիսին կլիներ պատկերը, եթե «արաբական գարնան» գործընթացները չկասեցնեին այնպիսի երկրների գիտատեխնոլոգիական զարգացումը, ինչպիսիք էին Իրաքը, Լիբիան և Սիրիան: Կամ 2013-ից Ուկրաինայում ծայր առած աշխարհաքաղաքական և քաղաքակրթական գործընթացների հետևանքով չգահավիժեր այս երկրի գիտատեխնոլոգիական ներուժը և 2013-ից այն չլքեր առաջատար 40 երկրների ցանկը:

Առկա տվյալները թույլ են տալիս կառուցել 2012-2016թթ. ընթացքում երկրների «գիտատեխնոլոգիական հետագիծը» «*ԳՀՓԿՄ* ծախսեր – *ԳՀՓԿՄ*, ՀՆԱ%» հարթությունում, ինչը թույլ է տալիս ակնառու վերհանել երկրներում վարվող գիտատեխնոլոգիական քաղաքականության առանձնահատկությունները:

Նկ. 6-ում (վերևում) բերվում են այդ հետագծերը ԱՄՆ-ի և Չինաստանի, ներքևում՝ Գերմանիայի, ՌԴ-ի և Կատարի համար: Ինչպես տեսնում ենք, Չինաստանի «գիտատեխնոլոգիական հետագիծը» վստահորեն ընթանում է վեր և դեպի աջ՝ արտացոլելով թե՛ *ԳՀՓԿՄ* ծախսերի բացարձակ աճը, թե՛ ՀՆԱ-ի հանդեպ դրանց տոկոսային աճը: Հետագծի այսպիսի վարքը կարելի է մեկնաբանել որպես Չինաստանում *ԳՀՓԿՄ* զարգացման ռազմավարության հետևողական իրականացում: *ԳՀՓԿՄ* ծախսերն աճել

են՝ 2012թ. $232 մլրդ-ից մինչև 2016թ. $396.3 մլրդ: Նկատելի է 2013-14թթ. թռիչքը, երբ ծախսերն ավելացան գրեթե $86 մլրդ-ով: 2016-ին առաջին անգամ տեղի ունեցավ միայն *ԳՀՓԿՄ* ծախսերի բացարձակ մեծությունների աճ ($23 մլրդ-ով), իսկ ՀՆԱ-ի հանդեպ տոկոսային հարաբերակցությամբ դրանք փոփոխություն չեն կրել (ՀՆԱ 1.98%):

Նկ. 6

ԳՀՓԿՄ հետագիծը ԱՄՆ-ի և Չինաստանի (վերևում), Գերմանիայի, ՌԴ-ի և Թուրքիայի (ներքևում) համար



Մի փոքր այլ է ԱՄՆ «գիտատեխնոլոգիական հետագծի» բնույթը: Դիտարկված ժամանակահատվածում այն թեև ընթանում է դեպի վեր, սակայն ոչ դեպի աջ, ինչը կարելի է մեկնաբանել որպես *ԳՀՓԿՄ* զարգացման կոնսերվատիվ ռազմավարության հետևանք: Իրոք, *ԳՀՓԿՄ* ծախսերն

աճել են՝ 2012թ. $447 մլրդ-ից մինչև 2016թ. $514 մլրդ: Էական առաջընթաց է կատարվել 2013-14թթ., երբ ծախսերն ավելացել են $35 մլրդ-ով: Սակայն *ԳՀՓԿՄ* ծախսերը 2013-ին կազմել են ՀՆԱ 2.80%-ը, իսկ 2014-ին՝ 2.78%-ը: 2016-ին առաջին անգամ տեղի է ունեցել *ԳՀՓԿՄ* ծախսերի ինչպես բացարձակ մեծությունների ($17.2 մլրդ-ով), այնպես էլ ՀՆԱ–ի հանդեպ տոկոսային հարաբերակցության (0.01%-ով) միաժամանակյա աճ:

«Գերմանիայի «գիտատեխնոլոգիական հետագիծը» նույն բնույթն ունի, ինչ և Չինաստանինը՝ ընթացք դեպի վեր և աջ: 2014թ. *ԳՀՓԿՄ* փաստացի ծախսերով Գերմանիան գերազանցել է $100 մլրդ-ն (ՀՆԱ 2.85%): Մինչդեռ 2013թ. սպասվում էր, որ այդ ծախսերը կկազմեն մոտ $92 մլրդ: Միանգամայն այլ է ՌԴ հետագծի բնույթը: Անցած 5 տարիների ընթացքում ՀՆԱ-ի հանդեպ այն մնացել է միևնույն ցուցանիշին՝ ՀՆԱ 1.5%: Իսկ բացարձակ մեծություններով այն աճել է՝ 2012թ. $38 մլրդ-ից մինչև $53.52 մլրդ-ի 2014-ին, այնուհետև նվազել մինչև $51.49 մլրդ 2015-ին և $50.95 մլրդ 2016-ին: Թերևս, այսպիսի վարքը հանդիսանում է ՌԴ-ում վերջին 5 տարիներին *ԳՀՓԿՄ* զարգացման ռազմավարության «մնացորդային սկզբունքով» իրականացման հետևանք: Վերջապես, Կատարի հետագիծն ունի ԱՄՆ հետագծի բնույթը՝ շարժում դեպի վեր և ձախ (տե՛ս *Նկ. 6*, ներքևում). *ԳՀՓԿՄ* ծախսերի բացարձակ մեծություններն աճել են՝ 2012-ի $5.0 մլրդ-ից 2016թ. հասնելով $9.95 մլրդ-ի, ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսային հարաբերակցությունը 2.8%-ից (2012-13թթ.) նվազել է մինչև 2.7% 2013-15թթ. համար:

Անդրադառնանք նաև Հարավկովկասյան հանրապետությունների իրավիճակին՝ օգտվելով Համաշխարհային բանկի *(ՀԲ)* տվյալներից[1]: Դրանց հիման վրա *Նկ. 7*-ում ներկայացված է տարածաշրջանի երեք հանրապետություններում *ԳՀՓԿՄ* ծախսերի գրաֆիկը (որպես % ՀՆԱ-ից), 1997-2014թթ. ժամանակահատվածի համար: Այս պատկերի ընդհանուր հատկանիշը *ԳՀՓԿՄ* ծախսերի չնչին մեծությունն է՝ բնորոշ բոլոր երեք հանրապետություններին:

Ադրբեջանի պարագայում նշենք, որ նավթային ռեսուրսների յուրացման հիմնական փուլի մեկնարկը 2005-06թթ. ամենևին չազդեց այդ երկրում ՀՆԱ-ի հանդեպ *ԳՀՓԿՄ*-ին հատկացվող միջոցների տոկոսային աճին, ավելին, դրանք էապես նվազեցին՝ 2004-ի մոտ 0.3%-ից մինչև 2006-08թթ. 0.16%: Աճը նկատելի է միայն սկսած 2008-ից՝ մինչև մոտ 0.22% 2009-14թթ. համար: Հավելենք, որ *ԳՀՓԿՄ* տոկոսային անկումը համընկնում է Ադրբե-

[1] http://data.worldbank.org/indicator/GB.XPD.RSDV.GD.ZS?end=2013&start=1998.

ջանում ռազմականացման պետական ծրագրի մշակման ու ընդունման հետ, իսկ աճը հետևում է 2008-ի օգոստոսյան վրացական արկածախնդրությանը (տես՝ [3]): Վրաստանին բնորոշ է *ԳՀՓԿՄ*-ին հատկացվող միջոցների դրամատիկ նվազումը (2004-ի 0.24%-ից մինչև 0.098% 2014-ին), ինչը կարելի է մեկնաբանել որպես «վարդերի հեղափոխության» ու երկրում «արտաքին կառավարման» ձևավորման արդյունք: Բնութագրական է, որ *ՀԲ* տվյալների շտեմարանում բացակայում է Վրաստանի *ԳՀՓԿՄ*-ին առնչվող որևէ տվյալ 2006-12թթ. համար: Կարծում ենք, որ վրացական *ԳՀՓԿՄ* այս «սև խոռոչի» զոյացման պատճառը նույնն է, ինչ վերը բերվածը:

Նկ. 7

ԳՀՓԿՄ ծախսերն անդրկովկասյան երեք հանրապետություններում (ՀՆԱ %-ով)



Համաձայն *ՀԲ* տվյալների՝ Հայաստանը անդրկովկասյան միակ հանրապետությունն է, որի *ԳՀՓԿՄ* կորը 1997-2014թթ. համար ունի դրական գծային միտում՝ աննշան +0.12° անկյունով (տե՛ս *Նկ. 7*): Իսկ սկսած 2005-ից՝ ՀՆԱ-ի հանդեպ *ԳՀՓԿՄ* ծախսերի տոկոսային ցուցանիշով Հայաստանն առաջ է անցնում իր հարևաններից: Միևնույն է, ՀՆԱ-ի հանդեպ *ԳՀՓԿՄ* ծախսերը մնում են անթույլատրելի փոքր, և, ցավոք, առայսօր Հայաստա-

նում չկա ոլորտում իրավիճակի բարելավմանն ուղղված ռազմավարություն (այս խնդիրների վերաբերյալ առավել ընդգրկուն տե՛ս [4-7])։

Բազմակենտրոն աշխարհի «Երկրորդ Սառը պատերազմի» բարդ պայմաններում այս բացթողումն անխուսափելիորեն իր մասին զգալ կտա։ Եվ սա վերաբերում է ոչ միայն Հայաստանին, այլև նրա հիմնական դաշնակցին՝ Ռուսաստանին։ Նման իրավիճակի արմատները պետք է փնտրել 1991թ. լիբերալ հեղափոխության տրամաբանությունում։

Այսպես, վերակառուցման *(պերեստրոյկայի)* սկզբում խորհրդային հասարակությունը, չնայած առկա թերություններին, այնուամենայնիվ, ուներ մի կարգավիճակ, որը բավական մոտ էր «տեղեկատվական հասարակությանը»՝ Դ.Բելի եզրաբանությամբ։ Զարմանալի չէ, որ հասարակության՝ գիտելիքների ռեսուրս ունեցող հատվածն էր այն «հեղափոխական դասը», որը *դե-ֆակտո* կատարեց հեղաշրջումը և տապալեց դեգրադացված կուսակցական նոմենկլատուրան։ Բայց այս հատվածում առկա «թերի գիտելիքը» չար կատակ խաղաց. խորհրդային մտավորականությունը, փակ մոնոգաղափարախոսական համակարգի պատճառով, խիստ հետ էր մնացել արևմտյան գործընկերներից հումանիտար գիտաճյուղերի ոլորտում, և ադեկվատ չէր պատկերացնում արևմտյան քաղաքական մշակույթը և աշխարհաքաղաքական իրողությունները, հետևաբար և իրենց կողմից իրականացվող հեղափոխական վերափոխումների հետևանքները։

Իսկ նրանց արևմտյան գործընկերներն ամեն ինչ անում էին ըստ նախապես մշակված կանոնների։ Հետևելով տեղեկատվական պատերազմների տառին և ոգուն՝ նրանք խորհրդային հասարակության գիտակցության մեջ ներդրեցին այսպես կոչված «փակուղային գաղափարներ» սոցիալ-տնտեսական և գաղափարախոսական ոլորտներում։ Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում գիտատեխնոլոգիական խնդիրներին. օրինակ՝ որոշ հետխորհրդային երկրներում իրականացվեց համալիր գործողություն, որի ընդհանուր նպատակն էր՝ «հուշել» գիտական կառույցներին կատարել անարդյունավետ հետազոտական աշխատանքներ։ Մեկ այլ միջոց էր հանդիսանում դրամաշնորհների քաղաքականությունը, որը հետազոտողներին մղում է կատարել «իմիտացիոն» աշխատանք և լուծել ոչ ակտուալ խնդիրներ։ Հատկանշական է, որ այդ ծրագիրը ստացավ «*Spoiled weapon*» բնութագրական անվանումը («Փչացնող զենք») և, ըստ ամենայնի, այս ծրագրերը գործում են առայսօր [8, 9]։ Արդյունքում՝ հասարակությունը, որը ժամանակին մոտ էր «տեղեկատվական» կոչվելու կարգավիճակին, բավական արագ վերածվեց *«դեինդուստրիալացվածի»* [10]։

Հայտնի է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո գրեթե բոլոր հետխորհրդային հանրապետությունները հսկայական կորուստներ ունեցան, մասնավորապես՝ գիտատեխնոլոգիական ու տեղեկատվական ոլորտում: Խոսքը մի քանի հազար գիտահետազոտական ինստիտուտների փակման, ինչպես նաև ակադեմիական կառույցների սնանկացման ու դեգրադացման մասին է: Օրինակ, 90-ականներին Մոսկվայի հռչակավոր Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի միջանցքներում չինական սպիտակեղեն էին վաճառում, իսկ Հայաստանի լազերային տեխնիկայի ինստիտուտում արտադրում էին եգիպտացորենի ձողիկներ: Արդյունքում՝ ԽՍՀՄ-ը լքած բարձրակարգ մասնագետների թիվը հասավ հարյուր հազարների: Ռուսաստանում 1917թ. հեղափոխության հոբելյանական այս տարում տեղին է հիշել, որ 1918-19թթ. (ընթանում էր քաղաքացիական պատերազմը, երկրում՝ ավերածություն ու սով) հիմնվեց 33 գիտական ինստիտուտ, իսկ 1927-ին դրանց թիվը հասավ մինչև 90-ի: Ավելի ուշ՝ 1975-ին, ԽՍՀՄ-ում գիտաշխատողների թիվը կազմում էր ավելի քան 1 մլն մարդ, այսինքն՝ այդ տարիներին աշխարհի գիտնականների ողջ թվի մոտ 25%-ը: Ինչպես նշեցինք, գործերը բարվոք չեն նաև Հայաստանում. օրինակ՝ Երրորդ հանրապետության գիտաշխատողների և ինժեներների թիվը Երկրորդ հանրապետության համեմատ կրճատվել է մոտ 8 անգամ:

Չկա երաշխիք, որ 1991թ. «վատ սցենարները» մնացել են անցյալում և երաշխավորված կերպով բացառված են, հատկապես հաշվի առնելով «Սլավոնական աշխարհում» տիրող հայտնի ներքաղաքակրթական հակասությունները: Ստեղծված իրողությունները հետևանք են այն հանգամանքի, որ անտեսվել է գիտատեխնոլոգիական և տեղեկատվական քաղաքականության կարևորությունը: Այնինչ, սլավոնների հիմնական ընդդիմախոսները՝ «անգլալեզու ժողովուրդները», շարունակում են, Ու.Չերչիլի խոսքերով, «միանգամայն համախմբված հանրության» օրինակ լինել: Իսկ բազմակենտրոն համակարգում աշխարհաքաղաքական մարտահրավերներ կարող է ստեղծել ոչ միայն «Անգլոսաքսոնական աշխարհը», այլև մյուս հանրությունները:

Հարկ է նշել նաև, որ Ռուսաստանում գիտատեխնոլոգիական ոլորտում որոշակի առաջընթաց է նկատվում: Այսպես, 2011-2016թթ. բացվել է 1213 նոր խոշոր ձեռնարկություն[1], իսկ վերջին երեք տարիներին Զինված ուժերում հիմնվել է 10 խոշոր գիտահետազոտական ինստիտուտ[2]: Տպավո-

[1] http://rusrand.ru/goodnews/obzor-novyh-proizvodstv-dekabr-2016-g.

[2] https://rueconomics.ru/236324-shoigu-rasskazal-ob-otkrytii-novyh-voennyh-nii.

րություն է ստեղծվում, որ ռուսաստանյան հանրությունը վերականգնում է իր «արդյունաբերականի» կարգավիճակը և ձգտում է դառնալ «տեղեկատվական»: Նկատվում է նաև ռուս-հայկական համատեղ մշակումների աճ *ՌԱՀ* ոլորտում, ինչը, սակայն, դեռևս չես համեմատի այն ժամանակների հետ, երբ Հայաստանում գործում էր ավելի քան 200 կազմակերպություն, որոնք սպասարկում էին ավիացիոն – տիեզերական և անգամ սուզանավերի արտադրությունների ոլորտները:

Ապրիլ, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. 2016 GLOBAL R&D FUNDING FORECAST. A Supplement to *R&D Magazine*. Winter, 2016.
2. 2014 GLOBAL R&D FUNDING FORECAST. A Supplement to *R&D Magazine*. December, 2013.
3. *Մարջանյան Ա.,* Ադրբեջանի սոցիալ-տնտեսական համակարգը, «Նորավանք» ԳԿՀ, 2013, http://www.noravank.am/upload/pdf/Marjanyan_book.pdf:
4. *Վերանյան Կ.,* «Մարդկային կապիտալը՝ քաղաքական-տնտեսական զարգացման նախադրյալ», Գլոբուս, #1, (80), էջ 5-11, 2017, http://www.noravank.am/upload/pdf/Globus_1_2017.pdf:
5. *Վերանյան Կ.*, Մարդկային կապիտալի ինդեքսը 2015թ., Գլոբուս, թիվ #1 (70), էջ 59-62, 2016, http://www.noravank.am/upload/pdf/Globus_1_2016.pdf:
6. *Վերանյան Կ.,* Վրաստանի գիտական ոլորտը. վարկանիշային-վիճակագրական համեմատություն, 21-րդ ԴԱՐ, #2 (66), էջ 82-95, 2016, http://www.noravank.am/upload/pdf/21DAR_02_2016.pdf:
7. *Վերանյան Կ.*, Հարավային Կովկասի երկրների գիտահետազոտական գործունեությունը. վիճակագրական վերլուծություն, 21-րդ ԴԱՐ, # 1 (59), էջ 97-119, 2015, http://www.noravank.am/upload/pdf/1.KAREN_VERANYAN_01_2015.pdf:
8. *Гриняев С.,* Поле битвы - киберпространство, Мн., Харвест, 2004.
9. *Арутюнян Г., Гриняев С., Арзуманян Р.*, Информационные войны новой формации, 21-й Век, #3 (40), с. 5, 2016.
10. *Арутюнян Г.,* Информационные и деиндустриализованные общества, 21-й Век, #4 (41), с. 5, 2016.

ԲԱԶՄԱԿԵՆՏՐՈՆ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԲՆԱՊԱՏԿԵՐԸ

Գագիկ Հարությունյան, Արա Մարջանյան

Ամփոփագիր

Հոդվածում վերլուծվում են մի շարք երկրների և երկրների խմբերի գիտահետազոտական և փորձարարա-կոնստրուկտորական մշակումներին (*ԳՀՓԿՄ*) հատկացվող ծախսերը 2012-2016թթ. ժամանակահատվածի համար: Հիմնվելով մաթեմատիկական խմբերի տեսության որոշ հասկացությունների վրա՝ հոդվածում առաջարկվում է աշխարհի ընդհանուր «գիտատեխնոլոգիական բնապատկերում» երկրների առանձին խմբերի ներկայացման մեթոդը: Նկարագրվում են *ԳՀՓԿՄ* ծախսերի արդի դինամիկային բնորոշ որոշ միտումներ՝ առաջատար երկրների, երկրների խմբերի և Հարավկովկասյան երեք հանրապետությունների համար, ներկայիս աշխարհի բազմակենտրոն համակարգի ու ընթացող աշխարհաքաղաքական գործընթացների համատեքստում:

НАУЧНО-ТЕХНОЛОГИЧЕСКИЙ ЛАНДШАФТ В ПОЛИЦЕНТРИЧНОМ МИРОПОРЯДКЕ

Гагик Арутюнян, Ара Марджанян

Резюме

В статье анализируются затраты на научно-исследовательские и опытно-конструкторские разработки (НИиОКР) за 2012-2016гг., их отношение к внутреннему валовому продукту для ряда ведущих стран и различных групп стран. На основе некоторых понятий математической теории групп в статье предлагается метод группового представления различных групп стран на общем «научно-технологическом ландшафте» мира. Описаны некоторые тенденции мировой динамики затрат на НИиОКР для различных групп стран и для трех республик Закавказья. Рассмотрение проводится на фоне реалий полицентричной системы мира и современных геополитических вызовов.

THE SCIENTIFIC AND TECHNOLOGICAL LANDSCAPE OF MULTIPOLAR WORLD ORDER

Gagik Harutyunyan, Ara Marjanyan

Resume

The article analyzes funding of research and development (R&D) in 2012-2016 for a number of countries and country groups. Based on certain concepts of mathematical group theory, the article proposes a method of presenting individual countries in the overall "scientific and technological landscape". Some of the current typical trends in patterns of R&D costs are described for leading countries, country groups and three South Caucasus nations in the context of multipolar world system and ongoing geo-political processes.

ՀՏԴ 004.056:32.001

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ

Սամվել Մարտիրոսյան*

Բանալի բառեր ՝ տեղեկատվական անվտանգություն, կրիտիկական ենթակառուցվածքներ, կիբեռանվտանգություն, Հայաստան, ազգային անվտանգություն։

Տեղեկատվական անվտանգությանը վերաբերող խնդիրներն օրեցօր դառնում են ավելի վտանգավոր և հանդես են գալիս որպես ազգային մակարդակի սպառնալիքներ։ Ոլորտի բարդ խնդիրներից մեկն այն է, որ դրանք անընդհատ ձևափոխման մեջ են գտնվում, մարտահրավերներն ավելի արագ են զարգանում, քան դրանց ուղղված կանխարգելիչ գործողությունները։ Ավելին, տեղեկատվական անվտանգության խնդիրներն արդեն անմիջական կապ են ունենում կրիտիկական ենթակառուցվածքների հետ, և դրանք կարող են հանգեցնել երևույթների, որոնք կարող են դիտվել որպես ազգային մակարդակի անվտանգության սպառնալիքներ։ Խոսքն ինչպես զանգվածային խուճապ հրահրելու հնարավորությունների, ընտրական և այլ տիպի քաղաքական ու հասարակական գործընթացների վրա ներազդեցության հնարավորությունների, այնպես էլ գործարանների, էներգահամակարգերի, ջրամատակարարման և այլ ենթակառուցվածքների վրա հարձակումների մասին է։

Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության համակարգը. Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական անվտանգության խնդիրները կարելի է բաժանել երկու մասի՝ տեխնիկական, որն աշխարհի շատ երկրներում ընդունված է կոչել կիբեռանվտանգություն, և բովանդակային, որը քարոզչական, հակաքարոզչական, զանգվածային լրագրության, տեղեկատվական հոսքերի հետ կապված խնդիրների հետ է կապված։ Այս խնդիրները նկարագրվում են Հայաստանի Հանրապետության Տեղեկատվական անվտանգության հայեցակարգում[1]։

---

* «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ։

[1] Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ, 2009թ. հունիսի 26, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=52559

2011-ից տեղեկատվական անվտանգության տեխնիկական բաղադրիչի համակարգողը Ազգային անվտանգության ծառայությունն է[1]: Բովանդակային հատվածով տեղեկատվական անվտանգության գործառույթները բաշխված են մի շարք կառույցների միջև, բազմաթիվ գործառույթներ իրականացնում են պաշտպանության նախարարությունը, արտգործնախարարությունը և այլն: Համակարգող դեր ունի ՀՀ Նախագահի աշխատակազմի հանրային կապերի և տեղեկատվության կենտրոնը:

Բացի այդ, գոյություն ունի ոլորտային մոտեցում: Խոսքը բանկային ոլորտի մասին է: Այստեղ 2013թ. ընդունվել է որոշում Կենտրոնական բանկի խորհրդի «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ կարգի» մասին, որը նախատեսում է անցում բանկային համակարգի տեղեկատվական անվտանգության ստանդարտներին[2]: 2015թ. ստեղծվեց ՀՀ արդարադատության նախարարության Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը[3]:

Տեղեկատվական անվտանգության անվերահսկելի հատվածները. Հայաստանի Հանրապետությունում մի շարք բնագավառներ տեղեկատվական անվտանգության առումով դուրս են մնում ընդհանուր և մասնավոր վերահսկումից: Հայաստանում գոյություն չունի ազգային կիբեռանվտանգության պատասխանատու մարմին: ԱԱԾ-ի կողմից վերահսկվում է միայն պետական ցանցը, այն էլ՝ ոչ ամբողջությամբ: Այսպես, կառավարությանը կից մի շարք մարմինների կայքերը չեն վերահսկվում: Բացի այդ, Արցախի պետական կայքերի մեծ մասը շարունակում է մնալ խոցելի և պարբերաբար ենթարկվում է հաքերային հարձակումների, հիմնականում ադրբեջանական ցանցահենների խմբերի կողմից[4]:

[1] Տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում լիազոր և ազգային համակարգող մարմին նշանակելու մասին, 2011թ. մարտի 9, http://www.arlis.am

[2] «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ կարգը» հաստատելու մասին, 9 հուլիսի 2013թ., http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=84836

[3] ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի անձնական տվյալների պաշտպանության գործակալություն ստեղծելու, ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը լիազոր մարմին ճանաչելու, ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1917-ն որոշման մեջ լրացումներ կատարելու և ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին, 2 հուլիսի 2015, http://www.arlis.am/documentview.aspx?docid=98941

[4] Օրինակ, Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կայքը (http://minagro.nkr.am/) ենթարկվեց հաքերային հարձակման արդրբեջանական Anti-Armenia Team ցանցահենային խմբի կողմից 2016թ. մայիսի 15-ին. http://zone-h.org/mirror/id/26268331; Արցախի վերասկիչ պալատի կայքը (http://www.cocnkr.am/) ենթարկվել է հաքերային հարձակման 2017թ. մարտի 22-ին արգենտինյան ցանցահենի կողմից, http://zone-h.org/mirror/id/28914827

Բացի այդ, բացարձակ անվերահսկելի դաշտում են գտնվում մի շարք կրիտիկական ենթակառուցվածքներ, որոնք պետության անմիջական վերահսկողության տակ չեն գտնվում: Նման կրիտիկական հանգույցները, գտնվելով մասնավոր կամ օտարերկրյա կազմակերպությունների վերահսկողության տակ, չունեն ըստ օրենսդրության հստակ պարտավորություններ ապահովելու տեղեկատվական անվտանգության հստակ ստանդարտները: Նաև չկան մեխանիզմներ, որոնք թույլ կտան որևէ պետական կամ անկախ մարմնի իրականացնել աուդիտ և վերհանել համակարգային թույլ կետերը, որոնք կարող են կիբեռհարձակումների համար խոցելի լինել: Այսպես, եթե Մեծամորի ատոմակայանը գտնվում է պետության վերահսկողության տակ և այստեղ կարող են լինել հստակ պահանջներ տեղեկատվական անվտանգության վերաբերյալ, որոնք կարող են վերահսկվել պետական գործակալությունների կողմից, ապա մնացած էներգահամակարգը գտնվում է լրիվ ազատ գոտում:

Պետության կողմից անվերահսկելի և տեղեկատվական անվտանգության կողմից չկարգավորվող դաշտում են գտնվում մի շարք կրիտիկական ենթակառուցվածքային տիրույթներ.

- Էլեկտրաէներգետիկա
- Գազամատակարարում
- Ջրմուղ-կոյուղի
- Հեռահաղորդակցություն:

Այս ոլորտներում ոչ միայն հստակ կարգավորում չկա՝ տեղեկատվական անվտանգության առումով, այլև չի տրված գնահատական, թե որքանով են տվյալ ենթակառուցվածքները պոտենցիալ խոցելի կիբեռհարձակումների տեսանկյունից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թվայնացումը համակարգերի անընդհատ իրականացվող գործընթաց է, վերոնշյալ ենթակառուցվածքների հնարավոր խոցելիությունները և դրանց վրա կիբեռհարձակումների միջոցով ներազդելու հնարավորությունն անընդհատ մեծանում են:

Հայաստանի հասարակությունը՝ կրիտիկական ենթակառուցվածք. Հայաստանում կիբեռանվտանգությունը տարբեր բնագավառներում դառնում է ազգային մակարդակի խնդիր: Հասարակությունն արագ տեմպերով մտնում է համացանց, շարժական կապի ներթափանցումը նույնպես շարունակում է աճել[1]: Բջջային կապի բաժանորդների թվաքանակը Հայաս-

[1] *Սամվել Մարտիրոսյան,* Համացանցը Հայաստանում. 2016 թվականի ամփոփում, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15344&sphrase_id=58069

տանում 2016թ. երրորդ եռամսյակում հասել է 3 486 480-ի, ինչը նախորդ եռամսյակի համեմատ 52 084 բաժանորդով ավելի է (2015թ. այս ցուցանիշը 3 424 236 էր): Ինչ վերաբերում է ինտերնետ կապի հասանելիությանը, ապա այստեղ նույնպես դիտվում է աճ բոլոր ցուցանիշներով:

2016թ. երրորդ եռամսյակի տվյալներով.

- լայնաշերտ ինտերնետ կապի բաժանորդագրությունների թիվը հասել է 265 480-ի (+4 835)
- շարժական լայնաշերտ ինտերնետ կապի բաժանորդագրությունների թիվը՝ 247 140-ի (+15 442)
- բջջային հեռախոսներով ինտերնետ կապից օգտվող բաժանորդների թիվը՝ 1 891 078-ի (+ 229 132):

Հասարակությունը սկսում է օգտվել բազմաթիվ էլեկտրոնային ծառայություններից, օնլայն բանկային ծառայություններից և այլն, ինչի շնորհիվ Հայաստանը դառնում է ավելի հրապուրիչ զանազան կիբեռհանցագործների համար: Մյուս կողմից՝ Հայաստանում դեռևս չկա կիբեռանվտանգության վերաբերյալ ուսուցման հստակ մոտեցում: Ոչ միջնակարգ, ոչ բարձրագույն ուսուցումը չի տրամադրում այն հմտությունները, որոնք պահանջված են այսօր արդիական վտանգներին դիմակայելու համար: Նաև չկան ծրագրեր՝ ուղղված կրթական տարիքից դուրս քաղաքացիների իրազեկմանը: Չկա ազգային մակարդակի իրազեկման կենտրոն, որը տեղյակ կպահեր հանրությանը կոնկրետ տվյալ պահին վերաբերող լայն տարածում ստացած կիբեռվտանգների վերաբերյալ: Այս ամենը Հայաստանի հասարակությունը դարձնում է բավական խոցելի կիբեռհարձակումների տեսանկյունից:

Հայաստանը կիբեռանվտանգության տեսանկյունից ամենախոցելի երկրներից մեկն էր համարվում: Ըստ *Kaspersky Lab* տվյալների, մեր երկիրը 2016թ. վարակված համակարգիչների քանակով միջին ռիսկայնության երկրների ցանկում է հայտնվել. վարակված է, ըստ հակավիրուսային լաբորատորիայի տվյալների, համակարգիչների 40,4%-ը[1]:

Համացանցում վարակվելու ռիսկայնության տեսանկյունից Հայաստանը նույնպես դուրս է եկել ամենավտանգավոր երկրների տասնյակից և զբաղեցնում է 14-րդ տեղը 33,01% ցուցանիշով (տե՛ս *Աղյուսակ 1*)[2]:

[1] Kaspersky security bulletin 2016: Статистика, https://kasperskycontenthub.com/securelist-russia/files/2016/12/KASPERSKY_SECURITY_BULLETIN_2016_Statistics_RUS.pdf

[2] Նույն տեղում:

Աղյուսակ 1

Համացանցում հարձակման ենթարկվելու ամենամեծ ռիսկերն ունեցող երկրներն ըստ Kaspersky Lab-ի (տվյալ երկրում հարձակման ենթարկվող համակարգիչների տոկոսը)

1	Ռուսաստան	42,15%
2	Ղազախստան	41,22%
3	Իտալիա	39,92%
4	Ուկրաինա	39,00%
5	Բրազիլիա	38,83%
6	Ադրբեջան	38,81%
7	Իսպանիա	38,21%
8	Բելառուս	38,04%
9	Ալժիր	37,11%
10	Վիետնամ	36,77%
14	Հայաստան	33,01%

Իրավիճակի ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ այն պահանջում է անհապաղ գործողություններ ազգային մակարդակով: Խնդիրը միայն վտանգների քանակական աճը չէ, ոչ էլ ինտերնետից օգտվողների աճը, այլ նաև վտանգների որակական փոփոխությունը, ինչը պահանջում է պարբերաբար հանրային մակարդակով իրազեկում և նույնիսկ կրթում: Այսպես, աշխարհում տարածում են գտնում այսպես կոչված կրիպտովիրուսները: Դրանք այն վիրուսներն են, որոնք, ներթափանցելով համակարգիչ, կոդավորում են դրանում առկա ֆայլերն ու ապակոդավորման համար գումար պահանջում[1]: Տվյալ վիրուսների տեսակները կտրուկ աճ են գրանցում ողջ աշխարհում. եթե 2015թ. կրիպտովիրուսների միջոցով շորթված գումարի չափը գնահատվում էր մոտ $24 մլն, ապա 2016թ. այն արդեն հասավ $1 մլրդ-ի[2]:

Ընդհանուր վարակումների մեջ կրիպտովիրուսներն արդեն բավական մեծ տոկոս են կազմում: Հնդկաստանում, օրինակ, ամեն տասներորդ վարակված սարքը հենց կրիպտովիրուս է պարունակում[3] (տե՛ս *Նկար 1*).

[1] Կրիպտովիրուսներ. տարածումը, կանխումն ու բուժումը, http://vavati.am/AM/news/6-Cryptoviruses.html

[2] Ransomware: Now a Billion Dollar a Year Crime and Growing, http://www.nbcnews.com/tech/security/ransomware-now-billion-dollar-year-crime-growing-n704646

[3] KSN Report: PC ransomware in 2014-2016, https://securelist.com/analysis/publications/75145/pc-ransomware-in-2014-2016/

Նկար 1

Կրիպտովիրուսներով վարակումը բոլոր վարակումների մեջ (%), 2015-2016թթ. տվյալներով: Տվյալները՝ Kaspersky Lab, պատկերը՝ Statista



Հայաստանում իրավիճակը նույնպես մտահոգիչ է, սակայն քիչ ուսումնասիրված: Ըստ հեղինակի կողմից համացանցում իրականացված հարցման (իրականացվել է 2017թ. հունվարի 11-ին), Հայաստանում հարցման մասնակիցների 4,5%-ը դարձել է 2016թ. կրիպտովիրուսների զոհ, իսկ ևս 1,3%-ը ոչ միայն վարակվել է, այլ վարակման է ենթարկել նաև կազմակերպության համակարգիչը[1]: Բացի այդ, հարցման մասնակիցների 23%-ը տեղյակ է այլ անձանց կամ կազմակերպությունների մասին, որոնք հանդիսացել են կրիպտովիրուսների հարձակման զոհ (տե՛ս *Նկար 2*):

Նման վիճակագրությունները բավական մտահոգիչ են և նշանակում են, որ կիբեռհարձակումները ոչ միայն անձնական տվյալների արտահոսքի աղբյուր են, այլև սկսում են դառնալ նաև տնտեսական գործոն:

[1] Ինտերնետային հարցում Հայաստանում կրիպտովիրուսներով վարակումների մասին 2016թ. ընթացքում, https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLSdghL2HVSYnx7XI8jysmx4LOkEsmzuC1blmNJSMYRJbBn06sw/viewanalytics

Նկար 2

Ինտերնետային հարցում Հայաստանում կրիպտովիրուսներով վարակումների մասին 2016թ., տվյալներն՝ ըստ 744 հարցվողի





Հայ-ադրբեջանական հակամարտությունը՝ հասարակական գործոն. Ադրբեջանական հաքերային համայնքի հիմնական թիրախներից մեկը Հայաստանն ու հայերն են՝ անկախ բնակության վայրից: Հաքերային ամենամեծ ու ակտիվ խմբավորումը, որն արդեն 5 տարի գործում է, կոչվում է *Anti-Armenia Team*: Այս թիմն է հակահայկական կազմակերպված հաքերային հարձակումների հիմնական պատասխանատուն, չնայած պարբերաբար գործում են նաև նրանց հետ համագործակցող թուրքական խմբավորումներ[1]:

Ադրբեջանական հաքերները հիմնականում աշխատել և շարունակում են աշխատել հայկական կայքերը «կոտրելու» ուղղությամբ, ինչպես նաև պարբերաբար իրականացնում են DDoS տիպի հարձակումներ[2]: Սակայն 2016-2017թթ. ընթացքում նկատվում է ադրբեջանական հաքերների հարձակումների որակի փոփոխություն: Դեռ ապրիլյան պատերազմական գործողությունների ժամանակ նկատվեց, որ արդեն թիրախ են դառնում ոչ միայն կայքերը, ներքին ցանցերը, այլ նաև առանձին հայ օգտատերերը:

[1] Հայ-ադրբեջանական ապրիլյան պատերազմին ուղեկցող կիբեռհարձակումները, *Սամվել Մարտիրոսյան*, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=14732&sphrase_id=59206

[2] DDOS հարձակումները Հայաստանի վրա դառնում են մտահոգիչ, *Սամվել Մարտիրոսյան*, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=12704

2017թ. ադրբեջանցի հաքերները հայտարարեցին, որ իրենց հաջողվել է կոտրել հարյուրավոր հայկական ֆեյսբուքյան օգտատերերի[1]: Այդ օգտատերերի մուտքանունն ու գաղտնաբառերն էին հրապարակվել: Հետագայում անընդհատ հարձակումները հայկական օգտատերերի դեմ շարունակվում էին:

Նկար 3

Հայկական կոտրված ֆեյսբուքյան օգտատերերի կողմից տարածվող ապատեղեկատվության օրինակ



Եթե մինչև վերջերս օգտատերերի վրա հարձակումը հիմնականում հոգեբանական ճնշման միջոց էր, ապա վերջին զարգացումները ցույց են

[1] Facebook–ի էջերի ցանկ է ներկայացվել. ըստ ադրբեջանցի հաքերների, դրանք կոտրված են, http://newsarmenia.am/am/news/armenia/facebook-i-ejeri-cank-e-nerkayacvel-/

տալիս, որ դրանք օգտագործվում են նաև ապատեղեկատվություն տարածելու համար՝ որպես տեղեկատվական պատերազմի բաղադրիչ: Այսպես, 2017թ. փետրվարի 25-ի ադրբեջանական ձախողված դիվերսիոն գործողությունից հետո կոտրված ֆեյսբուքյան հաշիվներն օգտագործվում էին իբրև հայերի անունից ապատեղեկատվություն հայկական կողմի կորուստների վերաբերյալ տարածելու համար[1] (տե՛ս *Նկար 3*):

Հաշվի առնելով այն, որ ընդհանուր համակարգչային գրագիտությունը Հայաստանում բավական ցածր մակարդակի է, ադրբեջանական հաքերների (և ոչ միայն նրանց) համար հանրապետության բնակչության բավական լուրջ տոկոսը շարունակում է հարձակումների հեշտ թիրախ համարվել: Փաստացի, համակարգչային գրագիտություն չստացած հասարակության հատվածը դառնում է գործիք հակառակորդի տեղեկատվական գործողությունների համար, որոնք իրականացվում են հայաստանյան հասարակության դեմ ռազմական իրավիճակներում:

Համաշխարհային ներկա զարգացումները, որոնք տանում են դեպի հասարակությունների, պետությունների ավելի ու ավելի լայն թվայնացման, տեղեկատվական անվտանգության հարցերը դարձնում են առաջնայիններից մեկը: Կրիտիկական ենթակառուցվածքների վրա կիբեռհարձակումներն արդեն այսօր պետություններին լրջագույն հարված են հասցնում: Հայաստանը նման տեղեկատվական ագրեսիվ միջավայրում դիմակայելու համար պետք է կարողանա զարգանալ մարտահրավերներին համապատասխան, ունենա տեղեկատվական անվտանգության հստակ ռազմավարություն և մարտավարություն:

Մարտ, 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ

Սամվել Մարտիրոսյան

Ամփոփագիր

Տեղեկատվական անվտանգության հետ կապված խնդիրներն այսօր լրջագույն մարտահրավեր են Հայաստանի համար: Մի շարք կրիտիկական ենթակառուցվածքներ կարող են կիբեռհարձակումների թիրախ դառնալ, ինչն էլ կարող է

[1] Ադրբեջանի ՊՆ-ն խոստովանել է 5 զինծառայողի կորուստ, http://razm.info/97043

ունենալ ազգային անվտանգության մակարդակի բացասական հետևանքներ: Նշված իրավիճակում Հայաստանը պետք է ունենա ավելի հստակ մոտեցումներ տեղեկատվական ավտանգության և կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության հարցերում:

ИНФОРМАЦИОННАЯ БЕЗОПАСНОСТЬ И КРИТИЧЕСКИЕ ИНФРАСТРУКТУРЫ АРМЕНИИ

Самвел Мартиросян

Резюме

Сегодня задачи информационной безопасности стали серьезным вызовом для Армении. Ряд критических инфраструктур может стать мишенью для кибератак, что может негативно сказаться на уровне национальной безопасности. В данной ситуации у Армении должны быть более четкие подходы в вопросах информационной безопасности и защиты критических инфраструктур.

INFORMATION SECURITY OF ARMENIA AND CRITICAL INFRASTRUCTURES

Samvel Martirosyan

Resume

The problems of information security are currently one of the most serious challenges for Armenia. A number of critical infrastructures may become targets for cyber-attacks, leaving negative impact on the level of the national security. Under such circumstances Armenia needs more clarity in approaches to the information security and protection of critical infrastructures.

ՀՏԴ 330.1:06+338.2

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՎ ՄՏԱՎՈՐ ԿԱՊԻՏԱԼ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Կարեն Վերանյան*

Բանալի բառեր ՝ մարդկային կապիտալ, մտավոր կապիտալ, ազգային մտավոր ներուժ, ուղեղների արտահոսք, ֆինանսական կապիտալ։

Մարդկային կապիտալ հասկացության շուրջ

Հասարակության բարեկեցության ապահովման կարևորագույն նախապայմանը նրա *մարդկային կապիտալի* (ՄԿ) և մտավոր ներուժի առկայությունն է։ Մարդկային կապիտալը (*Human Capital*) հասարակության մտավոր, ֆիզիկական, բնական, առողջապահական և այլ ռեսուրսների հավաքական ամբողջությունն է։ Ազգաբնակչության բարեկեցության ապահովման տեսանկյունից, թերևս, էական նշանակություն չունեն առկա մարդկային ռեսուրսների քանակական ծավալները։ Քիչ չեն այն ազգերն ու պետությունները, որոնք տիրապետում են թվաքանակով մեծ մարդկային ռեսուրսների, այնուհանդերձ, այդ ռեսուրսների անարդյունավետ կառավարման հետևանքով կանգնել են տնտեսական և քաղաքական լուրջ հիմնախնդիրների առջև։ Կրթության, գիտության ոլորտում անհրաժեշտ և համարժեք ներդրումների իրագործման հարցում պետության և հասարակության փոխհամաձայնությամբ մշակված ռազմավարությունը հնարավորություն է տալիս առկա ՄԿ կիրառությունից ակնկալել որակական հետադարձ արդյունք։

Առաջին անգամ «մարդկային կապիտալ» եզրը կիրառել է ամերիկացի տնտեսագետ Թեոդոր Շուլցն իր տեսությունում, 1961թ.։ Նա ընդգծում էր *կրթական կապիտալի*՝ որպես ՄԿ առանցքային բաղադրիչի, կարևորությունը երկրի տնտեսության զարգացման գործում։ Ամերիկացի տնտեսագետը հետազոտություններ էր իրականացնում՝ պարզելու հետպատերազմյան շրջանում (Երկրորդ աշխարհամարտից հետո) Գերմանիայի և Ճապոնիայի տնտեսության արագ տեմպերով վերականգնման պատճառահետևանքային կապերը։ Նա եկավ այն եզրահանգման, որ Գերմանիայի և Ճապոնիայի

* «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար։

տնտեսությունների արագ վերականգնման հանգամանքը պայմանավորված էր կրթված և առողջ բնակչություն ունենալու իրողությամբ, քանի որ, ըստ նրա, կրթությունը մարդկանց դարձնում է առավել արտադրողական և ստեղծագործ: 1960թ. «Քաղաքական տնտեսության հարցեր» ամսագրում տպագրված «Կապիտալի ստեղծումը կրթության շնորհիվ» (*Capital Formation by Education*) հոդվածում տնտեսագետը ներկայացրել է աշխատուժի արժեքի վերաբերյալ իր գնահատականները, որտեղ հաշվարկվում էին կրթության համար նախատեսվող ծախսերը[1]: Ամերիկացի տնտեսագետ Գարի Բեքերը 1960-ականներին զարգացրեց ՄԿ-ի վերաբերյալ շուլցյան տեսության հիմնադրույթները՝ հիմնավորելով ՄԿ-ում ներդրումների անհրաժեշտությունը հասարակության կենսամակարդակի բարձրացման գործում: 1962թ. լույս տեսավ Բեքերի «Ներդրումները մարդկային կապիտալում. տեսական վերլուծություն» հոդվածը, իսկ 1964թ. նա գրեց «Մարդկային կապիտալ. տեսական և էմպիրիկ վերլուծություն» գիրքը, որտեղ կարևորվում էր կրթական կապիտալի բաղադրիչը: Բեքերը ԱՄՆ օրինակով հաստատում էր, որ Միացյալ Նահանգներում ՄԿ-ում ներդրումները կարող են ապահովել եկամտաբերության առավել բարձր ցուցանիշներ, քան դա կարելի է ակնկալել արժեթղթերում իրականացվող ներդրումներից[2]: Ըստ նրա տեսության, ՄԿ հաշվարկում գործարարության արդյունավետության ապահովման տեսանկյունից ՄԿ կրթական բաղադրիչն առանձնացվում էր որպես անկյունաքարային դրույթ՝ ընդգծելով տվյալ ձեռնարկության զարգացման համար յուրաքանչյուր աշխատակցի կրթության և մասնագիտական ուսուցման համար ներդրումների իրականացման անհրաժեշտությունը[3]:

Ազգային մարդկային կապիտալ

ՄԿ տեսության մեջ առանձնացվում է ՄԿ երկու հիմնական տեսակ՝ *անհատական մարդկային կապիտալ* և *ազգային մարդկային կապիտալ*: 1970-80-ականներից սկսած՝ շեշտակի տեմպերով ընթացող արդյունաբերականացման գործընթացները, որտեղ մարդկային ռեսուրսների հարցում առաջնային էին համարվում բնական, ֆինանսական և նյութական ասպեկտները, վերափոխակերպվեցին որակապես առավել բարձր աստիճանակարգի՝ մարդկային ռեսուրսներում առանցքային նշանակություն տալով կրթու-

[1] http://efbgu.narod.ru/stud/files/ebook/nobel/17_schultz.pdf
[2] http://seinst.ru/page289/
[3] https://www.hse.ru/data/2011/04/22/1210713272/Korchagin%20Russian%20Human%20Capital%20Assets.pdf

թյանն ու տեղեկատվությանը[1]: Հետագայում ՄԿ հասկացության ձևակերպման շրջանակներն է՛լ ավելի ընդլայնվեցին: Համաշխարհային բանկի փորձագետները վերջին զեկույցների հաշվարկներում ՄԿ գնահատման հարցում հիմնվում են այնպիսի չափորոշիչների վրա, ինչպիսիք են սննդի, բնակավայրի, կրթության, առողջապահության ուղղությամբ ընտանեկան և պետական ծախսերը: Արդյունքում՝ ՄԿ-ն սկսեց ընկալվել որպես պետության նորարարական և գիտելիքահեն տնտեսության զարգացման համար անհրաժեշտ նախապայման, որտեղ առանձնացվում էր *անհատն իր մտավոր և այլ ռեսուրսներով՝ որպես հասարակության ՄԿ զարգացում ապահովող կարևորագույն սուբյեկտ*: Այստեղից էլ ՄԿ տեսությունում առաջ եկավ *անհատական ՄԿ* հասկացությունը:

ՄԿ տեսություններում առանձնացվում էր նաև *ազգային ՄԿ* հասկացությունը, որը տվյալ հասարակության ազգային հարստության հիմնական բաղկացուցիչն է: Ազգային ՄԿ-ն ներառում է տվյալ պետության և հասարակության քաղաքական, սոցիալ-տնտեսական կապիտալը, ազգային մտավոր ռեսուրսները, ազգային մրցունակության առավելությունները և ժողովրդի բնական պոտենցիալը: Ազգային ՄԿ-ն հաշվարկվում է նրա արժեքայնության ցուցիչով: Ազգային ՄԿ-ն կազմում է յուրաքանչյուր զարգացող երկրի ընդհանուր հաշվարկով ազգային հարստության ավելի քան կեսը, իսկ զարգացած երկրների համար՝ վերջիններիս ազգային հարստության ավելի քան 70-75%-ը: Աշխարհի տարբեր երկրների Ազգային ՄԿ արժեքը, ծախսատարության մեթոդաբանության հաշվարկի հիման վրա, գնահատվել է Համաշխարհային բանկի փորձագետների կողմից: Հաշվարկներում օգտագործվում են ՄԿ բաղկացուցիչ մասերի գնահատականներն ըստ պետության, ընտանիքի, գործարարների և այլ ծախսերի հաշվարկների, որոնք հնարավորություն են տալիս սահմանել ՄԿ վերարտադրմանն ուղղված հասարակության տարեկան ընթացիկ ծախսերը: Այդ փորձագիտական գնահատականների համաձայն, 20-րդ դարի վերջերին ՄԿ համաշխարհային արժեքը հաշվվում էր $365 տրլն, ինչը կազմում էր համաշխարհային հարստության 66%-ը: ԱՄՆ ՄԿ արժեքը կազմում էր $95 տրլն կամ երկրի ազգային հարստության 77%-ը, կամ համաշխարհային ՄԿ արժեքի 26%-ը: Չինաստանի ՄԿ արժեքը հաշվվում էր $25 տրլն, որը կազմում էր երկրի ազգային հարստության 77%-ը կամ համաշխարհային ՄԿ ընդամենը 7%-ը: Ռուսաստանի ՄԿ արժեքը հաշվարկվում էր $30 տրլն, ինչը կազմում էր

[1] http://gtmarket.ru/files/article/5282/Human_Capital_The_Content_and_Types_Evaluation_and_Stimulation.pdf

երկրի ազգային հարստության 50%-ը կամ համաշխարհային ՄԿ 8%-ը:

Նշենք, որ ՄԿ ցածր ցուցանիշների պարագայում բարձր տեխնոլոգիական ոլորտում անհրաժեշտ ներդրումների իրագործումը չի կարող ապահովել հետադարձ դրական արդյունք: Այս պարագայում ՄԿ տեսության մեջ առանձնացվում է *բացասական ՄԿ* հասկացությունը, երբ ՄԿ ոլորտում իրականացված ներդրումները չեն կարողանում ապահովել ակնկալվող դրական արդյունքները: Բացասական ՄԿ կուտակման գործում զգալի բացասական ազդեցություն ունեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են կոռուպցիան, ստվերային տնտեսությունը և այլն: Կարևոր հարցերից մեկն էլ վերաբերում է ՄԿ թիրախավորմանը ներդրումների իրագործման առումով: Բացասական ՄԿ ուղղությամբ իրականացված ներդրումները, երբ փորձ է արվում կրթել այն անհատներին կամ հասարակության այն խմբերին, որոնք ընկալունակ չեն փոփոխությունների նկատմամբ և չեն կարող տալ ակնկալվող կրթական արդյունքներ, ունենում են բացասական և որոշ դեպքերում՝ անդառնալի ազդեցություն Ազգային ՄԿ կուտակման գործընթացում: Մեր ժամանակներում ՄԿ տեսակներից բավական տարածված է այսպես կոչված *պասիվ ՄԿ-ն*, որն անհրաժեշտ ներդրումների պարագայում չի կարող ապահովել ակնկալվող դրական ազդեցություն երկրի տնտեսության զարգացման կամ հասարակության բարեկեցության ապահովման տեսանկյունից, քանի որ ռեսուրսները վատնում է սեփական նյութական պահանջարկը բավարարելու համար:

Մտավոր կապիտալ և «ուղեղների արտահոսք»

Աշխարհի առաջատար երկրներում զգալի ֆինանսական միջոցներ են հատկացվում գիտության և կրթության զարգացմանը: *Industrial Research Institute* և *R&D Magazine* ամսագրի կողմից վերջերս հրապարակված «2016թ. գիտության և հետազոտությունների համաշխարհային կանխատեսումները» (*2016 Global R&D Funding Forecast*) զեկույցում մասնավորապես նշվում է, որ վերջին տարիներին համաշխարհային մակարդակով գիտության և հետազոտությունների ֆինանսավորման ծավալներն աճման միտում ունեն: Զեկույցում ներառված են գիտությանը և հետազոտություններին ֆինանսական հատկացումների հաշվարկով առաջատար 40 երկրները, որոնց ցուցակը գլխավորում է ԱՄՆ-ը: 2014թ. ԱՄՆ գիտության և հետազոտությունների համախառն ներքին ծախսերը (*GERD-Gross Domestic Expenditure on R&D*) կազմել են $485 մլրդ (ՀՆԱ 2,78%), 2015թ.՝ $497 մլրդ: 2016թ.

դրությամբ ԱՄՆ գիտության և հետազոտությունների համախառն ներքին ծախսերը շեշտակի աճել են՝ կազմելով շուրջ $514 մլրդ: Երկրորդ հորիզոնականը զբաղեցնում է Չինաստանը, որի գիտության և հետազոտությունների համախառն ներքին ծախսերը 2016թ. կազմել են $396 մլրդ (ՀՆԱ 1,98%-ը): Ի դեպ, Չինաստանի ցուցանիշները շեշտակի աճել են վերջին տարիների կտրվածքով: 2016թ. Ռուսաստանը գտնվում էր ցուցակի 8-րդ հորիզոնականում՝ $51 մլրդ (ՀՆԱ 1,5%): 2016թ. Թուրքիան զեկույցի 18-րդ հորիզոնականում էր՝ համապատասխանաբար շուրջ $14 մլրդ (ՀՆԱ 0,86%)[1]:

Միջազգային գլոբալացման պայմաններում համաշխարհային միգրացիոն գործընթացներն էական ազդեցություն են թողնում ազգ-պետություններում մարդկային կապիտալի պահպանման և զարգացման հարցերի վրա: Առավել խնդրահարույց է համաշխարհային միգրացիոն հոսքերի ազդեցության համատեքստում երկրների ՄԿ և հատկապես վերջինի *մտավոր կապիտալի* կուտակման ու վերարտադրման հիմնահարցը: Ինչպես ցույց են տալիս միջազգային հետազոտությունները, զարգացող երկրների քաղաքական վերնախավերը, որպես կանոն, լուրջ խնդրի առջև են կանգնում տեղի բնակչության մտավոր կապիտալի կուտակման և զարգացման գործում, քանի որ բարձրորակ մասնագետներից շատերը ձգտում են իրենց մտավոր ռեսուրսները ներդնել առավել զարգացած և բարեկեցիկ միջավայր ունեցող երկրներում: Տվյալ պետության ՄԿ և նրա մտավոր ռեսուրսների վերարտադրողականության ցիկլի պահպանման գործընթացը պայմանավորված է տվյալ երկրի բնակչության բարեկեցության ընդհանուր մակարդակով, առկա քաղաքական ինստիտուտների կայացածությամբ, ինչպես նաև հասարակության ազգային բարոյահոգևոր, արժեքաբանական ընդհանուր ընկալումներով և կողմնորոշումներով:

Մասնագիտական գրականությունում բավական շատ է հանդիպում *ազգային մտավոր կապիտալ* հասկացությունը: Նկատի է առնվում տվյալ ազգ-պետությունում մտավոր ռեսուրսների ամբողջությունը (նյութական և հոգևոր արդյունքները): Նշենք, որ համաշխարհային ՏՏ ոլորտի թռիչքաձև զարգացման ներկա տեմպերի պայմաններում հատկապես խոցելի են դարձել ազգային մտավոր կապիտալի պահպանումն ու զարգացումն առաջին հերթին փոքր ազգ-պետությունների համար: Զարգացած երկրների պարագայում ազգային մտավոր կապիտալ հասկացության շրջանակներն առավել ընդգրկուն են և ներառում են նաև այլ երկրներում այս կամ այն ոլորտում ներդրված իրենց մտավոր կապիտալի մի հատվածը:

[1] Industrial Research Institute. 2016 Global R&D Funding Forecast, http://www.iriweb.org

«Ուղեղների արտահոսք». պատճառներն ու հետևանքները

Պետությունից մտավոր կապիտալի «արտագաղթին» կամ ինչպես ընդունված է միջազգային պրակտիկայում՝ *«ուղեղների արտահոսքին»* (*brain drain*) կարող են նպաստել միջազգային, ինչպես նաև ներպետական նշանակության քաղաքական կամ տնտեսական կատակլիզմները: Հասարակության մտավոր ներուժի արտահոսքը, որպես կանոն, էական ազդեցություն է ունենում տվյալ երկրի տնտեսության զարգացման, հասարակության բարեկեցության ապահովման հարցերի վրա: Երկրի տնտեսության զարգացման համար *անհրաժեշտ-կրիտիկական* մտավոր ռեսուրսների բացակայությունը կարող է երկիրը կանգնեցնել տնտեսական և քաղաքական լուրջ ճգնաժամերի շեմին: Հասարակության մտավոր ներուժը, լինելով պետության տնտեսության զարգացման կարևորագույն նախապայմանը, տրամաբանորեն առանցքային դերակատարություն ունի նաև երկրի *ֆինանսական կապիտալի* ձևավորման և կուտակման գործում: Հետևաբար, երկրից «ուղեղների արտահոսքը» զրկում է տվյալ հասարակությանը ոչ միայն արժեքավոր ՄԿ-ից և, առավել ևս, նրա մտավոր ռեսուրսներից, այլև նպաստում է *ֆինանսական ազգային կապիտալի* դուրսմղմանն արտերկիր և դրա ներդրմանն այլ երկրներում: Միջազգային փորձագիտական գնահատականներով, յուրաքանչյուր բարձրորակ մասնագետի արտագաղթի հետևանքով պետության տնտեսության համընդհանուր կորուստները (մտավոր, նյութական-ֆինանսական), ներառյալ կողմնակի, ածանցյալ կորուստները, կարող են գնահատվել մինչև $1մլն[1]: Ինչպես ցույց են տալիս միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ և այլն) փորձագիտական գնահատականները, «ուղեղների արտահոսքից» զգալիորեն տուժում են հատկապես փոքր տնտեսությամբ զարգացող երկրները: Լինդսի Լոուելի, Ալան Ֆինդլիի և Էմմա Սթյուարթի՝ 2004թ. հրապարակված հիմնարար հետազոտությունում (*Brain Strain: Optimising Highly Skilled Migration From Developing Countries*) փորձագետները եկան այն եզրահանգման, որ բարձրագույն կրթության դիպլոմ ունեցող գրեթե յուրաքանչյուր 10-րդ անհատ, որպես կանոն, ծնվել է զարգացող երկրում, իսկ զարգացող երկրներում ծնված գիտնականների և ինժեներների 30-50%-ը բնակվում և աշխատում է աշխարհի զարգացած երկրներում[2]: Այլ տվյալներով, այդ ցուցանիշները,

[1] http://gtmarket.ru/laboratory/expertize/2008/1653
[2] http://gtmarket.ru/laboratory/expertize/2008/1653

պայմանավորված տարածաշրջանային քաղաքական կամ տնտեսական խոր ճգնաժամերով, հասնում են մինչև 55-60%-ի:

Մասնագիտական գրականությունում ընդունված է նաև կիրառել *«ուղեղների վատնում»* (*brain waste*) հասկացությունը, որը հատուկ է զարգացող շուկայական հարաբերություններ ունեցող պետություններին: Այդ հասկացությունը բնութագրում է մի իրավիճակ, երբ երկրի տնտեսությունը չի կարողանում ամբողջությամբ ներգրավել հասարակությունում առկա մտավոր բոլոր ռեսուրսները, ինչի հետևանքով մտավոր ներուժի ձևավորման և զարգացման գործում պետության կողմից իրականացված հսկայածավալ երկարաժամկետ նյութական, ֆինանսական ներդրումների մի հատված ուղղակի «փոշիանում» է: «Ուղեղների վատնման» երևույթը կարող է պայմանավորված լինել տվյալ պետության աշխատաշուկայի սահմանափակ լինելու հանգամանքով:

«Ուղեղների արտահոսքի» զսպման մեխանիզմները

Որոշ զարգացող երկրներ ազգային մտավոր ներուժի պահպանման և «ուղեղների արտահոսքի» զսպման նպատակով ընդունել են բարձրորակ մասնագետների արտագաղթը սահմանափակող իրավական դրույթներ: Սակայն միջազգային փորձը ցույց է տալիս, որ նման սահմանափակումներն այնքան էլ արդյունավետ չեն «ուղեղների արտահոսքի» կանխման համար և, որպես կանոն, պետություններին հանգեցնում են տնտեսական ու քաղաքական առավել խորքային խնդիրների առջև: Հարցն այն է, որ «ուղեղների արտահոսքը» միանշանակ չի ենթադրում բարձրորակ մասնագետների ֆիզիկական արտագաղթ երկրից: Ներկա տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս մտավոր ռեսուրսները կուտակել կամ ներդնել այլ երկրների տնտեսական միջավայրում՝ առանց մտավոր ներուժի ֆիզիկական արտագաղթի: Մյուս կողմից, «ուղեղների արտահոսքի» հետ այս կամ այն չափով բախված զարգացող երկրներից շատերը փորձում են իրավական, տնտեսական բարեփոխումների միջոցով երկրում տնտեսական-քաղաքական դրական միջավայր ապահովել՝ ազգային մտավոր կապիտալի զարգացման նպատակով: Խնդրի կարգավորման հիմնական տարբերակներից մեկը վերաբերում է այսպես կոչված *«ուղեղների փոխանակման»* երևույթին, որի համաձայն՝ տվյալ պետությունը փորձում է ոչ թե վերադարձնել *ազգային մտավոր կապիտալը*, այլ օտար երկրի կամ երկրների հետ իրականացնել մտավոր ռեսուրսների փոխանակ-

ման ծրագրեր: Սակայն, ի տարբերություն ազգային մտավոր կապիտալի, այլ երկրների հետ մտավոր ռեսուրսների փոխանակման ծրագրերը, որպես կանոն, չեն կարողանում ապահովել տնտեսությունում օտարերկրյա մտավոր ներուժի ներգրավումից ակնկալվող արդյունքները, որի հիմնական պատճառներից են օտարերկրյա մտավոր կապիտալի ներդրման բարձր վարձատրության ֆինանսական պահանջները: Վերջին հանգամանքն առավել բնորոշ է զարգացած երկրներից դեպի զարգացող տնտեսություններ օտարերկրյա մտավոր կապիտալի ներգրավման դեպքերին:

Զարգացող երկրներում հաճախ կարելի է հանդիպել ազգային մտավոր կապիտալի ներդրման մեկ այլ տարածված մոդելի, որը միջազգային պրակտիկայում հայտնի է որպես *«ուղեղների արտահանում»* (*brain export*) կամ *«ուղեղների շրջանառություն»* (*brain circulation*)[1]: Ըստ այդ մոդելի, տվյալ պետությունում ստեղծելով տեղական կրթական հիմնադրամ և ներգրավելով ազգային մասնավոր (հազվադեպ նաև՝ պետական) ֆինանսական զգալի կապիտալ՝ ազգային մտավոր ռեսուրսների մի հատված ուղարկվում է արտերկիր՝ ուսուցման, վերարտակավորման նպատակով: Մոդելն իր առջև խնդիր է դնում ուսուցման արդյունքում արտերկրից վերադարձնել նոր գիտելիքներ և հմտություններ ձեռք բերած, վերապատրաստում անցած ազգային մտավոր ներուժի այդ հատվածը և այն ներդնելով տեղի տնտեսությունում՝ ստանալ ակնկալվող բարձր արդյունավետություն: Սակայն զարգացող երկրներում այս մոդելը հիմնականում ձախողվում է, քանի որ այդ մտավոր ներուժի ճնշող մեծամասնությունը, որպես կանոն, չի վերադառնում հայրենիք, նախընտրում է իր մասնագիտական հնարավորությունները ներդնել առավել բարեկեցիկ երկրում և դրանով իսկ «փոշիացնում» է ազգային մտավոր կապիտալի կրթության ապահովման վրա ներդրված հսկայածավալ ազգային ֆինանսական և նյութական միջոցները: «Ուղեղների շրջանառության» մոդելը կարող է արդյունավետ լինել գլխավորապես զարգացած տնտեսություններ ունեցող երկրների պարագայում, որոնք, մի կողմից, հնարավորություն են ստանում զարգացնելու արտերկրում իրենց ազգային մտավոր կապիտալը և բարձրացնելու վերջինիս վարկանիշը, մյուս կողմից՝ ամրապնդում են համագործակցությունն արտերկրի մտավոր ներուժի հետ: Զարգացած երկրները, որտեղ գիտության և հետազոտությունների վրա ծախսվում են զգալի ֆինանսական միջոցներ, կարողանում են գրավիչ միջավայր ապահովել արտերկրից օտարազգի մտավոր կապիտալի ներկրման հարցում, որն առավել հայտնի

[1] http://gtmarket.ru/laboratory/expertize/2008/1653

է այսպես կոչված *«ուղեղների ներհոսք»* (*brain gain*) հասկացությամբ: Արտերկրից «ուղեղների ներհոսքի» ապահովման հարցում զգալի հաջողություններ են արձանագրել Միացյալ Նահանգները, Կանադան, եվրոպական առաջատար երկրները (Գերմանիա, Մեծ Բրիտանիա):

Հայաստանի մարդկային և ազգային մտավոր կապիտալը

Հայաստանում ՄԿ հարցի հետ կապված՝ առկա են ինչպես քանակական, այնպես էլ որակական լուրջ խնդիրներ: Ինչպես հաստատում են վիճակագրական տվյալները, Հայաստանից մարդկային ռեսուրսների և հատկապես ուղեղների կայուն արտահոսքի հիմնահարցը *կրիտիկական* նշանակություն ունի երկրի անվտանգության տեսանկյունից: Մյուս կողմից, երկիրը կանգնել է բարձրորակ կադրային ռեսուրսների թվաքանակի նվազագույն շեմի ապահովման խնդրի առջև: Ունենալով սահմանափակ մտավոր ՄԿ՝ երկրում շեշտադրումները կատարվում են տնտեսության այնպիսի ճյուղերի զարգացման վրա, որոնք, որպես կանոն, չեն պահանջում մտավոր-ստեղծագործական ռեսուրսներ: Դա են փաստում միջազգային հեղինակավոր վարկանիշային կազմակերպությունների փորձագիտական գնահատականները (օրինակ, «Ձախողված երկրների ինդեքսը» զեկույցը), որոնց համաձայն՝ Հայաստանում մտավոր ռեսուրսների կայուն արտահոսքին զուգահեռ, զգալի ուշադրություն է դարձվում սպասարկման և ոչ արտադրողական ծառայությունների ոլորտների զարգացմանը: Չունենալով բնական խոշոր և եկամտաբեր ռեսուրսներ՝ Հայաստանում էլ ավելի է շեշտադրվում ՄԿ մտավոր-ստեղծագործական պոտենցիալի զարգացման հիմնահարցը՝ որպես երկրի բարեկեցության ապահովման կարևոր երաշխիք: Նման իրավիճակում բավական սուր է դրված ՄԿ կուտակման և հետագա վերարտադրողականության հարցը, որի ուղղությամբ անհրաժեշտ է ձեռնարկել հրատապ լուծում պահանջող համարժեք և միևնույն ժամանակ ոչ ստանդարտ կիրառական քայլեր:

Ինչպես վերը նշվեց, «ուղեղների արտահոսքն» առավել խոցելի է հատկապես զարգացող և փոքր ծավալների շուկայական տնտեսությամբ երկրների համար, ինչպիսին նաև Հայաստանն է: Կարելի է հաստատապես ասել, որ խորհրդային կարգերի ժամանակաշրջանում Հայաստանի մտավոր ներուժն իրապես ունեցավ թռիչքային զարգացում, ինչի արդյունքում խորհրդային ամբողջ տարածքում Հայաստանը ԽՍՀՄ մտավոր-գիտական կապիտալի համընդհանուր մասնաբաժնում Մոսկվայից հետո արձանագրում էր լավագույն ցուցանիշները՝ Ուկրաինայի և Բելառուսի կողքին:

Խորհրդային կարգերի փլուզումը խորքային ազդեցություն թողեց նաև Հայաստանի ազգային մտավոր կապիտալի պահպանման վրա: Սկիզբ առած ղարաբաղյան պատերազմը, Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի քաղաքական և տնտեսական շրջափակումն էապես խթանեցին Հայաստանից «ուղեղների արտահոսքը», ինչի հետևանքով երկիրը կանգնեց քաղաքական և տնտեսական ճգնաժամի առջև:

Ներկայում ևս Հայաստանը կանգնած է ազգային մտավոր կապիտալի կուտակման և վերարտադրման լուրջ խնդրի առջև, որն արգելակում է երկրում իրականացվող քաղաքական, տնտեսական բարեփոխումների գործընթացը: Մյուս կողմից, Հայաստանում գիտության ոլորտի պետական և մասնավոր ֆինանսավորման բավական ցածր ցուցանիշներն իրենց հերթին նպաստեցին երկրում մտավոր կապիտալի մեկ այլ կարևոր հատվածի դուրսմղմանը դեպի երկրի տնտեսության ոչ մտավոր-ստեղծագործական գործունեության դաշտ, հիմնականում՝ առևտրի և հանրային ծառայությունների սպասարկման ոլորտներ: Մասնագիտական գրականությունում այս երևույթն առավել հայտնի է որպես *«ուղեղների ներքին արտահոսք»*, երբ փոխվում է ոչ թե երկիրը, այլ գործունեության բնույթը կամ միջավայրը:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն, Հայաստանում գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների աշխատողների թվաքանակը 2015թ. դրությամբ կազմում էր ընդամենը 5044 գիտաշխատող, որից 4164-ը հետազոտողներ և տեխնիկներ էին, մնացածը՝ օժանդակ անձնակազմ: Դժվար է չհամաձայնել, որ այս ցուցանիշները, մեղմ ասած, բավական համեստ են և, դժբախտաբար, համահունչ են երկրում գիտության զարգացման ներկա տեմպերին: Ինչպես ցույց է տալիս համեմատական վիճակագրությունը, գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների աշխատողների թվաքանակը վերջին տարիներին նվազման միտում է արձանագրել: Եթե 2011թ. ոլորտում ներգրավված էր շուրջ 5718 գիտաշխատող, իսկ 2013թ.՝ 5230, ապա 2015թ., ինչպես արդեն նշվեց, գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների աշխատողների թվաքանակը հաշվվում էր 5044: Նշենք նաև, որ 2014թ. գրանցվել է ցուցանիշի շեշտակի աճ՝ 5627, որը կտրուկ նվազել է արդեն հաջորդ տարվա արդյունքներում[1]:

[1] http://armstat.am/file/doc/99499403.pdf

2009թ. իրականացված *Gallup* սոցիոլոգիական հարցման արդյունքների համաձայն, արտերկրում ժամանակավոր աշխատանքի, ուսուցման կամ մշտական բնակություն հաստատելու ցանկություն հայտնած քաղաքացիների ամենաբարձր ցուցանիշները ԱՊՀ տարածքում արձանագրվել են Հայաստանի պարագայում: Հայաստանի հետ մասամբ համադրելի են Մոլդովայի արդյունքները: Այսպես, արտերկրում ժամանակավոր աշխատանք գտնելու համար արտերկիր տեղափոխվելու պատրաստակամություն է հայտնել Հայաստանի բնակչության 44%-ը, ուսուցման նպատակով՝ բնակչության 39%-ը: Հնարավորության դեպքում արտերկրում մշտապես բնակվելու ցանկություն է հայտնել Հայաստանի բնակչության 39%-ը[1]:

Տարբեր երկրներ հասարակության մտավոր ռեսուրսների զարգացման գործում ներգրավել են նաև իրենց սփյուռքի մտավոր հնարավորությունները: Հայաստանն աշխարհի սակավաթիվ երկրներից է, որն ունի բավական ազդեցիկ սփյուռք: Խորհրդային կարգերի փլուզումից հետո Հայաստանում ազգային մտավոր կապիտալի զարգացման հարցում երկրի իշխանությունները տարբեր ծրագրերի շրջանակներում փորձել են ներդնել նաև հայկական սփյուռքի մտավոր ռեսուրսները: Սփյուռքի մտավոր ներուժը նույնպես հայության ազգային մտավոր կապիտալի կարևորագույն բաղկացուցիչ մասն է: Հայաստանի խնդիրն է՝ կարողանալ երկրում ձևավորել բարենպաստ միջավայր հայության մտավոր կապիտալի ներհոսքի ապահովման և արդյունավետ ներդրման գործընթացի համար: Մինչև վերջին տասնամյակներն առհասարակ միջազգային պրակտիկայում, որպես կանոն, սփյուռք-պետություն փոխհարաբերությունների համատեքստում առաջնային նշանակություն է տրվել ֆինանսական ազգային կապիտալի կուտակմանը՝ որպես երկրի տնտեսության զարգացման կարևորագույն նախապայման: Վերջին տասնամյակներում, պայմանավորված նաև գիտատեխնոլոգիական շեշտակի առաջընթացի տեմպերով, աստիճանաբար առաջնակարգ նշանակություն է ստանում սփյուռքի մտավոր կապիտալը՝ որպես տվյալ պետության զարգացման գրավական: Այս տեսանկյունից, հայկական սփյուռքն իրապես բացառություն չէ, քանի որ դեռևս մեծ նշանակություն ենք տալիս հայկական համայնքների ոչ այնքան մտավոր, որքան ֆինանսական կապիտալի ներգրավմանը Հայաստանի տնտեսության զարգացման գործին: Պետք է նկատել, որ թեև հայաստանյան իրականությունում հայկական սփյուռքի մտավոր ռեսուրսների

[1] http://www.gallup.com/poll/141746/million-cis-migratetemporarily-work-study.aspx

ներդրման գործընթացը ֆինանսական կապիտալի համադրությամբ անհամեմատ բարդ է և խորքային, սակայն դրա իրացման պարագայում այն կարող է ենթադրել ակնկալվող արդյունքների բարձր արդյունավետություն և երկարաժամկետ հեռանկարներ:

Հիմնական հարցերից մեկն էլ այն է, որ թեև հայկական սփյուռքը տիրապետում է զգալի մտավոր կապիտալի, սակայն այսօր բավական բարդ է սահմանել կամ հստակեցնել՝ այդ մտավոր կապիտալի ո՞ր մասն է համարվում ազգային, որը՝ ոչ: Իհարկե, առաջին հայացքից և, թերևս, թյուրիմացաբար կարելի է հաստատել, որ ազգային մտավոր կապիտալի այդ հատվածի կրողները մեր հայրենակիցներն են, հետևաբար՝ կապիտալը նույնպես հայկական է: Այն դեպքում, երբ այստեղ առաջնային խնդիրը պարզելն է, թե որքանով է հայկական սփյուռքի մտավոր կապիտալը մասնակցում Հայաստանի և համայն հայության ազգային մտավոր կապիտալի կուտակման և զարգացման գործին: Դժբախտաբար, պետք է արձանագրել, որ սփյուռքահայության մտավոր կապիտալի մեծ հատվածը ներդրվում է բնակության երկրի տնտեսություններում, և թերևս բավական քիչ ծավալն է բաժին հասնում Հայաստանի ու հայության ազգային կապիտալին:

Սակայն այս հարցում կա նաև հուսադրող գործոն, այն է՝ ինչպես արդեն նշեցինք, մերօրյա տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաների առաջընթացը մեծ հնարավորություններ է տալիս դեպի Հայաստան արտերկրի հայկական համայնքների մտավոր կապիտալի ներհոսքի ապահովման հարցում՝ առանց այդ մտավոր կապիտալը կրողների ֆիզիկական ներգաղթի: Այս ուղղությամբ անհրաժեշտ հնարավոր գործնական քայլերից պետք է համարել հայաստանյան և արտերկրի հայկական համայնքների միջև գիտատեխնոլոգիական, կրթական համատեղ միջնաժամկետ, երկարաժամկետ ծրագրերի (հեռահար ուսուցում, ներդրումներ SS ոլորտում և այլն) նախաձեռնումը, որը կշահագրգռի առաջին հերթին սփյուռքի մեր հայրենակիցներին իրենց գիտական, կրթական կապիտալը մասնակիորեն ուղղել Հայաստանի տնտեսության զարգացմանը:

Փետրվար, 2017թ.

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՎ ՄՏԱՎՈՐ ԿԱՊԻՏԱԼ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Կարեն Վերանյան

Ամփոփագիր

Հետազոտությունում ներկայացվում են պետության մարդկային կապիտալի և մտավոր ռեսուրսների պահպանման և զարգացման ոլորտի հիմնախնդիրները և մարտահրավերները: Անդրադարձ է կատարվում ազգային մարդկային և մտավոր կապիտալ հասկացություններին՝ որպես հասարակության բարեկեցության ապահովման կարևորագույն երաշխիքի: Լուսաբանվում են նաև Հայաստանում «ուղեղների արտահոսքի», ազգային մտավոր կապիտալի պահպանման և վերարտադրողականության ապահովման հարցերը:

О ПОНЯТИЯХ ЧЕЛОВЕЧЕСКИЙ И ИНТЕЛЛЕКТУАЛЬНЫЙ КАПИТАЛ

Карен Веранян

Резюме

В исследовании представлены задачи и вызовы, стоящие перед государством в плане сохранения и развития человеческого капитала и интеллектуальных ресурсов. Понятия «национальный человеческий капитал» и «интеллектуальный капитал» рассматриваются в качестве важнейшей гарантии обеспечения благополучия общества. Освещаются также вопросы «утечки мозгов» из Армении, сохранения и обеспечения воспроизводства национального интеллектуального капитала.

REGARDING THE CONCEPTS OF HUMAN AND INTELLECTUAL CAPITAL

Karen Veranyan

Resume

The research addresses issues and challenges of maintaining and developing human capital and intellectual resources of the country. The concepts of national human and intellectual capital are discussed, as crucial means to ensure the well-being of the society. Problems of brain-drain in Armenia, preservation and reproduction of the national intellectual capital are reviewed.

ՀՏԴ 314.1:323

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՐՊԵՍ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ԱՃԸ ԽԹԱՆՈՂ ԳՈՐԾՈՆ

Սամվել Մանուկյան*

Բանալի բառեր ՝ բնակչության բնական աճ, պտղաբերության գործակից, արժեքային համակարգ, սոցիալ-տնտեսական զարգացում, մաթեմատիկական մոդել։

Հայաստանում ժողովրդագրական վիճակն արդեն ավելի քան 20 տարի վատթարանում է, ներկայում խիստ անբարենպաստ է և, հիմքեր կան ենթադրելու, որ այն շարունակելու է վատթարանալ։ Դրա մասին են վկայում ինչպես ՀՀ Ազգային վիճակագրական վարչության տվյալները, այնպես էլ սոցիոլոգիական հետազոտությունները։

Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների, 1992թ. Հայաստանի *մշտական բնակչությունը* հասել է իր առավելագույնին՝ 3.633 միլիոն մարդ, իսկ 2016թ. այն դարձել էր 2.998 միլիոն։

1990թ. Հայաստանում կանանց պտղաբերության գործակիցը հավասար էր 2.62-ի, իսկ սկսած 1993-ից՝ արդեն 22 տարի, այն ավելի ցածր է, քան 2.15-ը՝ այն շեմային արժեքը, որը երկարատև ժամանակահատվածում ապահովում է բնակչության պարզ վերարտադրությունը։ 2015թ. այն դարձել է 1.64 [1]։

Սկսած 2010 թվականից՝ Հայաստանից մեկնածների թվաքանակը գերազանցում է մուտք գործողների թվաքանակը միջին հաշվով 42,000 մարդով, իսկ 2016թ. կազմել է 48,170 մարդ [1]։ Ներկայում դեռևս հիմքեր չկան ենթադրելու, որ տեսանելի ապագայում այդ միտումները կդառնան բարենպաստ։

«21-րդ ԴԱՐ» ամսագիրը պարբերաբար անդրադարձ է կատարել Հայաստանում ժողովրդագրական վիճակը պայմանավորող կարևորագույն բաղադրիչներից՝ *արտագաղթի* վիճակի միտումների և դրանք պայմանավորող գործոնների մաթեմատիկական գնահատմանը և սոցիոլոգիական մեկնաբանությանը [2, 3]։

* Սոց. գ. թ., «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի խորհրդատու։

Ներկայացվող հոդվածում դիտարկված է Հայաստանում ժողովրդագրական վիճակը պայմանավորող երկրորդ կարևորագույն բաղադրիչի՝ բնակչության բնական աճի խնդիրը:

Փորձ է կատարվել հիմնավորելու, որ արդի Հայաստանում այն պայմանավորող հիմնարար գործոններն արժեքա-մշակութային են: Առանց զարգացնելու ավանդական արժեքային համակարգի գերակայությունն ազատական արժեքային համակարգի նկատմամբ՝ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումն անբավարար կլինի ապահովելու Հայաստանում բնական աճի նույնիսկ պարզ վերարտադրությունը:

Հայաստանում բնական աճի խթանման պետական մոտեցումը. Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարությունը [4] և Հայաստանի ռազմական դոկտրինը ծնելիության ցածր մակարդակը սահմանել են որպես Հայաստանի ազգային անվտանգության ներքին սպառնալիք [5]: Այդ դրույթին համապատասխան, սկսած 2009-ից, Հայաստանում մշակվել և իրականացվել են ժողովրդագրական վիճակի բարելավման ռազմավարություններ: Ներկայում իրականացվում է դրա հերթական տարբերակը՝ «Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2016-2018թթ. ազգային ծրագիրը» [6]:

Այդ ծրագրում Հայաստանում բնակչության բնական աճի խթանման մոտեցումը հիմնված է այն հիմնադրույթին, որ ծնելիության անկման պատճառները հիմնականում սոցիալ-տնտեսական են: Ծրագրում, մասնավորապես, գրված է. «10. Բնակչության աճի հիմնական ցուցանիշների փոփոխությունները պայմանավորված են ժողովրդագրական գործընթացների վրա ազդող գործոններով, որոնց շարքում *հիմնական դերակատարում ունեն*՝ 1) ընտանիքի կայուն եկամուտը, կենսապայմանները և բարեկեցությունը, 2) ընտանիքի բնակարանային պայմանները, 3) ընտանիքի սոցիալական պաշտպանվածության աստիճանը, 4) միգրացիայի մակարդակը, 5) մայրության և երեխայի իրավունքների պաշտպանվածության մակարդակը, 6) բնակչության առողջության, մասնավորապես վերարտադրողական առողջության մակարդակը, 7) կրթական ծառայությունների մատչելիությունը, 8) չկառավարվող ներքին միգրացիան, ուրբանիզացման մակարդակը և այլն» [6]:

Իրոք, երբ մարդկանց հարցնում են, թե ինչու նրանք չեն ունենում այնքան երեխա, որքան ցանկանում են, ապա, որպես կանոն, նրանք նշում են այն պատճառները, որոնք թվարկված են Ազգային ծրագրում: Օրինակ, 2014թ. իրականացված «Կյանքի որակը Հայաստանում» հետազոտության արդյունքներով, 18-45 տարեկան ամուսնացած անձինք այդ հարցին պա-

տասխանել են՝ անբավարար է ֆինանսական վիճակը (56.5%), անբավարար են բնակարանային պայմանները (25.3%), առողջական վիճակը (13.3%), անորոշությունը ապագայի նկատմամբ (10.3%): Ընդ որում, 18-29 տարեկան ամուսնացածների մոտ կեսը՝ 48.1%-ը, պատասխանել է. «Ոչինչ չի խանգարում՝ դեռ կունենամ»: 30-45 տարեկան ամուսնացածների շրջանում այդ պատասխանը նշել է հարցվածների 16.8%-ը (Աղյուսակ 1).

Աղյուսակ 1

Իր ցանկացած քանակով երեխաներ չունենալու պատճառները 18-45 տարեկան ամուսնացած անձանց շրջանում

Ցանկալի քանակով երեխաներ չունենալու պատճառները	**18-29**	**30-45**	**Ար.**	**Իգ.**	**Ընդ.**
Ֆինանսական միջոցների պակասը	44.0%	64.6%	60.2%	53.3%	**56.5%**
Բնակարանային անբավարար պայմանները	20.8%	28.2%	26.5%	24.3%	**25.3%**
Ամուսնու/կնոջ առողջական խնդիրներ	9.7%	15.6%	7.6%	18.0%	**13.3%**
Անորոշությունն ապագայի նկատմամբ	9.3%	11.4%	10.8%	10.3%	**10.6%**
Արդեն մեծ տարիքում եմ	0.5%	3.3%	0.8%	3.3%	2.2%
Ամուսնու/կնոջ մահ, ամուսնալուծություն, արտագնա աշխատանք	0.9%	0.6%	0.4%	1.0%	0.7%
Ծանրաբեռնված աշխատանքը	-	0.9%	0.4%	0.7%	0.5%
1988-1994թթ. իրադարձություններ*	-	0.9%	0.4%	0.7%	0.5%
Ոչինչ չի խանգարում՝ դեռ կունենամ	48.1%	16.8%	32.9%	26.0%	**29.1%**
* - այդ թվում՝ հասարակարգի փոփոխություն, ԽՍՀՄ փլուզում, Սպիտակի երկրաշարժ, Ղարաբաղյան պատերազմ					

Թվում է, թե ամեն ինչ պարզ է, եթե բարելավվեն Հայաստանի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, ապա դա կխթանի բնակչության բնական աճը:

Սակայն արդյո՞ք այդ մոտեցումն ադեկվատ է:

Երեխաների պահանջմունքը և պտղաբերության գործակիցը. Ենթադրենք՝ հարատևորեն բարելավվում են բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները: Ինչքա՞ն կաճի երեխաների քանակն *ընտանիքներում*:

Պարզ է՝ կհասնի այն չափին, որքան երեխա են ցանկանում ունենալ մարդիկ: Այսինքն՝ բնակչության բնական աճը վերևից սահմանափակված է *մարդկանց երեխա ունենալու պահանջմունքով, որը մշակութային-արժեքային դիրքորոշում է*, ինչը ժողովրդագրության տեսությանը վաղուց հայտնի *դասագրքային* ճշմարտություն է [7]: Մարդիկ, *բոլոր անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում* (ֆինանսական, բնակարանային և այլ նյութական պայմաններ, սոցիալապես բավարար ընկալվող աշխատավարձով աշխատանքի երաշխավորված առկայություն, իր չափով և բնույթով սոցիալապես ընդունելի և բավարար համարվող սոցիալական ապահովություն, մատչելի և որակյալ առողջապահություն և այլն), հակված են ունենալու այնքան երեխա, որքան ցանկանում են:

Հետևաբար*, երբ հասարակությունում նվազում է երեխա ունենալու պահանջմունքը կամ երեխաների ցանկալի քանակը, ապա մնացած բոլոր գործոնները կարող են երեխաների քանակն ընտանիքում բարձրացնել մինչև այդ ցանկալի քանակը*: Եվ եթե ցանկալի քանակը փոքր է բնակչության բնական վերարտադրության համար անհրաժեշտ շեմային արժեքից, ապա *սոցիալ-տնտեսական գործոնների վրա հիմնված ոչ մի ռազմավարություն ունակ չի լինի հասնել ցանկալի արդյունքի*:

Դրա մասին է վկայում ժողովրդագրական վիճակը տնտեսապես զարգացած երկրներում, որտեղ բարեկեցության, կրթության, առողջապահության և սոցիալական ապահովության բարձր մակարդակի պայմաններում *տեղաբնիկ բնակչության* բնական աճը ոչ թե բարձրանում է, այլ նվազում: Մյուս կողմից, նույն այդ երկրներում՝ Ասիայից և Աֆրիկայից ներգաղթած բնակչության *առաջին սերնդում*, բարեկեցության, առողջապահության և սոցիալական ապահովության բարձր մակարդակի պայմաններում ծնելիությունն աճում է: Սակայն այդ ներգաղթյալների երկրորդ և երրորդ սերունդներում ծնելիությունը նվազում է: Ընդ որում, *նվազումն ուղիղ համեմատական է ներգաղթյալների ասիմիլյացիայի մակարդակին.* որքան բարեհաջող է այն ընթանում, այնքան ավելի է նվազում ծնելիությունը: Այդ պատճառով եվրոպական քաղաքների ասիական գետտոներում ծնելիությունը մնում է շատ բարձր:

Ակնհայտ է, որ զարգացած երկրների տեղաբնիկների բնական աճի նվազումը պայմանավորված է լիբերալ արժեքային-մշակութային դիրքորո-

շումների (եսակենտրոնություն, կյանքի նկատմամբ սպառողական կողմնորոշումներ, անձնական ինքնաիրականացում) գերակայությամբ ավանդական արժեքների նկատմամբ (ընտանիք, երեխաներ, կոլեկտիվիզմ): Երեխաները խանգարում են եսակենտրոն ցանկությունների իրականացմանը:

Մարդու երեխաներ ունենալու, այդ թվում՝ որոշակի քանակով երեխաներ ունենալու պահանջմունքը (ցանկությունը), ինչպես նաև այդ պահանջմունքը բավարարելու գործողությունները, կամայական չեն: Դրանք ձևավորվում են մարդու սոցիալականացման վաղ տարիքում: Հայտնի է, որ հատկապես մանկական և պատանեկան տարիքում ձևավորված դիրքորոշումներն ու նորմերը հիմնարար են և շատ կայուն, դրանք պահպանվում են ամբողջ կյանքի ընթացքում՝ փոքր ազդեցություններ կրելով կենսապայմանների փոփոխությունների դեպքում: Այլ կերպ.

Երեխաներ ունենալու, այդ թվում որոշակի քանակով երեխաներ ունենալու ցանկությունը մարդու արժեհամակարգի բաղադրիչ է կամ մշակութային գործոն:

Իսկ ինչպիսի՞ն է այդ տեսակետից իրավիճակը Հայաստանում:

Արդեն նշված «Կյանքի որակը Հայաստանում 2014» հետազոտությունում հարց է տրվել՝ *«Քանի՞ երեխա կուզեիք ունենալ, եթե լինեն բնակարանային, ֆինանսական և այլ անհրաժեշտ պայմանները»*: Տվյալների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ժամանակի ընթացքում Հայաստանի հասարակությունում երեխաներ ունենալու պահանջմունքը նվազել է: Եթե 60 և ավելի տարեկանների խմբում ցուցանիշի միջին արժեքը կազմել է 4.52, ապա ավելի երիտասարդ խմբերում աստիճանաբար նվազել է և 18-29 տարեկանների խմբում կազմել է 3.12 (Գծապատկեր 1), այսինքն՝ նվազել է համարյա կիսով չափ՝ 45%-ով:

Այնուամենայնիվ, չնայած նշանակալի նվազմանը, այդ ցուցանիշը դեռևս բավարար է բնակչության ընդլայնված վերարտադրության համար:

Հարց է առաջանում. արդյո՞ք սա նշանակում է, որ Հայաստանում ժողովրդագրական վիճակը շտկելու համար մնում է «ընդամենը» սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմամբ բավարար չափով բարձրացնել բնակչության բնական աճի ինտենսիվությունը՝ թիրախավորելով կնոջ պտղաբերության գործակիցը:

Այդ հարցի պատասխանը ստանալու համար նորից դիտենք Գծապատկեր 1-ը, մասնավորապես՝ *«հարցվողների երեխաների միջին քանակը»* և *«երեխաների պահանջմունքի բավարարվածությունը»* ցուցանիշների դինամիկան: Վերջինն իրենից ներկայացնում է «հարցվողի երեխաների

քանակի» հարաբերությունը «հարցվողի երեխաների պահանջմունքին» ցուցանիշի միջին արժեքին ըստ տարիքային խմբերի:

Գծապատկեր 1

Երեխաների պահանջմունքը, երեխաների քանակը հարցվողի ծնողների ընտանիքում, հարցվողի երեխաների քանակը, երեխաների քանակի պահանջմունքի բավարարվածությունը[1]



«Հարցվողների երեխաների միջին քանակը» ցուցանիշը 60 և ավելի տարիքային խմբում 2.76-ից նվազել է մինչև 1.96 արժեքը՝ 30-45 տարեկանների խմբում: 18-29 տարեկանների խմբում այն հավասար է 0.65-ի, սակայն այդ տարիքային խմբում դեռևս չի հասել իր հնարավոր առավելագույնին, քանի որ հետազոտության տվյալներով՝ այդ խմբում երբեք չամուսնացածների քանակը կազմել է 78.1%[2]: Սակայն, եթե երեք ավելի ավագ խմբերի ցուցանիշների կիրառմամբ էքստրապոլացնենք այդ ցուցանիշը, ապա կստանանք 1.57, որը ճշգրիտ կերպով հավասար է ՀՀ Ազգային վիճակա-

[1] Նշենք, որ Գծապատկերում «երեխաների պահանջմունքը» ցուցանիշի միջին արժեքը մոտարկում է կնոջ պտղաբերության գործակցի առավելագույն արժեքը տվյալ տարածաշրջանում, ժամանակահատվածում, սոցիալ-տնտեսական և մշակութային պայմաններում: «Երեխաների քանակը հարցվողի ծնողների ընտանիքում» ցուցանիշը մոտարկում է հարցվողների մայրերի պտղաբերության գործակիցը, իսկ հարցվողների երեխաների քանակը՝ պտղաբերության գործակիցը հարցվողների ընտանիքներում (այս պարագայում էական չէ, թե ինչ սեռի է հարցվողը), բացի 18-29 տարեկաններից, որոնց մեծ մասը «դեռևս ժամանակ ունի» բարձրացնելու երեխաների իր պահանջմունքի իրականացումը և իրականացվածության մակարդակը:

[2] Սա բնական վերարտադրության աճի տեսակետից «վատ» ցուցանիշ է: Նշենք նաև, որ 30-45 տարեկանների խմբում երբեք չամուսնացածները կազմել են 15.3%, 46-60 տարեկանների խմբում՝ 5.3%, իսկ ամենաավագ՝ 60+ տարեկանների խմբում՝ 1.3%:

գրական ծառայության կողմից հաշվարկված Հայաստանում կնոջ պտղաբերության գործակցին 2013 թվականին[1] [6]:

«Երեխաների պահանջմունքի բավարարվածությունը» ցուցանիշը նույնպես ժամանակի ընթացքում *շատ դանդաղ, սակայն, այնուամենայնիվ, նվազել է*: Եթե 60+ տարիքային խմբում երեխաներ ունենալու պահանջմունքը բավարարվել է 70%-ով, ապա 46-60 տարեկանների խմբում՝ 66%-ով, իսկ 30-45 տարեկանների խմբում՝ 59%-ով: Ամենաերիտասարդ 18-29 տարեկանների խմբում երեխաներ ունենալու պահանջմունքը բավարարվել է 22%-ով: Սակայն, եթե այս ցուցանիշը նախորդի նման էքստրապոլացնենք ավագ տարիքային խմբերի ցուցանիշներով, ապա կստանանք 52%: Եվ եթե 18-29 տարիքային խմբի երեխաների պահանջմունքի ցուցանիշը՝ 3.12-ը, բազմապատկենք նույն խմբում երեխաների պահանջմունքի իրականացվելիության գնահատականով՝ 0.52, ապա կստանանք՝ 1.62, այսինքն՝ կնոջ պտղաբերության ցուցանիշն ըստ ՀՀ ԱՎԾ-ի 2015թ.՝ 1.64 [6]:

Ստացվում է, որ վերջին կես դարի ընթացքում, երբ Հայաստանի բնակչությունն ապրել է և՛ «լավ պայմաններում», և՛ «բարելավվող պայմաններում», և՛ «վատ պայմաններում», և՛ «վատթարացող պայմաններում», երեխաների պահանջմունքի բավարարվածության մակարդակը չի գերազանցել 70%-ը, ավելին՝ ժամանակի ընթացքում այն աստիճանաբար նվազել է:

Հետևաբար.

- *Չկան բավարար հիմքեր ենթադրելու, որ Հայաստանում տեսանելի ապագայում հնարավոր է էապես բարելավել կանանց պտղաբերության գործակիցը: Ավելին, մնացած հավասար պայմաններում բարձր հավանականությամբ այն կնվազի:*

Հայաստանում բնակչության բնական աճի խթանման մոդելը. Երեխաների պահանջմունքը և պտղաբերության գործակիցը հատվածում նշվեց, որ բարեկեցությունը, սոցիալական բարենպաստ պայմանները, կրթությունն ավանդական մշակութային-արժեքային միջավայրում բարձրացնում են բնական աճի ինտենսիվությունը, իսկ լիբերալ մշակութային-արժեքային միջավայրում՝ նվազեցնում:

Իսկ ինչպիսի՞ն է այդ տեսակետից վիճակը Հայաստանում:

«Կյանքի որակը Հայաստանում 2015» հետազոտության տվյալների շտեմարանի կիրառմամբ կառուցվել է մաթեմատիկական մոդելների համախմբություն, որը նկարագրում է, թե ինչպես են Հայաստանում *սոցիալ-*

[1] Սա հիմնավորում է հետազոտական տվյալների ճշտությունն ու վալիդությունը:

տնտեսական և արժեքային-մշակութային գործոններն ազդում Հայաստանի բնակչության բնական աճը պայմանավորող հիմնական գործոնների վրա: Այդ մոդելը տրված է Նկար 1-ում.

Նկար 1

Բնակչության բնական աճի մոդելը



Բոլոր ազդեցությունները «ազատված են» «Տարիք» փոփոխականի ազդեցությունից

Մոդելում կանաչ վանդակներում տրված են հասարակության արժեքային-մշակութային բնութագրերը ներկայացնող փոփոխականները, իսկ կապույտ վանդակներում՝ ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական բնութագրերը: Մոդելի թիրախային փոփոխական է *«հարցվողի երեխաների քանակը»*: Մոդելի նպատակն է բացատրել, թե ինչպես են մշակութային,

ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական բնութագրերն ազդում այդ թիրախային փոփոխականի վրա։

Մոդելում տվյալ փոփոխականի ազդեցությունը մեկ այլ փոփոխականի վրա տրված է սլաքով։ Սլաքն ունի կարմիր գույն, եթե սլաքի սկզբում գտնվող փոփոխականի արժեքի աճը բարձրացնում է սլաքի վերջում գտնվող փոփոխականի արժեքը։ Հակառակ դեպքում՝ սլաքը կապույտ գույնի է։ Երկկողմանի սլաքը նշանակում է, որ փոփոխականներն ունեն փոխադարձ ազդեցություն։

Նկարում *«Հարցվողի ծնողների երեխաների քանակը», «Հարցվողի երեխաների պահանջմունքը»* և *«Հարցվողի երեխաների քանակը»* ընդգրկված են մեկ ուղղանկյան մեջ, քանի որ դրանք միասնական դոմեն կազմող *մշակութային դիրքորոշումներ* արտացոլող փոփոխականներ են, որոնք ուղղակիորեն կապված են վերարտադրողական վարքի հետ։

Նույնը վերաբերում է հարցվողի կարծիքով *«Տղայի ամուսնության գերադասելի տարիքը»,* հարցվողի կարծիքով *«Աղջկա ամուսնության գերադասելի տարիքը»* և հարցվողի *«Ազատական վարքի ինդեքսը»* փոփոխականներին։ Դրանք նույնպես կազմում են *մշակութային դիրքորոշումներ* արտահայտող և հասարակական վարքը բնութագրող դոմեն։

Որքան բարձր է հարցվողի *«Ազատական վարքի ինդեքսը»*, այնքան հարցվողն ավելի է հակված «ազատական վարքին», այսինքն՝ ավելի հավանական է, որ նրա համար ընդունելի է, որպեսզի չամուսնացած տղան ապրի ծնողներից առանձին, չամուսնացած աղջիկն ապրի ծնողներից առանձին, կինը երեխա ունենա առանց ամուսնանալու։

Չծանրաբեռնելու համար նկարը, երբ որևէ փոփոխական ունի միևնույն ուղղությամբ ազդեցություն դոմենի բոլոր փոփոխականների վրա, ապա այդ փոփոխականից դեպի դոմեն է ուղղված միայն մեկ սլաք։

«Ազգային նույնականացման ինդեքսը» ցույց է տալիս, թե որքանով են հարցվողի աշխարհայացքում կոնսոլիդացված այլ անձին հայ համարելու համար անհրաժեշտ բնութագրերը, այդ թվում՝ հոր հայ լինելը, մոր հայ լինելը, ինքն իրեն հայ համարելը, Հայաստանն իր միակ հայրենիքը համարելը, իրեն Հայ Առաքելական եկեղեցու անդամ համարելը և հայերեն խոսել իմանալը։ Որքան ավելի բարձր է ինդեքսի արժեքը, այնքան ավելի շատ բնութագիր է հարցվողը համարում պարտադիր՝ այլ անձին հայ համարելու համար։

Մոդելում առկա են հարցվողի *սեռը և տարիքը* զուտ *ժողովրդագրական փոփոխականները, հարցվողի բնակավայրի տիպը, կրթամակար-*

դակը և բարեկեցությունը սոցիալ-տնտեսական փոփոխականները: Բնակավայրի տիպի փոփոխականը ներկայացված է երեք առանձին փոփոխականներով՝ *«Երևան», «Քաղաք»* և *«Գյուղ»*: Եթե հարցվողը Երևանից չէ, ապա փոփոխականի արժեքը հավասար է 0-ի, հակառակ դեպքում՝ 1-ի, ինչը մոդելում համարժեք է «երբ հարցվողը Երևանից է, ապա փոփոխականի արժեքն աճում է» դրույթին: Նույնը վերաբերում է նաև «Քաղաք» և «Գյուղ» փոփոխականներին:

Տարիք փոփոխականը շատ ուժեղ է ազդում մշակութային փոփոխականների դոմենների վրա, որի պատճառով մոդելում «ստանդարտ» կիրառման դեպքում այն կարող էր առաջացնել անցանկալի ազդեցություններ, մասնավորապես կարող էր կամ առաջացնել ֆիկտիվ ազդեցություն, այն դեպքում, երբ ազդեցությունը բացակայում է, կամ ճնշել առկա ազդեցությունը, կամ նույնիսկ փոխել ազդեցության իրական ուղղությունը: Այդ պատճառով.

- *մոդելում բոլոր ազդեցությունները հաշվարկվել են տարիք փոփոխականի ազդեցության չեզոքացման պայմանով*:

Այժմ մեկնաբանենք մոդելից բխող արդյունքները:

Ինչպես արդեն նշվել է, հարցվողի երեխաների քանակի վրա ուժեղ ազդեցություն ունի այն միջավայրը, որտեղ նա ծնվել է և մեծացել, նախևառաջ՝ նրա ընտանիքը: Մոդելը հաստատում է այն դրույթը, որ՝ *որքան ավելի մեծ է եղել երեխաների քանակը հարցվողի ծնողների ընտանիքում, այնքան, մնացած հավասար պայմաններում, ավելի մեծ է հարցվողի երեխաների պահանջմունքը,* ինչն ակնհայտորեն ընտանիքում մշակութային-արժեքային դիրքորոշումների վերարտադրության արդյունք է: Իսկ երեխաների ավելի մեծ պահանջմունքը, մնացած հավասար պայմաններում, նպաստում է երեխաների քանակի աճին: Բացի դրանից, մոդելը ցույց է տալիս, որ հարցվողի ծնողների ընտանիքում երեխաների քանակն ունի նաև *ուղղակի ազդեցություն* (չմիջնորդավորված հարցվողի մոտ երեխաների գիտակցված պահանջմունքով), ինչը նշանակում է, որ սոցիալականացման ազդեցությունը կարող է լինել նաև անձի կողմից *չգիտակցված*:

Հասարակական վարքի ազատականության աճը նվազեցնում է վերարտադրողական վարքի դոմենի բոլոր փոփոխականների արժեքները: Ընդ որում, ազատականության աճն արտահայտող յուրաքանչյուր փոփոխական առանձին՝ նվազեցնում է երեխաների պահանջմունքի դոմենի բոլոր փոփոխականների արժեքները:

Մշակութային մյուս փոփոխականը՝ *ազգային նույնականացման ինդեքսի աճը,* նվազեցնում է ազատականության դոմենի բոլոր փոփոխականների արժեքները և դրանով իսկ նպաստում է երեխաների պահանջմունքի աճին: Ընդ որում, այս ինդեքսը ոչ միայն անուղղակիորեն է նպաստում երեխաների պահանջմունքի աճին, այլև ուղղակիորեն (ինդեքսն ունի ուղղակի դրական կապ՝ վերարտադրողական վարքի դոմենի հետ):

Այսպիսով՝ Հայաստանում ազգային-ավանդական արժեհամակարգը, դրա ամրությունը և զարգացումը նպաստում են մարդու՝ երեխաների պահանջմունքի աճին: Ընդ որում, տվյալ դեպքում նկատի ունենք ոչ միայն, որ երեխաներ և շատ երեխաներ ունենալը հանդիսանում է ազգային-ավանդական արժեհամակարգի բաղադրիչ, այլ նաև այն, որ *ազգային-ավանդական արժեհամակարգի բոլոր բաղադրիչները փոխադարձաբար սատարում և ուժեղացնում են միմյանց:* Եվ հակառակը՝ *ազատական վարքի բոլոր բաղադրիչները նվազեցնում են մարդու՝ երեխաներ ունենալու պահանջմունքը:*

Մոդելը ցույց է տալիս նաև *ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական* բնութագրերի ազդեցության բնույթը: Մասնավորապես, Հայաստանի հասարակության դեպքում ճիշտ են հետևյալ պնդումները.

- որքան ավելի բարձր է *կրթամակարդակը*, այնքան ավելի ցածր է երեխաներ ունենալու պահանջմունքը,
- որքան ավելի բարձր է *բարեկեցությունը*, այնքան ավելի ցածր է երեխաներ ունենալու պահանջմունքը,
- որքան ավելի *երիտասարդ* է անձը, այնքան ավելի ցածր է երեխաներ ունենալու պահանջմունքը,
- որքան *մշակութային և սոցիալապես ավելի զարգացած* պայմաններում է բնակվում անձը, տվյալ դեպքում՝ մայրաքաղաք Երևանում, այնքան ավելի ցածր է երեխաներ ունենալու պահանջմունքը,
- *կանանց* շրջանում ավելի ցածր է երեխաներ ունենալու պահանջմունքը, քան տղամարդկանց շրջանում:

Ընդհանրացնենք արդյունքները.

- *Հայաստանում մշակութային-արժեքային կոնտեքստը և դրա փոփոխության միտումներն այնպիսին են, որ բնակչության բարեկեցության, սոցիալական ապահովության, կրթամակարդակի և առողջապահության աճն ուղեկցվում են երեխաներ ունենալու պահանջմունքի և ծնելիության նվազմամբ:*

- *Այդ կոնտեքստն առավելապես ազդում է կանանց վրա և իրականացվում է կանանց վերարտադրողական վարքի փոփոխության միջոցով:*

Ստացված արդյունքները նշանակում են, որ.

- *Հայաստանում բնակչության տնտեսական և սոցիալական վիճակի բարելավումը, կրթական մակարդակի բարձրացումը, ինչպես նաև մշակութային զարգացումը տեղի են ունենում ավանդական արժեքները լիբերալ արժեքներով տեղակալելու պայմաններում:*

Հայաստանի տնտեսական վիճակի ազդեցությունը բնակչության բնական աճի վրա 2000-2015թթ. Այնուամենայնիվ, սոցիոլոգիական հետազոտությունների տվյալները վկայում են, որ Հայաստանի բնակչության մեծ մասի շրջանում գերակայում է ավանդական արժեհամակարգը: Հետևաբար, սոցիալ-տնտեսական պայմանների փոփոխությունը պետք է որ ազդի Հայաստանում բնական աճի, մասնավորապես՝ պտղաբերության գործակցի դինամիկայի վրա:

Ինչպիսի՞ն է այն եղել հետխորհրդային 25-ամյակում և ի՞նչ կարելի է դուրս բերել այդ դինամիկայի դիտարկումից:

Գծապատկեր 2-ում ներկայացված է Հայաստանում տնտեսական աճի և պտղաբերության գործակցի դինամիկան 1990-2015թթ. ընթացքում.

Գծապատկեր 2

Տնտեսական աճի և պտղաբերության դինամիկան Հայաստանում 1990-2015թթ.



1991-1994թթ. ընթացքում տեղի ունեցավ Հայաստանի տնտեսական փլուզումը, այն ուղեկցվում էր Ղարաբաղյան պատերազմով և Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետևանքներով: Այդ տարիներին կտրուկ անկում ունեցավ նաև պտղաբերության գործակիցը՝ 1990թ. 2.62-ից՝ մինչև 1.88 1994թ.: 1990-1993թթ. ընթացքում Հայաստանի ՀՆԱ-ն նվազեց 47%-ով: Եվ չնայած 1994-2000թթ. ընթացքում տնտեսությունն աճում էր, սակայն միայն 2002թ. Հայաստանի ՀՆԱ-ն մի փոքր գերազանցեց 1990թ. մակարդակը[1]: Եվ տրամաբանական է, որ պտղաբերության գործակիցը շարունակում էր նվազել ու 2002թ. դարձավ 1.21:

2001-2007թթ. ընթացքում Հայաստանի տնտեսական աճը տարեկան 10% և ավելի էր: Այդ ժամանակահատվածում պտղաբերության գործակիցը 2 տարվա լագով սկսեց աճել, որը գործնականում դադարեց տնտեսական ինտենսիվ աճի ավարտից երկու տարի անց՝ 2009թ., երբ պտղաբերության գործակիցը դարձել էր 1.55:

2010-2015թթ. ընթացքում, երբ տնտեսական աճը միջին հաշվով մոտ 4%-ի կարգի էր, պտղաբերության գործակցի աճը եղել է չնչին: Եթե 2002-2009թթ. պտղաբերության գործակցի միջին տարեկան աճը կազմել է 0.049, ապա 2010-2015թթ. ընթացքում՝ 0.017, կամ՝ մոտ 3 անգամ ավելի ցածր:

Այսպիսով.

- Կան բավարար հիմքեր ենթադրելու, որ 2002-2009թթ. ընթացքում պտղաբերության գործակցի աճը շաղկապված է եղել Հայաստանում երկնիշ տնտեսական աճի հետ: Ընդ որում, այդ ժամանակահատվածում Հայաստանում ժողովրդագրական վիճակի բարելավման ծրագիր չէր իրականացվում:
- Չկան բավարար հիմքեր՝ ենթադրելու համար, որ 2009-2015թթ. ընթացքում պտղաբերության գործակցի չնչին աճը պայմանավորված է եղել Հայաստանում իրականացվող ժողովրդագրական վիճակի բարելավման ծրագրերով, այլ ոչ թե թեկուզ փոքր, սակայն առկա տնտեսական աճով:

Հետևաբար, եթե նույնիսկ երեխաների պահանջմունքի և դրա բավարարվածության աստիճանի անընդհատ նվազման պայմաններում որևէ

[1] ՀՀ պաշտոնական տվյալների վրա հիմնված այս պնդումը կարող է վիճարկվել, քան որ ԽՍՀՄ-ում ՀՆԱ հաշվարկի մեթոդաբանությունը տարբերվում էր ներկայում Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից մշակված մեթոդաբանությունից: Մասնավորապես, խորհրդային ժամանակաշրջանում ՀՆԱ կազմի մեջ չէին հաշվառվում ծառայությունների ոլորտի մի շարք բաղադրիչներ:

նշանակություն ունեն սոցիալ-տնտեսական գործոնները, ապա դրանք պայմանավորված են ավելի շուտ Հայաստանի տնտեսության ընդհանուր ինտենսիվ աճով, այլ ոչ թե ժողովրդագրական վիճակի բարելավման ծրագրերով[1]: Ինտենսիվ աճը, չնայած անհավասար կերպով, սակայն ազդեցություն է գործել ամբողջ հասարակության վրա, իսկ ժողովրդագրական վիճակի բարելավման ծրագրերն ազդեցություն են գործել թիրախային խմբերի վրա, որոնք կազմում են Հայաստանի բնակչության շատ փոքր հատվածը:

Այսպիսով, եթե ընդհանրացնենք ստացված տվյալները, ապա պետք է ընդունել, որ.

- *ՀՀ ժողովրդագրական վիճակի բարելավման ազգային ծրագիրն ադեկվատ չէ իր սահմանած նպատակին՝ այն ունակ չէ ինտենսիվացնելու բնակչության բնական աճը Հայաստանում:*
- *Ավելին, երկարատև ժամանակահատվածում, Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2016-2018 թվականների ազգային ծրագրի և դրա տիպի այլ ծրագրերի բարեհաջող իրականացումը նվազեցնելու է բնական աճը Հայաստանում:*

Հարկ ենք համարում հատուկ նշել, որ *արդի Հայաստանում պարտադիր կերպով անհրաժեշտ է իրականացնել* արդի Հայաստանում ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման ազգային ծրագրում նշված դրույթները, այն է՝ մարդիկ պետք է ունենան կայուն եկամուտ, նորմալ կենսապայմաններ, նորմալ բնակարանային պայմաններ, սոցիալական պաշտպանվածություն, մատչելի և որակյալ առողջապահություն, այդ թվում նաև վերարտադրողական, կրթական ծառայությունների մատչելիություն, մայրության և երեխաների պաշտպանություն: *Սակայն ոչ թե այն պատճառով, որ դա խթանում է բնակչության բնական աճը, այլ որովհետև մարդը պետք է ապրի մարդավայել պայմաններում: Այսինքն՝ ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման ազգային ծրագրի ադեկվատ անունն է՝ Հայաստանի սոցիալական զարգացման ծրագիր:*

Հարց է առաջանում. արդյո՞ք ստացված արդյունքները յուրահատուկ են միայն Հայաստանին, թե՞ համապատասխանում են ավելի լայնամասշտաբ օրինաչափությունների:

Հայաստանի բնական աճի խնդիրը գլոբալ համատեքստում. 1972թ. հրապարակվեցին Հռոմեական ակումբի պատվերով իրականացված առա-

[1] Նշենք, որ [2]-ում ցույց է տրվել, որ 2002-2007թթ. տնտեսական աճը պրակտիկորեն դադարեցրել էր արտագաղթը Հայաստանից:

ջին հետազոտության արդյունքները, որը ղեկավարել էր Դ.Մեդոուզը: Այն կոչվում էր «Աճի սահմանները» [8]: Հետազոտության հիմնական արդյունքն այն էր, որ եթե աշխարհում բնակչության աճը շարունակվի այն ժամանակ առկա և ապագայում կանխատեսվող տեմպերով, իսկ աղքատ երկրներում, որոնց բնակչությունն աճում է շատ ավելի արագ, քան զարգացած երկրներում, հաստատվեն սպառման այն ստանդարտները, որոնք առկա են զարգացած երկրներում, ապա երկրագնդի ռեսուրսները չեն բավականացնի բոլորին. սպասվում է էկոլոգիական և ռեսուրսային աղետ՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Ստացված արդյունքներից բխող ակնհայտ հետևություն էր՝ անհրաժեշտ է սահմանափակել, ավելին՝ կրճատել երկրագնդի, *հատկապես երրորդ աշխարհի երկրների բնակչության բնական աճը*: Այդ նպատակը համակարգային և բարեհաջող կերպով իրականացվում է արդեն 45 տարի:

Այդ նպատակը կարող է իրականացվել ինչպես «կոշտ» միջոցներով՝ անսպասելի անբուժելի հիվանդություններ և համաճարակներ, բնական աղետներ և հարատև պատերազմներ, այնպես էլ «նուրբ» միջոցներով՝ իրականացնելով մշակութային-արժեքային փոխակերպումներ:

Զարգացած երկրները հարաբերվում են երրորդ աշխարհի երկրների հետ՝ սոցիալ-տնտեսական աջակցությունը պայմանավորելով համակարգային այնպիսի քաղաքական և ինստիտուցիոնալ փոփոխություններով, որոնք ավանդական հասարակություններ են ներմուծում լիբերալ մշակութային արժեքների *գերակայություն*՝ էգոիզմ, գեդոնիզմ, փողի համար անզիջում մրցավազք և ինքնաիրականացում: Իսկ ընտանիքի և երեխաների գերակայությունն անցնում է երկրորդ պլան: Ակնհայտ է, որ դրանք «խանգարում» են առաջին չորսի լիակատար իրականացմանը: *Հատկապես խանգարում է երեխաների մեծ քանակը, ընդ որում՝ երիտասարդ տարիքում, երբ մարդը պետք է հաջողության հասնի փողի և ստատուսային հարցերում:*

Մշակութային փոխակերպումն ուղեկցվում է ընտանիքի պլանավորման տեխնոլոգիաների ներմուծմամբ, մասնավորապես՝ հղիության կանխարգելման և վաղ ընդհատման էժան միջոցների տարածմամբ և դրանց մասին տեղեկությունների տարածման և ուսուցման միջոցով: Դա հատկապես արդյունավետ է երրորդ աշխարհի երկրներում, որտեղ բնակչության գերակշռող մեծամասնությունն անբարեկեցիկ է:

Բնակչության և բնական աճի կրճատման տեսակետից հատուկ նշանակություն ունի սոցիալական ֆունկցիաների սեռային բաշխումը: Լիբերալ արժեքային-մշակութային համակարգի կարևորագույն բաղադրիչներից է

սեռերի միջև ֆունկցիոնալ բաժանման մերժումը, այլ կերպ՝ սեռերի էմանսիպացիան կամ «գենդերային հավասարությունը»: Եթե կինը ցանկանում է ինքնաիրականացվել լիբերալ-մշակութային արժեհամակարգում, ապա դրա, ինչպես նաև «գենդերային հավասարության» հիմքը լիբերալ արժեհամակարգում *կնոջ տնտեսական անկախությունն է, որի գրավականներն են որակյալ կրթությունը և աշխատանքային կարիերան՝ տնտեսության բարձր նիշաներում:* Այդ կոնտեքստում նպատակային-ռացիոնալ վարքը կնոջը դրդում է հետաձգել ամուսնությունը, հետաձգել ծննդաբերությունները, նվազեցնել երեխաների քանակը, ընդհուպ մինչև հրաժարումն իր երեխաներից: Եթե ծննդաբերության հետաձգման և դրա հետ կապված առողջական և ֆիզիոլոգիական պատճառներով այլևս անհնար է դառնում ծննդաբերում, ապա նրանց տրամադրության տակ են դժբախտության կամ սոցիալական պատճառներով ծնողներից անջատված երեխաները: Վճարունակների համար ներդրված է արհեստական մայրերի ինստիտուտը համապատասխան ծառայություններով:

Այդ ռազմավարությունները տալիս են իրենց արդյունքները: Բավական է դիտել, օրինակ, ՄԱԿ կամ Համաշխարհային բանկի ժողովրդագրական և սոցիալական ցուցանիշների տվյալներն աշխարհի տարբեր երկրներում՝ Հռոմեական ակումբի արդեն նշված հետազոտությունից հետո ժամանակահատվածում, ինչպես զարգացած երկրներում, այնպես էլ *երրորդ աշխարհի այն երկրներում, ուր թափանցել են ժամանակակից քաղաքակրթության մշակութային արժեքները* [9]:

Հարկ է նշել, որ երրորդ աշխարհի մեծաքանակ, մեծ խտությամբ և արագ աճող բնակչությամբ պետությունների պաշտոնական ժողովրդագրական քաղաքականությունները նպատակաուղղված են բնակչության քանակի և աճի սահմանափակմանը: Այդ են պահանջում նրանց սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականությունները:

ԽՍՀՄ-ը և, մասնավորապես ՀԽՍՀ-ն, ուներ զարգացած գիտատեխնոլոգիական մակարդակ, սակայն բնակչության սոցիալական պայմանները զիջում էին զարգացած կապիտալիստական երկրներին, քանի որ սոցիալիզմի կառուցումը սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմի ավերածությունների և տնտեսական աղետի պայմաններում, ԽՍՀՄ-ն իր ստեղծման պահից մինչև փլուզումը զարգանում էր զարգացած կապիտալիստական երկրների համապարփակ տնտեսական ճնշման և պատերազմի սպառնալիքի ներքո: 1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմի արդյունքում ԽՍՀՄ-ը կորցրեց իր ազգային հարստության 2/3-ը, մոտ 28

միլիոն մարդ, ավերվեցին 1710 քաղաք և քաղաքատիպ ավան, 70,000-ից ավելի գյուղ: Հայաստանից Հայրենական մեծ պատերազմին մասնակցեց մոտ 600,000 մարդ, որոնցից 300,000-ը չվերադարձավ:

ԽՍՀՄ փլուզումից հետո դրա կազմում գտնվող բոլոր երկրները, այդ թվում նաև Հայաստանը, վերածվեցին երրորդ աշխարհի երկրների: Բնականաբար, այդ երկրների վրա տարածվեցին երրորդ աշխարհի հետ հարաբերվելու զարգացած երկրների բոլոր հիմնական մոդելները, այդ թվում նաև *բնակչության կրճատման նպատակը և դրան հասնելու ռազմավարությունները:*

Այսինքն՝ ժողովրդագրական վիճակի զարգացման տեսակետից արդի Հայաստանում առկա է հակասական իրավիճակ:

- *Հայաստանում, մի կողմից, գլոբալ ֆինանսական ինստիտուտների և զարգացած աշխարհի երկրների համակարգային գործունեության լատենտ բաղադրիչ է Հայաստանի բնակչության կրճատումը,*
- *մյուս կողմից, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հայեցակարգով և դրանից բխող ռազմավարություններով Հայաստանում ժողովրդագրական վատ և վատթարացող ժողովրդագրական վիճակը սահմանված է որպես ազգային անվտանգության սպառնալիք, իսկ բնակչության բնական աճի խթանումը՝ ռազմավարական նպատակ:*

Այդ տեսակետից Հայաստանն էապես տարբերվում է երրորդ աշխարհի երկրների ճնշող մեծամասնությունից, որոնց համար ռազմավարական նպատակ է բնակչության և դրա կրճատումը:

Բացառությունները ժողովրդագրական և մշակութային-արժեքային գլոբալ օրինաչափությունից. Նկարագրված իրավիճակի շրջանակներում կարող է տպավորություն ստեղծվել, իբր՝ ժողովրդագրական վիճակի դինամիկայի տեսակետից առկա է երկու տարբերակ. կամ զարգացում, որը շաղկապված է լիբերալ մշակութային-արժեքային համակարգի զարգացման հետ, կամ ավանդական մշակութային-արժեքային համակարգ՝ աֆրիկյան և ասիական թերզարգացած երկրների օրինակով:

Հարց է առաջանում. կա՞ն արդյոք օրինակներ, երբ տեխնոլոգիական զարգացածությունը շաղկապված է բարձր բնական աճի հետ: Պարզվում է, որ այդպիսի օրինակներ կա՛ն, չնայած ընդամենը երեքը՝ Իսրայելը, Իռլանդիան և Իսլանդիան: Գծապատկեր 3-ում տրված է այդ երկրներում կանանց պտղաբերության գործակիցը 1960-2014թթ. ընթացքում, ըստ Համաշխարհային բանկի տվյալների:

Թվարկված երկրներից առավել ցայտուն օրինակն Իսրայելն է: Այստեղ 1992թ. կանանց պտղաբերության գործակիցը հասել էր իր նվազագույն արժեքին՝ 2.70: Սակայն Իսրայելը նպատակասլաց ժողովրդագրական քաղաքականությամբ արդյունքում 2014թ. բարձրացրել է մինչև 3.08:

Հարկ է նշել, որ Գծապատկերում Իսրայելի տվյալները ներկայացված են առանց Հորդանան գետի Արևմտյան ափի և Գազայի հատվածի բնակչության: Ընդ որում, ըստ Իսրայելի Կենտրոնական վիճակագրական բյուրոյի տվյալների, 2015թ. *Իսրայելում հրեա և արաբ կանանց պտղաբերությունը կազմել է համապատասխանաբար՝ 3.11 և 3.17, այսինքն՝ համարյա հավասարվել են* [10]:

Գծապատկեր 3

Կնոջ պտղաբերության գործակիցը Իսրայելում, Իռլանդիայում և Իսլանդիայում, 1960-2014թթ.: Իսրայելի տվյալները ներկայացված են առանց Հորդանան գետի Արևմտյան հատվածի և Գազայի հատվածի: Աղբյուրը՝ http://data.worldbank.org/indicator/SP.DYN.TFRT.IN?view=chart



Իռլանդիան և Իսլանդիան այն երկու բացառիկ եվրոպական երկրներն են, որոնք չունեն ասիական և աֆրիկյան ծագումով նշանակալի բնակչություն, սակայն կարողացել են իրենց երկրներում պահպանել կանանց պտղաբերության գործակիցը 2.15-ին մոտ տիրույթում:

Եզրակացություններ

1. Հաշվի առնելով հոդվածում ներկայացված դրույթներն ու փաստերը, նախ և առաջ անհրաժեշտ է, որպեսզի Հայաստանի կառավարությունը

հստակ կողմնորոշվի իր գերակայություններում: Մասնավորապես, *երկու փոխբացառող նպատակներից ո՞րն է ավելի կարևոր* ՝ Հայաստանում ժողովրդագրական վիճակի բարելավո՞ւմը, թե՞ ժողովրդավարություն հասկացության պոստմոդեռնիստական մեկնաբանության շրջանակներում՝ հասարակության մշակութային-արժեքային ազատականացումը:

2. Այն դեպքում, եթե սահմանվի, որ գերակա է ժողովրդագրական վիճակի բարելավումը, ապա անհրաժեշտ է կատարել հետևյալը:

3. Հարկ է սոցիոլոգիական և ժողովրդագրական փորձաքննության ենթարկել ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ օրենսդրությունը և Հայաստանում իրականացվող ռազմավարական բարեփոխումները, Հայաստանում ժողովրդագրական վիճակի վրա դրանց ազդեցության բնույթի նույնականացման նպատակով: Դրանից հետո իրականացնել անհրաժեշտ փոփոխությունները:

Սահմանել, որ Հայաստանում ժողովրդագրական վիճակի բարելավման ռազմավարությունները գտնվում են նախ և առաջ արժեքային-մշակութային ոլորտում և դրան համապատասխան՝ ՀՀ Կրթության [և գիտության], մշակույթի և երիտասարդության [և սպորտի] հարցերի նախարարությունների գործունեության ոլորտում:

Հաշվի առնելով, որ Հայաստանում մշակութային-արժեքային ոլորտում փոխակերպումների վրա հսկայական ազդեցություն ունի ինֆորմացիոն դաշտը, սահմանել այն պետական մարմինը, որը պետք է զբաղվի դրա ձևավորման և զարգացման հարցերով: Դա կարող է լինել ինչպես մշակույթի նախարարությունը, այնպես էլ որևէ նոր պետական կառավարման մարմին: Այստեղ կարևորն այդ ֆունկցիայի պարտադիր անհրաժեշտության գիտակցումը և իրականացումն է:

Հաշվի առնելով, որ ներկայում Հայաստանում մշակութային-արժեքային համակարգի պոստմոդեռնիստական մոդիֆիկացմանն է ուղղված ինֆորմացիոն բովանդակություն ստեղծող սոցիալականացման ագենտների՝ ԶԼՄ-ի և հասարակական բոլոր ոլորտներում ներգրավված հասարակական կազմակերպությունների գործունեությունը, անհրաժեշտ է նրանց հետ իրականացնել անընդհատ աշխատանք՝ ներկայացնելու և մեկնաբանելու համար այս կամ այն գործունեության ազդեցությունը Հայաստանի ազգային անվտանգության դրույթներին:

Սա պետք է կատարվի ոչ թե այդ կազմակերպություններին որևէ բան պարտադրելու կամ արգելելու նպատակով, այլ որպեսզի նրանք ընկալեն, որ հասարակության վրա բացասական ազդեցություն է գործում ոչ միայն անարդյունավետ և կոռումպացված պետությունը, այլև քաղաքացիական

հասարակության կազմակերպությունների ինչպես չգիտակցված, այնպես էլ անպատասխանատու, իսկ երբեմն նաև գիտակցված կոռումպացված գործունեությունը:

4. Սահմանել, որ ավանդական մշակութային-արժեքային համակարգի կոնտեքստում ինտենսիվ գիտատեխնոլոգիական տնտեսական զարգացումն է ունակ ապահովելու Հայաստանի բնակչության ընդհանուր բարեկեցության զարգացումը: Համապատասխանաբար պետք է մոդիֆիկացնել Հայաստանի տնտեսական զարգացման գերակայությունները՝ դրանցում ընդգրկելով ոչ միայն ինֆորմացիոն տեխնոլոգիաների (*software*), այլև ինժեներական, էլեկտրոնային, միկրո- և ռադիո էլեկտրոնային, սարքաշինության, փոքր քիմիայի, բիոտեխնոլոգիաների, գյուղատնտեսական տեխնոլոգիաների, նոր նյութերի, այդ թվում՝ շինանյութերի մշակման, այլընտրանքային էներգետիկայի ոլորտները:

Հարկ է նշել, որ ներկայում ցանկացած բարձր տեխնոլոգիական արդյունաբերական ոլորտ պարտադիր կերպով ունի իր ինֆորմացիոն-տեխնոլոգիական բաղադրիչը: Այսինքն՝ ցանկացած բարձրտեխնոլոգիական ոլորտ պատվեր է ներկայացնում ինֆորմացիոն ոլորտին՝ նպաստելով դրա զարգացմանը:

5. Մշակութային-արժեքային և բարձր տեխնոլոգիաների զարգացման կոնտեքստում է, որ կբարձրանան բնակչության անապահով շերտերի սոցիալական ապահովության և առողջության պահպանման ու վերականգնման ռազմավարություններին տրամադրվող ռեսուրսները և դրանց արդյունավետությունը Հայաստանի ժողովրդագրական վիճակի բարելավման հարցում:

6. Վերոնշյալին համապատասխան *վերամշակել ինչպես Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգը և ռազմավարությունը, այնպես էլ դրա առանձին դրույթները մանրամասնող ոլորտային ռազմավարական ծրագրերը:*

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել այն կրթական ծրագրերին և մեթոդներին, որոնք ներկայում կիրառվում են Հայաստանի նախադպրոցական, դպրոցական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության ոլորտներում՝ մշակութային-արժեքային ոլորտի վրա դրանց ազդեցության բնույթի նույնականացման տեսակետից: Դրա հետ մեկտեղ, նույն տեսակետից փորձաքննության ենթարկել դպրոցական և բուհական դասագրքերը և ծրագրերը: Հատկապես անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նախադպրոցական ուսումնական հաստատություններում՝ ինչ-

պես պետական, այնպես էլ մասնավոր և հասարակական կազմակերպությունների և հիմնադրամներին կից, կիրառվող դիդակտիկ նյութերին և դաստիարակչական մեթոդների բովանդակությանը և տեխնոլոգիաներին:

Փետրվար, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2016», ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, 2016 թ., էջ 9:
2. *Մանուկյան Ս.,* Հայաստանում արտագաղթի դիրքորոշումների դինամիկան 2012-2015թթ., «21-րդ ԴԱՐ» հանդես, թիվ 5(69), 2016, էջ 25-49:
3. *Манукян С.А.,* Технологическое развитие и демографические проблемы Армении, 21-ый ВЕК, N2 (39) / 2016, с. 7-18.
4. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն: Հավանության է արժանացել ՀՀ Նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի 2007թ. հունվարի 26-ի նիստում, http://www.mil.am/media/2015/07/827.pdf
5. Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին: Հավելված Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի ՆՀ-308-Ն հրամանագրի, http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=41116
6. Ազգային ծրագիր Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2016-2018 թվականների, http://www.parliament.am/committee_docs_5/Helth/04.03.2016LsumneriTema.pdf
7. *Медков В.М.,* Демография, Москва, ИНФРА-М, 2004, с. 274.
8. *Donella H Meadows; Jorgen Randers; Dennis L Meadows; William W Behrens,* The Limits to Growth: A Report for the Club of Rome's Project on the Predicament of Mankind. — 1. — Universe Books, 1972.
9. http://data.worldbank.org/indicator
10. http://news.israelinfo.co.il/politics/62982
11. *Մանուկյան Ս.Ս.,* «Կյանքի որակը Հայաստանում 2014», IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, 2015: Իրականացված է ՀՀ կառավարության պատվերով:

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՐՊԵՍ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ԱՃԸ ԽԹԱՆՈՂ ԳՈՐԾՈՆ

Սամվել Մանուկյան

Ամփոփագիր

Սոցիոլոգիական հետազոտությունների տվյալների և դրանց կիրառմամբ կառուցված մաթեմատիկական մոդելի հիման վրա ցույց է տրվում, որ երկարատև ժամանակահատվածում Հայաստանում բնական աճը նվազեցնող հիմնարար

գործոնն է ավանդական մշակութային-արժեքային համակարգի տեղակալումն ազատական մշակութային-արժեքային համակարգով, որի բաղադրիչներից է երեխաների պահանջմունքի կրճատումը: Հայաստանի հասարակությունում ազատական մշակութային-արժեքային համակարգի զարգացման կոնտեքստում սոցիալ-տնտեսական զարգացումը ոչ թե կբարձրացնի, այլ կնվազեցնի բնակչության բնական աճը:

СИСТЕМА ЦЕННОСТЕЙ КАК ФАКТОР СОДЕЙСТВИЯ ЕСТЕСТВЕННОМУ РОСТУ НАСЕЛЕНИЯ

Самвел Манукян

Резюме

На основе данных социологических исследований и выстроенных с их помощью математических моделей показывается, что достаточно долгое время основополагающим фактором, уменьшающим естественный прирост населения в Армении, является замещение традиционной культурно-ценностной системы либералистской культурно-ценностной системой, одним из компонентов которой является снижение потребности в детях. В армянском обществе в контексте развития либералистской культурно-ценностной системы социально-экономическое развитие приведет не к росту, а к уменьшению естественного прироста населения.

SYSTEM OF VALUES AS A FACTOR STIMULATING NATURAL POPULATION GROWTH

Samvel Manukyan

Resume

Based on a survey data and a mathematical model built on these data, it is demonstrated that in the long-term the main factor than hinders natural population growth is the replacement of traditional cultural and value system with the liberal one, which places less emphasis on procreation. In Armenian society within the context of evolution of liberal cultural and value system the socioeconomic development will not boost the natural population growth, but will slow it down.

ՀՏԴ 378:005+378:330.101

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ռոբերտ Խաչատրյան[*], *Ֆրիդա Հակոբյան*[**]

Բանալի բառեր՝ կրիտիկական ենթակառուցվածք, ենթակառուցվածքների տաքսոնոմիա, կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանություն, Կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության ազգային հանձնաժողով (ԿԵՊԱՀ), ազգային անվտանգություն, մարդկային կապիտալ, բարձրագույն կրթության համակարգ:

Յուրաքանչյուր երկրի համար վճռորոշ նշանակություն ունեն ենթակառուցվածքների զարգացումն ու պահպանումը (ներառյալ պաշտպանությունը), քանզի վերջիններս նախադրյալներ են ստեղծում տնտեսության հիմնական ճյուղերի, հետևապես նաև տնտեսական կայուն աճի ապահովման համար: Սույն հոդվածի հիմնական նպատակն է համակարգված կերպով ներկայացնել «ենթակառուցվածք» հասկացության, «կրիտիկական ենթակառուցվածք» եզրույթի սահմանումները, կրիտիկական ենթակառուցվածքների հիմնական շրջանակն ու բաղկացուցիչները, այդ ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանությանն ուղղված համակարգային մի քանի մոդելներ, նկարագրել բարձրագույն կրթության համակարգի դերակատարությունն ազգային կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանության գործընթացում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ենթակառուցվածք» եզրույթի վերաբերյալ դեռևս չկա տնտեսագիտական միասնական մեկնաբանություն մասնագիտական գրականության մեջ [1, էջ 366], հարկ է նախ և առաջ անդրադառնալ այս եզրույթի հիմնական մեկնաբանություններին և սահմանումներին: 1980-ական թթ. «ենթակառուցվածք» հասկացությունը ԱՄՆ-ում

[*] Բ.գ.թ., դոցենտ, ԵՊԼՀ Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի վարիչ, Որակի ապահովման կենտրոնի ղեկավար:
[**] ԵՊԼՀ Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի ասպիրանտ:

ենթադրում էր միջոցների և ծառայությունների ամբողջություն, որն անհրաժեշտ է հասարակության ֆունկցիոնալության (գործառության) ապահովման համար՝ ներառելով տրանսպորտային, հաղորդակցման, ջրամատակարարման համակարգերը, էներգահամակարգերը, ինչպես նաև հանրային հաստատությունները՝ դպրոցներ, բանտեր, հիվանդանոցներ և փոստեր:

Ենթակառուցվածքների զարգացումն ու պահպանումն անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծում տնտեսության հիմնական ճյուղերի (ըստ ուղղահայաց կտրվածքի)՝ գյուղատնտեսության, արդյունաբերության (ծանր, թեթև, սննդի, քիմիական և այլն), շինարարության, առևտրի, ծառայությունների, զբոսաշրջության զարգացման և միջճյուղային տնտեսական կապերի հաստատման համար: Հարկ է նշել, որ ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ տնտեսության ճյուղերը տարանջատվում են նաև ըստ հորիզոնական կտրվածքի.

- առաջնային, որը ներառում է հումքային արտադրություն (փայտ, մետաղային արտադրություն, երկաթ),
- երկրորդային, որը ներառում է վերջնական արտադրանքի պատրաստման հիմնական մանուֆակտուրան,
- երրորդային, որը ներառում է ժամանակակից ծառայությունները:

Ներկայումս ենթակառուցվածքը բնութագրվում է որպես տնտեսության կառուցվածքն ու ճյուղերը սպասարկող ենթահամակարգ, որը հիմնականում միտված է պետության գործառույթների և պետության կողմից պլանավորված գործընթացների իրականացման ապահովմանը [2, p. 145]:

Այսպիսով, ենթակառուցվածքները բնութագրվում են որպես տարածաշրջանը, երկիրը կամ մարզը սպասարկող հիմնարար միջոցներ և համակարգեր, որոնք անհրաժեշտ են տնտեսության լիարժեք և արդյունավետ գործառության ապահովման համար: «Ենթակառուցվածք» հասկացության մեջ տարանջատվում են տեխնիկական համակարգերի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են ճանապարհները, կամուրջները, երկաթգծերը, ջրամատակարարման (խմելու ջուր և ոռոգում) և ջրահեռացման համակարգերը, էլեկտրահամակարգերը (կայաններ, հոսանքագծեր), օդանավակայանները, նավահանգիստները, հանրային կառույցները, հիվանդանոցները, բանտերը (կալանավայրերը, ուղղիչ հիմնարկները), ատոմակայանները, ազգային անվտանգության համակարգը, հեռահաղորդակցման համակարգերն ու կապի միջոցները:

Հարկ է նշել, որ հաճախ ենթակառուցվածքների շարքին են դասվում նաև կրթությունը, գիտությունն ու առողջապահությունը:

Ենթակառուցվածքները հիմնականում պետության՝ ի դեմս կառավարության, սեփականությունն են և ենթադրում են տնօրինում վերջինիս կողմից որպես պետական սեփականություն, ինչպես նաև պետական և մասնավոր հատվածների միջև համագործակցության պարագայում ենթակառուցվածքները, անկախ դրանց սեփականության ձևից, կարող են հանձնվել մասնավոր հատվածի սուբյեկտների շահագործմանն ու սպասարկմանը:

Անհրաժեշտ է նախ անդրադառնալ ենթակառուցվածքների հիմնական դասակարգմանը: Ըստ իրենց խոցելիության, հասարակական և պետական կարևորության աստիճանի՝ ենթակառուցվածքները կարելի է դասակարգել հետևյալ կերպ՝ հիմնարար ենթակառուցվածք, կարևոր ենթակառուցվածք, կրիտիկական ենթակառուցվածք:

Ենթակառուցվածքների դասակարգումը (տաքսոնոմիա) կատարելիս հաշվի են առնվում նաև այդ ենթակառուցվածքների ուղղակի և անուղղակի ազդեցությունն ու չափացույցը, դրանց կարևորությունն ու դերը տնտեսության և հասարակության կայուն գործառության, ինչպես նաև ազգային անվտանգության ապահովման գործընթացներում: Հիմնարար ենթակառուցվածքներն այն համակարգերն են (օրինակ՝ դպրոցներ, գրադարաններ), որոնց գործունեության խաթարումն ազգային անվտանգության տեսանկյունից ուղղակի սպառնալիքներ չի ներկայացնում, սակայն դրանք կարող են դառնալ կարևոր և նույնիսկ կրիտիկական՝ միայն հատուկ լրացուցիչ գործառույթներ իրականացնելու անհրաժեշտության դեպքում: Մինչդեռ կարևոր ենթակառուցվածքները հատուկ նշանակություն ունեն տնտեսության և հասարակության գործառության ապահովման համար. դիտարկվում են որպես բարձր կատարողականությամբ ենթակառուցվածքներ՝ հասարակության բարեկեցության և տնտեսության բնականոն զարգացման համար ապահովելով անհրաժեշտ նախադրյալներ: Կարևոր ենթակառուցվածքներն այն համակարգերն են, որոնց պահպանումն ու անվտանգության պաշտպանությունը երաշխավորում են բնակչության նորմալ կենսագործունեությունը կամ հասարակական և պետական անվտանգությունը:

Կրիտիկական ենթակառուցվածքներն այնպիսի համակարգեր են, որոնց բնականոն գործունեության ընթացքի խափանումը կարող է բնակչության կյանքի կամ առողջության համար անմիջական՝ ռադիացիոն, հիդրոդինամիկ, քիմիական, հրդեհապայթյունավտանգ և այլ սպառնալիք ներկայացնել: Ստորև բերվում են կրիտիկական ենթակառուցվածքների սահմանման հիմնական չափանիշները.

- բացասական հետևանքների տևողությունը և ազդեցությունը,
- բացասական հետևանքների բնույթը՝ մարդկային, նյութական, քաղաքական, տնտեսական, ինչպես նաև դրանց մեծության տիրույթը՝ փոքր, միջին և խոշոր,
- բացասական հետևանքների տարածքային ընդգրկվածությունը՝ տեղական, մարզային, ազգային, տարածաշրջանային, միջազգային:

Ներկայումս զարգացած երկրներում ազգային կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանության հիմնահարցերի առաջադրումն ու քննարկումը համարվում են կարևորագույն խնդիր: Այդ ենթակառուցվածքների պաշտպանությանն ուղղված համակարգային քայլերի բարդությունն ու փոխկապակցվածությունը նկարագրելու համար հարկ է նախ ներկայացնել «կրիտիկական ենթակառուցվածք» և «կրիտիկական ենթակառուցվածքի պաշտպանություն» հասկացությունների սահմանումները, ընդհանուր նկարագրերն ու շրջանակները:

Չնայած առկա բազմաթիվ սահմանումներին՝ համընդհանուր կիրառության կամ լայնածավալ գործածության մեջ դեռևս չկա մեկ համընդհանուր մոտեցում. հաճախ կրիտիկական ենթակառուցվածքը նկարագրվում է որպես «այնպիսի համակարգ, որի թերի գործառությունը, անկատարությունը, թերզարգացածությունը, խափանումը կամ ոչ պատշաճ շահագործումը նույնիսկ շատ կարճ ժամանակահատվածում բացասաբար է ազդում երկրի տնտեսության վրա՝ առաջացնելով տնտեսությանն ու հասարակությանը սպառնացող ռիսկեր և վտանգներ» [3, pp. 6-37]:

«Կրիտիկական ենթակառուցվածք» եզրույթն օգտագործվում է՝ հատկորոշելու և սահմանելու այն հիմնարար համակարգերը, որոնք կարևոր են տնտեսության և հասարակության գործառության և կենսունակության ապահովման համար: Կրիտիկական ենթակառուցվածքը բնութագրվում է որպես մի համակարգ կամ պետական սեփականություն, որի անկատարությունը, թերզարգացածությունը, խափանումը կամ ոչ պատշաճ շահագործումը հանգեցնում են աղետալի հետևանքների երկրի պաշտպանության, ազգային անվտանգության, առողջապահության և տնտեսության ոլորտներում:

Կրիտիկական ենթակառուցվածքները նկարագրվում են որպես ֆիզիկական օբյեկտներ, նյութական միջոցներ, տեղեկատվական և տեխնիկական համակարգեր, ենթակառուցվածքային այնպիսի բաղադրիչներ, որոնց խափանումը բացասաբար է ազդում հասարակության, տնտեսության, պետական կառավարման գործառույթների իրականացման վրա:

Սույն հոդվածի շրջանակներում առաջարկվում է պետության «կրիտիկական ենթակառուցվածքները» սահմանել որպես ֆիզիկական օբյեկտների, կառույցների և նյութական միջոցների, ցանցերի, տեղեկատվական համակարգերի, տեխնոլոգիաների և ծառայությունների ամբողջություն, որը կենսական է պետության հիմնական գործառույթների իրականացման, կենսագործունեության բոլոր ոլորտների, ազգային և տնտեսական անվտանգության, առողջապահության, տնտեսական բարեկեցության և տնտեսության բնականոն զարգացման, պետական կառավարման արդյունավետ գործունեության ապահովման համար: Կրիտիկական են համարվում այն ենթակառուցվածքները, որոնց գործունեության թերի գործառությունը, անկատարությունը, թերզարգացածությունը, խափանումը կամ ոչ պատշաճ շահագործումն ու սպասարկումը, ոչնչացումը բացասաբար են ազդում սպառողական և արդյունաբերական ապրանքների արտադրության ու ծառայությունների մատուցման, պետության գործառույթների իրականացման վրա և ուղղակի սպառնալիք են անձի, հասարակության և պետության անվտանգության համար:

Առաջարկվում է «կրիտիկական ենթակառուցվածք» հասկացությունը տարանջատել հետևյալ համակարգերի.

- էներգամատակարարման համակարգեր (էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգեր, ատոմային էլեկտրակայաններ, ջերմային էլեկտրակայաններ և հիդրոէլեկտրակայաններ),
- գազամատակարարման համակարգ,
- հեռահաղորդակցություն, կապի միջոցներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր, ջրամբարներ,
- սննդարդյունաբերություն և մատակարարում,
- հանրային առողջապահություն և առողջապահական համակարգ (հիվանդանոցներ, շտապօգնություն),
- տրանսպորտային համակարգեր (երկաթգծեր, օդանավակայաններ, վառելիքի մատակարարման միավորներ և կայաններ),
- ֆինանսաբանկային համակարգ,
- անվտանգության համակարգ (ազգային անվտանգություն, ոստիկանություն, արտակարգ իրավիճակների կառավարման մարմիններ),
- հանրապետական և միջպետական նշանակության ավտոճանապարհներ և կամուրջներ,
- բանտեր (կալանավայրեր, ուղղիչ հիմնարկներ):

Այսպիսով, սրանք այն հիմնական կրիտիկական ենթակառուցվածքներն են, որոնց գործառության խաթարումը հանգեցնում է զգալի սոցիալ-տնտեսական ճգնաժամերի, որոնք կարող են խափանել կամ վտանգ հանդիսանալ հասարակության կայունության համար ու դրանով իսկ ստեղծել սպառնալիքներ պետության ազգային անվտանգության, ինչպես նաև դրա առանցքային տեսակների՝ էներգետիկ, տնտեսական, կրթական, ժողովրդագրական անվտանգության համար:

Համաձայն «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի՝ ազգային անվտանգությունը պետության և հասարակության այնպիսի կացությունն է, երբ ապահովված են անձի, հասարակության և պետության անվտանգությունը, երկրի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնականոն զարգացումը, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, շրջակա միջավայրի պաշտպանությունը ներքին և արտաքին սպառնալիքներից:

Հետևաբար, ազգային անվտանգությունն ուղղված է առկա ռեսուրսների և հնարավորությունների հաշվարկմամբ քաղաքական, տնտեսական, սոցիալական, ռազմական, տեխնածին և ինֆոգեն (տեղեկատվածին), բնապահպանական և այլ բնույթի արտաքին և ներքին սպառնալիքների դիմակայմանը, հաղթահարմանը, ինչպես նաև ռիսկերի կառավարմանը:

Սակայն հարկ է նաև նշել, որ «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքից մեջբերված՝ ազգային անվտանգության վերը ներկայացված սահմանումը չի անդրադառնում կրիտիկական ենթակառուցվածքների և դրա բաղադրիչների անվտանգության պաշտպանության հիմնահարցերին:

«Կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանություն» հասկացությունը ներառում է պետական և մասնավոր հատվածների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխհամաձայնեցված ռազմավարական պլանավորման արդյունքում մշակված գործողությունների և միջոցառումների ամբողջություն՝ ուղղված այն համակարգերի պահպանմանը, որոնք վճռորոշ նշանակություն ունեն ազգային անվտանգության, տնտեսության և հասարակության կայունության ապահովման համար:

Կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության գործընթացը ենթադրում է նաև համապատասխան կանխարգելիչ միջոցառումների իրականացում՝ ուղղված այնպիսի համակարգերի պահպանմանը, որոնք

համարվում են կրիտիկական իրենց անվտանգության, գործառության, տնտեսական և հասարակական կայունության ապահովման տեսակետից:

Կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանությունը հնարավոր է դառնում հետևյալ հիմնական համակարգված և հաջորդական ենթագործառույթների իրականացման դեպքում՝ պատրաստականության գնահատում, իրազեկվածության ապահովում, արտակարգ իրավիճակների և իրադարձությունների հաջորդականության կանխատեսում, անհրաժեշտ ռեսուրսների կուտակում և համակարգային կիրառում՝ անկախ այդ գործընթացների ծախսատար և ժամանակատար լինելու հանգամանքից:

Կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանության կարևորությունը հատկորոշելու համար հոդվածում անդրադարձ է կատարվում նաև կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանությանն ուղղված մի քանի մոդելների ուսումնասիրմանը՝ որպես լավագույն համակարգային մոդելներ ներկայացնելով ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի, Կանադայի, Եվրոպական միության օրինակները:

ԱՄՆ մոդել: ԱՄՆ-ում Կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության ծրագիրը գործում է 1996 թվականից, երբ առանձնացվեցին հետևյալ ութ կրիտիկական ենթակառուցվածքները՝ հեռահաղորդակցություն, էներգամատակարարում, տրանսպորտ, նավթարդյունաբերություն, ֆինանսաբանկային համակարգ, ջրամատակարարում, սպասարկում արտակարգ իրավիճակներում (ներառյալ ոստիկանության, առողջապահական և հրշեջ ծառայությունները), կառավարության գործունեության անխափան շարունակելիության ապահովում:

1990-ական թթ. ԱՄՆ-ում միջազգային ահաբեկչությունների թվաքանակի աճով պայմանավորված՝ «ենթակառուցվածք» եզրույթը վերաասահմանվեց՝ հաշվի առնելով ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրները: ԱՄՆ կառավարությունը կրիտիկական ենթակառուցվածքները նկարագրում է որպես ֆիզիկական և տեղեկատվական համակարգեր, որոնք էական դերակատարություն ունեն տնտեսության և կառավարության գործառույթների իրականացման համար, իսկ կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանությունը՝ որպես մի գործընթաց, որն ընդգրկում է այդ ենթակառուցվածքների անվտանգությանը սպառնացող տեխնածին և բնական աղետների կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:

ԱՄՆ նախագահի (Բիլ Քլինթոն) հրամանով 1996թ. ձևավորված Կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության հանձնաժողովի

1997թ. ներկայացրած զեկույցն ԱՄՆ տնտեսության զարգացումը, ռազմական և քաղաքական հզորությունը պայմանավորում էր ազգային կրիտիկական ենթակառուցվածքների շարունակական գործառությամբ[1]: Կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության հանձնաժողովի առջև դրված հիմնական խնդիրներն էին՝ իրականացնել անհրաժեշտ համակարգային վերլուծություն՝ ուղղված ազգային կրիտիկական ենթակառուցվածքների խոցելիության գնահատմանն ու այդ ենթակառուցվածքների անվտանգությանը սպառնացող ռիսկերի վերլուծությանը՝ մասնավորապես կենտրոնանալով կիբեռանվտանգության խնդիրների վրա, առաջադրել ազգային կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանությանն ուղղված քաղաքականություն և գործողությունների պլան, ինչպես նաև համապատասխան օրենսդրական կարգավորումներ: Հանձնաժողովի առաջարկների քննարկումն ու վերլուծությունը հիմք հանդիսացան ԱՄՆ նախագահի կողմից երկու որոշումների[2] ընդունման համար: Որոշումներից առաջինն[3] ուղղված էր ահաբեկչությունների կանխմանը, իսկ մյուսը[4]՝ կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանությանը:

ԱՄՆ կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության գործընթացի ուսումնասիրման ընթացքում առանձնացվել է նաև Տեղեկատվության տարածման և վերլուծության կենտրոնների մոդելը: Վերջիններս ստեղծվել են ԱՄՆ այն ժամանակվա նախագահի (Բիլ Քլինթոն) որոշման[5] ընդունման արդյունքում, և վերահսկողությունն իրականացվում է անմիջապես նախագահի կողմից, որը շեշտադրում է այդ ոլորտի առանցքայնության գիտակցումը կառավարման համար: Այս կենտրոնները միտված են վտանգների վերաբերյալ պետական և մասնավոր հատվածների միջև տեղեկատվության տարածմանն ու նպատակային համագործակցության բարելավմանը: Կենտրոնների հիմնական գործառույթներն են՝ տեղեկատվության հավաքագրումն ըստ ոլորտների, դրանց վերլուծությունն ու տարածումը պետական և մասնավոր հատվածների շրջանում: Կարևորագույն գործառույթներից է նաև վիճակագրական տվյալների համակարգի մշակումը, ինչպես նաև մասնավոր հատվածում արձանագրված պատահարների մասին զեկուցումը կառավարությանը:

[1] USA President's Commission on Critical Infrastructure Protection 1997:3.
[2] Presidential Decision Directive 62, Presidential Decision Directive 63.
[3] Presidential Decision Directive 62, 1998.
[4] Presidential Decision Directive 63, 1998.
[5] Նույն տեղում:

Ներքին անվտանգության դեպարտամենտ[1] ձևավորելու հրամանը ԱՄՆ նախագահի (Ջորջ Բուշ) կողմից ստորագրվել է ԱՄՆ-ում 2001թ. տեղի ունեցած ահաբեկչությունից հետո: Այդ դեպարտամենտի հիմնական գործառույթը տարածքային անվտանգությանն ու կրիտիկական ենթակառուցվածքների պահպանմանն ուղղված գործողությունների համակարգումն է: Ներքին անվտանգության դեպարտամենտի գործունեության իրականացման համար հիմք է Ազգային անվտանգության մասին ԱՄՆ օրենքը՝ ընդունված 2002թ.:

ԱՄՆ ներքին անվտանգությունը պահանջում է մշտադիտարկում և իրազեկում, սահմանային և տրանսպորտային անվտանգության ապահովում, կրիտիկական ենթակառուցվածքների և օբյեկտների պաշտպանություն, աղետների ռիսկերի կանխում, արտակարգ իրավիճակների կանխատեսում:

2003թ. կրիտիկական ենթակառուցվածքների շրջանակն ընդլայնվեց՝ ներառելով նաև սննդի, առողջապահության և քիմիական արտադրության ոլորտները: Իսկ արդեն 2014թ. մշակվեց Չափանիշների և տեխնոլոգիաների ազգային ինստիտուտի կիբեռանվտանգության շրջանակը, որի չափորոշիչների և սկզբունքների հիման վրա սահմանվել են հետևյալ տասնվեց կրիտիկական ենթակառուցվածքները՝ քիմիական արտադրություն, առևտրային ծառայություններ, հեռահաղորդակցություն, կրիտիկական արտադրություն, պատնեշների սեկտոր (տվյալ հատվածի սպասարկում), արդյունաբերական հենքի պաշտպանություն, սպասարկում արտակարգ իրավիճակներում, էներգամատակարարում, ֆինանսաբանկային համակարգ, գյուղատնտեսություն և սնունդ, ջրամատակարարում, հանրային առողջապահություն, կառավարություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, տրանսպորտ, ատոմակայաններ և արտանետումներ:

ԱՄՆ ազգային անվտանգությունն ու տնտեսական զարգացումը պայմանավորված են տնտեսական ոլորտի և հասարակական կյանքի բարելավման համար անհրաժեշտ կրիտիկական ենթակառուցվածքների անխափան գործառությամբ, որոնց սպառնում են բնածին (երկրաշարժ, սողանք, հրաբուխ, ջրհեղեղ) և մարդածին (ահաբեկչություն, պատերազմ, ռմբակոծություն, աղտոտում) աղետներ, ինչպես նաև այլ ֆորսմաժորային իրավիճակներ:

ԱՄՆ կառավարությունը, ահաբեկչությունը բնորոշելով որպես ամենավտանգավոր մարդածին աղետ, ստեղծել է դրա կանխարգելմանն ուղղ-

[1] Department of Homeland Security (դեպարտամենտը նախարարությունն է ԱՄՆ-ում):

ված զարգացած համակարգ, որը ներառում է համապատասխան օրենսդրական կարգավորումներ, անհրաժեշտ տեխնիկական և ծրագրային ապահովում, ինչպես նաև անվտանգության ծառայության մարմինների շարունակական կրթության ֆինանսավորում: Չնայած ԱՄՆ անվտանգության կառավարման համակարգի գործառույթների ապահովումն իրականացվում է կենտրոնացված մակարդակով՝ Սպիտակ տան գործունեության շրջանակներում, այնուամենայնիվ, պատասխանատվությունը նաև հավասարապես բաշխված է մասնավոր հատվածի և տեղական ինքնակառավարման մարմինների միջև:

2003թ. ԱՄՆ կառավարությունն ընդունել է Կրիտիկական ենթակառուցվածքների ֆիզիկական պաշտպանության ազգային ռազմավարությունը, որը նախանշում է կրիտիկական ենթակառուցվածքների պահպանման հիմնական նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև առաջադրում այն հիմնական սկզբունքները, որոնք անհրաժեշտ են երկրի պաշտպանության, ազգային անվտանգության, առողջապահության և տնտեսության ոլորտներին:

ԱՄՆ կառավարությունը նաև կարևորում է կրիտիկական ֆիզիկական ենթակառուցվածքների անվտանգության պահպանման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգերի պաշտպանությունը, քանի որ վերջիններս մեծ դերակատարություն ունեն հեռահաղորդակցության, ֆինանսական ծառայությունների, արտադրության, ջրամատակարարման, առողջապահության, տրանսպորտի անխափան գործառության ապահովման գործընթացներում[1]:

Կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգությունն ու սպառնալիքների նկատմամբ պատրաստականությունը պահանջում են ռիսկերի գնահատման գործընթացում և կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանությանն ուղղված նախաձեռնություններում պետական ու մասնավոր հատվածների միջև արդյունավետ համագործակցության ապահովում: Կրիտիկական ենթակառուցվածքների շահառուների խումբը կազմում են կրիտիկական ենթակառուցվածքների սեփականատերերն ու առանցքային շահագործողները, պետական կառավարման տարբեր մակարդակների պաշտոնյաները և հասարակության այն խմբերի ներկայացուցիչները, որոնք գիտակցում են կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության ապահովման կարևորությունը:

[1] USA Executive Order 13231 of October 16, 2001, https://www.dhs.gov/xlibrary/assets/executive-order-13231-dated-2001-10-16-initial.pdf

2001թ. հոկտեմբերի 16-ին ձևավորվել է Ազգային ենթակառուցվածքների խորհրդատվական մարմինը, որն իր գործառույթներն իրականացնում է ԱՄՆ Ազգային անվտանգության ծառայության ենթակայության ներքո: ԱՄՆ նախագահի նշանակած անդամներից բաղկացած այս խորհուրդը (անդամների թվաքանակը չպետք է գերազանցի երեսունը) կազմված է պետական և մասնավոր հատվածների, բուհական համակարգի, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներից: Այս խորհրդատվական մարմինը պատասխանատու է պետական, մասնավոր հատվածների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցության բարելավման համար: ԱՄՆ Ազգային ենթակառուցվածքների խորհրդատվական մարմինը կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանության գործընթացում պարտավորություններ ստանձնած գործակալությունների ղեկավարներին խորհրդատվություն է տրամադրում այնպիսի քաղաքականությունների և ռազմավարությունների վերաբերյալ, որոնք առնչվում են ռիսկերի գնահատմանն ու կառավարմանը, տեղեկատվության տարածմանը, պետական և մասնավոր հատվածների միջև պարտականությունների և իրավունքների հստակեցմանն ու համագործակցության ապահովմանը:

Ինչպես արդեն նշվել է, ԱՄՆ կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանության գործընթացում պետական և մասնավոր հատվածները համագործակցում են՝ կանխելու և նվազեցնելու կրիտիկական ենթակառուցվածքների գործառությանը սպառնացող ռիսկերը: Ազգային ենթակառուցվածքների խորհրդատվական մարմնի կազմում ներառված անդամ ընտրվում են ոլորտի առաջատար համարվող մատակարար ընկերություններից՝ հաշվի առնելով պատվիրատուների արձագանքները և կատարողական առանցքային ցուցանիշները: Հարկ է նշել, որ յուրաքանչյուր կազմակերպությունից որպես այս խորհրդի անդամներ ընտրվում են վերադաս օղակի ղեկավարները: 2011թ. տվյալների համաձայն՝ Ազգային ենթակառուցվածքների խորհրդատվական մարմնի կազմում ընդգրկված հիմնական դերակատարներն են տեղական ինքնակառավարման մարմինների (*New Mexico, New York*), սննդի (*ConAgra Food*), փոխադրումների և սուրհանդակային ծառայությունների (*FedEx*), օդային փոխադրումների (*Southwest Airlines*), երկաթգծային ընկերության (*BNSF Railway Company*), համալսարանի (*James Madison University*) և պետական ու մասնավոր ընկերությունների այլ ներկայացուցիչներ:

Քանի որ սույն հոդվածի շրջանակներում ուսումնասիրվում է ազգային կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության ապահովման գործընթացում բարձրագույն կրթության դերակատարությունը, պետք է անդրադառնալ վերը նշված խորհրդի կազմում ընդգրկված հետազոտական համալսարանի (*James Madison University*) օրինակին: Վերջինիս հետ համագործակցությունը միտված է ազգային կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների խոցելիության նվազեցմանը՝ ընդլայնելով համալսարանում տեղեկատվական անվտանգության վերաբերյալ դասընթացների շրջանակը, ինչպես նաև պատրաստելով տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգության ապահովման որակյալ մասնագետներ:

Ակնհայտ է, որ նոր գիտելիքի, ինչպես նաև մարդկային կապիտալի ստեղծման գործընթացներում համալսարանները կարևոր դերակատարություն ունեն. դրանք զբաղվում են ոչ միայն գիտելիքի փոխանցմամբ և տարածմամբ, հասարակական խնդիրները լուծելու համար նոր գիտելիքի ստեղծմամբ և գործադրմամբ, այլ նաև այնպիսի մարդկային կապիտալի ձևավորմամբ, որն ունակ է այդ գիտելիքները կիրառել՝ ի նպաստ տնտեսության զարգացման: Տնտեսությունը համարվում է գիտելիքի վրա հիմնված, երբ գիտելիքը և մասնագիտական հմտությունները հանդես են գալիս որպես զարգացման կարևորագույն ռազմավարական ռեսուրսներ, իսկ պետական կառավարման, տնտեսական, սոցիալական և այլ ոլորտների նպատակներն իրականացվում են գիտելիքի, գիտահետազոտական վերլուծությունների և փոխգործակցության շնորհիվ: Այսինքն՝ այս համատեքստում բարձրագույն ուսումնական հաստատությունների դերակատարությունը դրսևորվում է գիտական և հետազոտական արդյունքների ստեղծմամբ, մտավոր և մարդկային կապիտալի զարգացմամբ և դրա արդյունավետ օգտագործմամբ:

Ուսումնասիրությունը փաստում է, որ քսան և ավելի տարիների ընթացքում ԱՄՆ ազգային կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության բավական զարգացած համակարգ է ձևավորել:

Հարկ է նշել նաև, որ Արևմտյան Եվրոպայի երկրները նույնպես առաջիններից էին, որ սկսեցին զբաղվել կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանության հիմնախնդիրներով: Ստորև որպես լավագույն օրինակ ներկայացված է նաև Մեծ Բրիտանիայի՝ կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանության մոդելը:

Մեծ Բրիտանիայի մոդել: Մեծ Բրիտանիան ազգային կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության հիմնախնդիրների նկատմամբ ռազմավարական մոտեցում է որդեգրել 1999 թվականից, երբ ստեղծվեց

Ազգային ենթակառուցվածքների անվտանգության համակարգման կենտրոնը, որի հիմնական գործառույթն էր պետության և հասարակության գործունեության համար էական նշանակություն ունեցող կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանությանն ուղղված միջոցառումների և գործողությունների համակարգումը: Այդ ենթակառուցվածքների շարքին էին դասվում էներգամատակարարումը, ջրամատակարարումը, սննդի արտադրությունն ու մատակարարումը, տրանսպորտը, առողջապահությունը, հեռահաղորդակցությունը և ֆինանսաբանկային համակարգը:

Մեծ Բրիտանիայի ենթակառուցվածքների համակարգը բավական բարդ կառուցվածք ունի՝ բաղկացած այնպիսի համակարգերից, որոնց գործառության արդյունավետությունը փոխկապակցված է: Մեծ Բրիտանիայի կառավարությունը համագործակցում է բուհական համակարգի, ինչպես նաև մասնավոր հատվածի հետ՝ միտված ենթակառուցվածքների զարգացման առավել համակարգված և արդյունավետ մեթոդների մշակմանն ու կիրառմանը, որոնք կնպաստեն ներդրումների ռազմավարական պլանավորմանն ու եկամտի ավելացմանը[1]:

Մեծ Բրիտանիայի կառավարությունը կրիտիկական ենթակառուցվածքը սահմանում է որպես ծառայությունների և համակարգերի ամբողջություն, որը կարևոր նշանակություն ունի երկրի քաղաքական, տնտեսական և սոցիալական անվտանգության համար, և որի մասնակի կամ ամբողջական ոչնչացումը լուրջ ազդեցություն է ունենում ազգային տնտեսության, հասարակության և կառավարության գործունեության վրա:

Մեծ Բրիտանիայի կրիտիկական ենթակառուցվածքները հետևյալն են՝ հեռահաղորդակցություն, սպասարկում արտակարգ իրավիճակներում, էներգամատակարարում, ֆինանսներ, սննդի արտադրություն և մատակարարում, տրանսպորտ, կառավարություն և հանրային ծառայություն, առողջապահություն, հանրային անվտանգություն:

2007թ. Մեծ Բրիտանիայում ձևավորված Ազգային ենթակառուցվածքների պաշտպանության կենտրոնը տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն և ֆիզիկական անվտանգության վերաբերյալ խորհրդատվական ծառայություններ այն կազմակերպություններին, որոնք ձևավորում են Մեծ Բրիտանիայի ազգային ենթակառուցվածքների շրջանակը: Ազգային ենթակառուցվածքների պահպանման կենտրոնը նպաստում է ահաբեկչությունների և սպառնալիքների նկատմամբ այդ ենթակառուցվածքների խո-

[1] UK National Infrastructure Plan 2014, https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/381884/2902895_NationalInfrastructurePlan2014_acc.pdf

ցելիության նվազեցմանը: Կենտրոնի գործունեությունը միտված է ազգային կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանությանը, որոնք ապահովում են Մեծ Բրիտանիայում կարևորագույն ծառայությունների շարունակական մատուցումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ենթակառուցվածքներում կատարվող ներդրումներն ուղղակիորեն կարող են նպաստել կայուն տնտեսական աճի ապահովմանը, Մեծ Բրիտանիան ներդրումներ կատարելիս հաշվի է առնում նախ ենթակառուցվածքների եկամտաբերության աստիճանը: Մեծ Բրիտանիայի կառավարությունը մշակել և կիրառում է ենթակառուցվածքների ներդրման գործընթացում պետական և մասնավոր հատվածների միջև համագործակցության մոդել[1]:

2010թ. Մեծ Բրիտանիայի կառավարությունն ընդունել է Ազգային ենթակառուցվածքների պլանը՝ առանձնացնելով հետևյալ հիմնական ենթակառուցվածքային հատվածները՝ տրանսպորտ, էներգամատակարարում, հեռահաղորդակցություն, գիտություն, ջրամատակարարում, ջրհեղեղից պաշտպանություն, արտանետումներ[2]:

Ստորև ներկայացված է նաև Կանադայի կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության գործընթացի հիմնական նկարագիրը: Պետք է նշել, որ ժամանակագրական առումով Կանադան ավելի ուշ է սկսել զբաղվել այդ ենթակառուցվածքներին առնչվող հիմնահարցերի կարգավորմամբ:

Կանադայի մոդել: Կանադայում կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության գործընթացի իրականացման հիմքը Կրիտիկական ենթակառուցվածքների ազգային ռազմավարությունն է (2009թ.), որի հիմնական նպատակն է ստեղծել «ավելի ապահով, անվտանգ և դիմացկուն Կանադա»:

Կանադայում բնածին (երկրաշարժ, սողանք, հրաբուխ, ջրհեղեղ) և մարդածին (պատերազմ, ռմբակոծություն, ահաբեկչություն, աղտոտում) աղետների աճը կարող է հանգեցնել կարևորագույն համակարգերի ոչնչացմանը: Հետևաբար, այս ռազմավարության էական նպատակներից է համակարգված մոտեցում ցուցաբերել ռիսկերի վերլուծության, գնահատման և կառավարման գործընթացներում, որը կնպաստի երկրում կրիտիկական ենթակառուցվածքների խոցելիության նվազեցմանը:

Այս ռազմավարությունում առանձնացվում են հետևալ տասը կրիտիկական ենթակառուցվածքները՝ էներգամատակարարում, ֆինանսներ,

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

սննդի արտադրություն և մատակարարում, տրանսպորտ, կառավարություն, տեղեկատվություն և հեռահաղորդակցություն, առողջապահություն, ջրամատակարարում, անվտանգություն, արտադրություն:

Վերոնշյալ ռազմավարությունը կրիտիկական ենթակառուցվածքը նկարագրում է որպես «միջոցների, համակարգերի, ցանցերի, տեխնոլոգիաների և ծառայությունների ամբողջություն, որը կարևոր է բնակչության առողջության, անվտանգության, ապահովության, տնտեսական զարգացման և կառավարության արդյունավետ գործունեության համար»:

Ի տարբերություն ԱՄՆ կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության գործընթացի, որում ընդգրկված են նաև բարձրագույն ուսումնական հաստատության ներկայացուցիչներ, Կանադայում կրիտիկական ենթակառուցվածքների ֆորմալ պաշտպանության գործընթացում պատասխանատվությունը բաշխված է դաշնային, նահանգային և տարածքային կառավարման մարմինների, կրիտիկական ենթակառուցվածքների սեփականատերերի՝ իբրև անվտանգության առաջնային պատասխանատուների, միջև:

Կանադայի կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության հիմնական նպատակներն են պետական և մասնավոր հատվածների միջև համագործակցության խթանումը, տեղեկատվության տարածումը կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության գործընթացում ներգրավված սուբյեկտների շրջանում, ինչպես նաև բնածին և մարդածին աղետների ռիսկերի վերլուծությունն ու կառավարումը:

Անդրադառնալով ռիսկերի վերլուծությանը՝ հարկ է նշել, որ այն ենթադրում է հնարավոր բոլոր տեսակի վտանգների կանխատեսում և քննարկում՝ գնահատելու համար կրիտիկական ենթակառուցվածքի խոցելիությունն ու այդ ենթակառուցվածքի խափանման բացասական հետևանքները: Հնարավոր վտանգների նկատմամբ կրիտիկական ենթակառուցվածքի դիմադրության գնահատումն իրականացվում է՝ հիմնվելով այդ ենթակառուցվածքի վերաբերյալ գործառական և տեխնիկական գիտելիքների վրա: Այդ գործընթացը ներառում է հետևյալ քայլերը.

- կրիտիկական ենթակառուցվածք համարվող համակարգի վերլուծություն,
- ռիսկայնության վերլուծություն և գնահատում,
- առաջնահերթ պաշտպանություն պահանջող բաղկացուցիչների հատկորոշում,
- հատկանիշների սահմանում և ցուցանիշների հաշվարկում,

- կրիտիկական ենթակառուցվածքի բաղադրիչների դիմադրության աստիճանի կամ մակարդակի կանխորոշում,
- կրիտիկական ենթակառուցվածքի բաղադրիչների դիմադրության գնահատում [4, pp. 62-69]:

Կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգությանը սպառնացող վտանգների գնահատումը հիմնվում է հետևյալ գործոնների ուսումնասիրման վրա.

- հավանական վնասները՝ վնասների և մահացությունների թվաքանակը,
- տնտեսության վրա ազդեցությունը՝ ֆինանսական կորուստներ, ապրանքների կամ ծառայությունների վատթարացում և շրջակա միջավայրի վնասներ,
- բնակչության վրա ազդեցություն՝ հանրային անվստահության ձևավորում, առօրյա ապրելակերպի փոփոխություն, կարևորագույն ծառայություններից օգտվելու անհնարինություն:

Ամփոփելով ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի, Կանադայի կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանության մոդելների հիմնական նկարագրերը՝ նշենք, որ վերը ներկայացված մոդելների ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշյալ երկրները կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության նկատմամբ նմանատիպ հայեցակարգեր են կիրառում:

Ստորև որպես կրիտիկական ենթակառուցվածքների պահպանման կոլեգիալ կառավարման համակարգ ներկայացված է նաև Եվրոպական միության մոդելը:

Եվրոպական միության մոդել: Սույն հոդվածում Եվրամիության համակարգը դիտարկվում է որպես կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության ապահովման հավաքական մոդել: Եվրամիությունը կրիտիկական ենթակառուցվածքը նկարագրում է որպես «անդամ պետությունների կարողություն կամ համակարգ, որը կարևոր է հասարակության հիմնական գործունեության իրականացման, անվտանգության, առողջապահության, տնտեսական բարեկեցության համար, և որի անկատարությունը կամ խափանումը բացասաբար է ազդում այդ գործառույթների իրականացման վրա»: Ներկայացվում է նաև «եվրոպական կրիտիկական ենթակառուցվածք» հասկացության սահմանումը՝ նկարագրելով այն որպես «անդամ պետությունների համակարգեր, որոնց անկատարությունը

կամ խափանումը առնվազն երկու պետությունների վրա բացասական ազդեցություն է թողնում» [5]: Հետևաբար, կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանության գործընթացում կարևորվում է բոլոր շահակիցների միջև համագործակցության ամրապնդումը ոչ միայն ազգային, այլ նաև միջազգային մակարդակում, որը Եվրոպական հանձնաժողովի կողմից 2005թ. ընդունված փաստաթղթի (*Green Paper on a European Programme for Critical Infrastrtucture Protection*) կարևոր դրույթներից մեկն է:

Եվրամիության Կրիտիկական ենթակառուցվածքի պաշտպանության եվրոպական ծրագիրը (2006թ.), հաշվի առնելով անդամ պետությունների ներդրումները, սահմանել է եվրոպական կրիտիկական ենթակառուցվածքների համախումբը՝ էներգամատակարարում, տեղեկատվություն և հեռահաղորդակցություն, սննդի արտադրություն և մատակարարում, ֆինանսներ, քիմիական արդյունաբերություն, հետազոտության միջոցներ, ատոմակայաններ, առողջապահություն, ջրամատակարարում, տրանսպորտ, տիեզերական տարածություն:

Կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության եվրոպական ծրագրի հիմնական սկզբունքներն են օժանդակությունը, փոխլրացումը, գաղտնիությունը, շահակիցների համագործակցությունը, համակարգային մոտեցումը յուրաքանչյուր բնագավառի նկատմամբ: Առաջադրված յուրաքանչյուր կրիտիկական ենթակառուցվածքի համար նախատեսված է անվտանգության պլան, որը ներառում է այդ ենթակառուցվածքի ուսումնասիրությունն ու նկարագրությունը, ռիսկերի վերլուծությունը՝ հիմնված յուրաքանչյուր համակարգի համար խոշոր սպառնալիքների, ինչպես նաև դրանց կանխարգելմանն ուղղված գործընթացների վրա: Կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության եվրոպական ծրագրի կարևոր բաղադրիչ է Կրիտիկական ենթակառուցվածքների նախազգուշացման (վաղ ազդարարման) տեղեկատվական համակարգը, որը հնարավորություն է ընձեռում կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանությանն առնչվող տեղեկատվությունը տարածել կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության գործընթացում ներգրավված սուբյեկտների շրջանում:

2008թ. Եվրոպական հանձնաժողովի որոշման (*EU Directive/2008/114/EC*) հիմնական նպատակն էր հստակեցնել և համակարգել եվրոպական կրիտիկական ենթակառուցվածքների ցանկը, ինչպես նաև բոլոր անդամ պետություններին ներկայացնել կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանությանն ուղղված օրենսդրական կարգավորումներ ստեղծելու պահանջ:

Պետք է նշել, որ կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանության բաղկացուցիչ մասն է կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների պաշտպանությունը, որը տարածվում է «տեղեկատվական և հաղորդակցական այն տեխնոլոգիաների և միջոցների վրա, որոնց խափանումը լուրջ ազդեցություն է թողնում բնակչության առողջության, անվտանգության, բարեկեցության, կառավարության արդյունավետ գործառության վրա կամ ընդհատում է կրիտիկական ենթակառուցվածքների շահագործման բնականոն ընթացքը»: Եվրոպական միության անդամ պետություններից շատերն արդեն ունեն ազգային կիբեռանվտանգության ռազմավարություններ, որոնք սահմանում են հիմնական քայլերն ու գործողությունները՝ միտված տեղեկատվական հարձակումների ռիսկերի նվազեցմանը և տնտեսության ու հասարակության վրա դրանց հնարավոր բացասական ազդեցությունների կանխմանը: Ազգային կիբեռանվտանգության ռազմավարության հիմնական նպատակն է երաշխավորել, որ տվյալ պետությունն իրազեկ է և նախապատրաստված է դիմակայելու սպառնացող լուրջ վտանգներին, հնարավոր բացասական հետևանքներին և պատշաճ կերպով կարող է արձագանքել դրանց:

Կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանության Եվրոպական միության մոդելը կարող է հիմք հանդիսանալ մեկ այլ տարածաշրջանային միավորման՝ Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) ենթակառուցվածքների անվտանգության ապահովման մոդելի մշակման համար: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը 2015թ. միացել է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին, որի անդամներն են նաև Ռուսաստանի Դաշնությունը, Ղազախստանի Հանրապետությունը և Բելառուսի Հանրապետությունը:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ կրիտիկական ենթակառուցվածքներն այն համակարգերն ու միջոցներն են, որոնց գործառության խախտումը սպառնալիքներ է ստեղծում երկրի ազգային անվտանգության, ինչպես նաև դրա առանցքային տեսակների՝ էներգետիկ, տնտեսական, կրթական, ժողովրդագրական, անվտանգության համար:

Ազգային անվտանգությունն ու կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանությունը պահանջում են պրոֆեսիոնալ կադրերի առկայություն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման տարբեր մակարդակներում, ինչպես նաև մասնավոր հատվածում: Վերջինս ենթադրում է մարդկային ռեսուրսների արդյունավետ պլանավորման անհրաժեշտություն՝ միտված պետական կառավարման տարբեր մակարդակներում, ինչ-

պես նաև մասնավոր հատվածում նախատեսված խնդիրներն արդյունավետորեն լուծելուն ունակ, համապատասխան որակավորում և հմտություններ ունեցող մասնագետների անհրաժեշտ քանակ՝ սահմանված ռազմավարական նպատակներին հասնելու համար:

Կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության ապահովմանն ուղղված գործոնները, մոդելները և այդ գործընթացում ընդգրկված կառույցների գործառույթներն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ անվտանգության ապահովման գործընթացում առանցքային բաղադրիչը մարդկային գործոնն է՝ մարդկային կապիտալը:

Մարդկային կապիտալը տնտեսական բարդ կատեգորիաներից է, որը դժվար է սահմանել: Այն ներկայացվում է որպես աշխատուժի կրթական աստիճան, գիտելիքների, հմտությունների, փորձի, արհեստավարժության (պրոֆեսիոնալիզմի), ձեռնարկատիրական կարողությունների մակարդակ [6, էջ 141]:

Դասական բնորոշմամբ՝ մարդկային կապիտալն այն գիտելիքների, հմտությունների, կարողությունների ու վարպետության ամբողջությունն է, որով օժտված է աշխատողը, և որոնք նա ձեռք է բերում ընդհանուր և մասնագիտական կրթության, պրոֆեսիոնալ պատրաստվածության ու արտադրական փորձի շնորհիվ:

Լայն իմաստով մարդկային կապիտալը տնտեսական զարգացման ինտենսիվ արդյունավետ գործոն է, հասարակության և ընտանիքի զարգացումը, այդ թվում՝ աշխատանքային ռեսուրսների կրթված մասը, գիտական և վարչական աշխատանքի գործիքները, շրջակա միջավայրը և այն աշխատանքային գործունեությունը, որն ապահովում է մարդկային կապիտալի՝ որպես զարգացման արտադրական գործոնի, արդյունավետ և ռացիոնալ գործառությունը:

Նեղ իմաստով՝ մարդկային կապիտալը ներառում է միտքը, բանականությունը, առողջությունը, գիտելիքները, որակական և արտադրական աշխատանքը, կյանքի որակը:

Բնորոշվելով որպես անհատի՝ եկամուտ ստեղծելու կարողությունների ամբողջություն (ներառյալ բնատուր ունակությունները, կրթությունը և կուտակված մասնագիտական փորձը)՝ մարդկային կապիտալը տնտեսության և՛ մակրո-, և՛ միկրոմակարդակներում դիտվում է որպես կառավարման արդյունավետության առաջնային գործոն [7, c. 188]:

Մարդկային կապիտալը սահմանվում է որպես «մարդկային ներուժի այն արժեքավոր հատկությունը, որը կարող է զարգացվել համապատաս-

խան ներդրումների միջոցով և կապիտալացվել տնտեսական շրջանառության գործընթացում՝ բերելով եկամուտ աշխատավարձի կամ շահույթի ձևով» [8, էջ 61]:

Մարդկային կապիտալը ձևավորվում է կյանքի որակի և մտավոր գործունեության մակարդակի բարձրացմանն ուղղված ներդրումների հիման վրա՝ ներառելով կրթության, գիտության, առողջապահության, ձեռնարկատիրական գործունեության, աշխատանքի տեղեկատվական կառավարման, բիզնեսի և քաղաքացիական հասարակության, տնտեսական ազատության, ինչպես նաև մշակույթի, արվեստի և այլ ոլորտներում կատարված ներդրումները:

Կարելի է ասել, որ «մարմնավորված վիճակում մարդկային կապիտալն իրենից ներկայացնում է կուտակված մասնագիտական գիտելիքների, հմտությունների և ունակությունների ամբողջություն, որը ստացվում է կրթության և որակավորման բարձրացման գործընթացում, որոնք էլ հետագայում կարող են եկամուտ բերել աշխատավարձի, տոկոսադրույքի կամ շահույթի ձևով» [8, էջ 59]:

Մարդկային կապիտալը սահմանվում է որպես.

- մարդկային գիտելիքների և հմտությունների ամբողջություն, որն անհրաժեշտ նախապայման է անհատի ստեղծագործական գործունեության իրականացման համար,
- հասարակության հիմնարար ռեսուրսներ, արժեքների ձևավորման, արտադրության գործընթացին մասնակից դառնալուն անհրաժեշտ մարդկային հնարավորություններ,
- անհատի ֆիզիկական, բարոյական, մտավոր հատկանիշների ամբողջություն, առհասարակ տվյալ երկրի աշխատանքային ռեսուրսներ՝ ներառյալ նրանց աշխատունակությունը, գիտակրթական մակարդակը, ֆիզիկական և հոգեկան առողջությունը:

Բարձրագույն ուսումնական հաստատությունները մարդկային կապիտալի ձևավորման կարևոր գործառույթի իրականացմամբ նպաստում են նաև ազգային մարդկային կապիտալի ապահովմանն ու զարգացմանը, որը տնտեսության, հասարակության, ազգային հարստության հիմնական բաղկացուցիչն է: Ազգային մարդկային կապիտալը ներառում է տվյալ պետության և հասարակության քաղաքական, սոցիալական, տնտեսական կապիտալը, ազգային մտավոր ռեսուրսները, ազգային մրցունակության առավելությունները և ժողովրդի բնական պոտենցիալը:

Անդրադառնալով ազգային կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պահպանման գործընթացում ՀՀ բարձրագույն կրթության համակարգի գործառույթներին՝ հարկ է նշել, որ բարձրագույն կրթության երկու հիմնական խնդիրներն են՝ բավարարել անձի իմացական և պրոֆեսիոնալ պահանջները, ինչպես նաև ձևավորել և համալրել հասարակության մտավոր մասնագիտական ներուժը, ամրապնդել ֆունկցիոնալ գրագիտությունը: Ըստ այդմ՝ բարձրագույն կրթության հիմնական գործառույթները պետք է նպատակաուղղված լինեն ազգային մարդկային կապիտալի և անհատական գիտելիքների, կարողությունների ու հմտությունների զարգացմանը, ինչպես նաև հասարակության գիտական ներուժի ձևավորմանը:

Բացի այդ՝ բարձրագույն կրթությունը նպաստում է այնպիսի մեխանիզմների մշակմանն ու զարգացմանը, ինչպիսիք են քաղաքացիական հասարակությունը, կառավարությունը, կառավարման համակարգերը, պետական ծառայությունները, նաև այնպիսի սոցիալական նորմերի և հայացքների ձևավորմանը, ինչպիսիք են, օրինակ, հանդուրժողականությունը, հարմարվողականությունը, շրջակա միջավայրի պահպանությունն ու արժեքային համակարգի այլ բաղկացուցիչները:

Անշուշտ, մարդկային կապիտալի տեսանկյունից բարձրագույն կրթությունը հասարակության և երկրի տնտեսական զարգացման առանցքային հիմքն է: Բարձր որակավորմամբ աշխատողների պատրաստմանը զուգահեռ՝ բարձրագույն կրթությունն իրականացնում է նաև կարևոր սոցիալ-քաղաքական և մշակութային գործառույթներ՝ դառնալով ազգային անվտանգության առանցքային գործոն:

Այսպիսով, բարձրագույն կրթությունն իր գործառույթներով ընկալվում է գիտելիքների, կարողությունների, հմտությունների և տեղեկատվության տրամադրման և փոխանցման համակարգ, որն օգտագործվում է մարդու, հասարակության և պետության կարիքները բավարարելու համար: Ուստի, բարձրագույն կրթության համակարգի հիմնական առաքելությունն է այնպիսի մասնագետների պատրաստումը, որոնք կարող են կիրառել տվյալ բնագավառում իրենց ունեցած մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները՝ կոնկրետ իրավիճակներում ոլորտային խնդիրներին լուծում տալու համար: Այսինքն՝ բարձրագույն կրթության համակարգը միտված է բնակչության ֆունկցիոնալ գրագիտության (հենակետային գիտելիքները, հաղորդակցման, համակարգչային, ճանաչողական և գործնական բնույթի այլ հմտությունները կենսագործունեության բոլոր ոլորտներում կիրառելու ընդունակություն) բարձր մակարդակի ապահովմանը [9, էջ 323]:

Կարևորելով այն հանգամանքը, որ կրթությունն ու գիտական հետազոտությունը պետք է ծառայեցնել պետության և գիտելիքահենք տնտեսության զարգացմանը և ամրապնդմանը, զարգացած երկրները մեծ ներդրումներ են իրականացնում հետազոտության հիմնական բնագավառներում: Օրինակ, 2016թ. ԱՄՆ-ում հետազոտության հիմնական բնագավառում պետական հատկացումները եղել են ՀՆԱ 2.77%-ի չափով՝ կազմելով $514 մլրդ, Չինաստանում՝ $396.30 մլրդ, Ճապոնիայում՝ $166.60 մլրդ, Գերմանիայում՝ $109.25 մլրդ, Հարավային Կորեայում՝ $77.14 մլրդ, Հնդկաստանում՝ $71.48 մլրդ, Ֆրանսիայում՝ $60.05 մլրդ, Ռուսաստանում՝ $50.95 մլրդ, Մեծ Բրիտանիայում՝ $45.54 մլրդ, Բրազիլիայում՝ $37.18 մլրդ[1]:

Անդրադառնալով ՀՀ կրթության և գիտության ոլորտների պետական հատկացումներին՝ անհրաժեշտ է նշել, որ 2016-2018թթ. պետական միջնաժամկետ ծախսային ծրագրով կրթության ոլորտի պետական բյուջեով նախատեսված ծախսերը 2016թ. կազմել են ՀՆԱ 2.63%-ը (129.428.0 մլն), 2017թ. կկազմեն 2.54%-ը (134.463.1 մլն), 2018թ.՝ 2.45%-ը (140.202.0 մլն): ՀՀ պետական բյուջեից գիտության ոլորտին 2016-2018թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 14.153.5 մլն դրամ, 15.264.7 մլն դրամ և 16.562.7 մլն դրամ:

2017-2019թթ. պետական միջնաժամկետ ծախսային ծրագրով կրթության ոլորտի՝ պետական բյուջեով նախատեսված ծախսերը 2017թ. կկազմեն ՀՆԱ 2.40%-ը (133.269.2 մլն), 2018թ.՝ 2.32%-ը (137.494.9 մլն), 2018թ.՝ 2.28%-ը (145.216.7 մլն), ՀՀ պետական բյուջեից գիտության ոլորտին 2017-2019թթ. նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ 14.264.8 մլն, 15.342.2 մլն, 16.575.9 մլն դրամ: Ամփոփելով՝ հարկ է նշել, որ կրթության և գիտության ոլորտներում նշված տարիների համար պետական բյուջեով նախատեսված ծախսերի կրճատման միտում է նկատվում:

Ինչպես արդեն նշվել է, ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության գործընթացներում ներառված են նաև հետազոտական համալսարանների ներկայացուցիչներ, ուստի հարկ է անդրադառնալ բարձրագույն կրթության համակարգում ազգային կրիտիկական ենթակառուցվածքների պահպանմանն ուղղված մասնագիտական կրթական ծրագրերի, հետազոտությունների և վերապատրաստման դասընթացների կազմակերպման անհրաժեշտությանը:

[1] Global R&D Funding Forecast, 2016, https://www.iriweb.org/sites/default/files/2016GlobalR%26DFundingForecast_2.pdf

ԱՄՆ ազգային անվտանգության բաժինը հովանավորում է Բարձրագույն կրթությունը կրիտիկական ենթակառուցվածքների համար նախաձեռնությունը, որը համակարգում և տարածում է կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության ապահովմանն ու պահպանմանն առնչվող նյութեր, կազմակերպում դասընթացներ, դեպքերի ուսումնասիրություններ: Այս նախաձեռնության հիմնական նպատակն է ԱՄՆ համալսարանների և քոլեջների կրթական ծրագրերում ներառել կրիտիկական ենթակառուցվածքների վերաբերյալ ուսումնական դասընթացներ և իրազեկման նյութեր: Հաշվի առնելով ֆորմալ և ինֆորմալ կրթության համակարգերի դերակատարությունը կրիտիկական ենթակառուցվածքների պահպանությանն ուղղված գործընթացներում՝ դասընթացների բովանդակությունը ներառում է ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանության առավել լայն հասկացություններ և հիմնահարցեր: Մասնավոր և պետական հատվածների արտաքին փորձագետների, ինչպես նաև պրոֆեսորա-դասախոսական կազմի հետ համագործակցության արդյունքում ուսումնասիրվում են այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են ռիսկերի վերլուծությունն ու կառավարումը կենցաղային անվտանգության ապահովման գործընթացում, տեղեկատվության տարածումը հասարակության, արտադրության և կառավարման տարբեր մակարդակներում, ճգնաժամային կառավարումը բնածին և մարդածին աղետների դեպքում:

Սույն հոդվածում ՀՀ ազգային մակարդակում անվտանգության պաշտպանությանն ուղղված նախաձեռնություններից առանձնացվել է «Շանթ-2015» զորավարժությունը, որը պլանային բնույթ էր կրում և նպատակաուղղված էր պետության անմիջական նախապատրաստության ու ագրեսիայի հետմղման ընթացքում պետական և ռազմական կառավարման մարմինների զորահավաքային նախապատրաստության, պատրաստականության աստիճանի ունակության ստուգմանը, փոխգործակցության և գործողությունների ներդաշնակության մակարդակի բարձրացմանը: Զորավարժությունը միտված էր երկու՝ ուսուցողական և ստուգողական խնդիրների լուծմանը: Նմանատիպ զորավարժությունը պետք է լիներ համակարգային մոդել, սակայն այն հիմնականում ուղղված էր մարդկային գործոնների նախապատրաստմանն արտակարգ իրավիճակներին, այլ ոչ թե ազգային կրիտիկական ենթակառուցվածքների բաղադրիչների պատրաստականության և դիմադրության աստիճանի վերլուծությանն ու գնահատմանը:

ՀՀ-ում կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանության վերաբերյալ ոլորտի ուսումնասիրությունը փաստում է, որ.

- ազգային մակարդակում «կրիտիկական ենթակառուցվածք» հասկացության սահմանումներ չկան. օրինակ, «ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների ցանկերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն առանձնացնում է «կարևորագույն նշանակության օբյեկտներ» հասկացությունը և այդ օբյեկտների ցանկում ներառում շենքերն ու շինությունները՝ ընդգծելով ոչ թե դրանց անվտանգության պաշտպանության, այլ միայն պահպանության խնդիրները;
- ի տարբերություն ուսումնասիրվող երկրների՝ ՀՀ-ում ազգային կրիտիկական ենթակառուցվածքների պահպանության խնդիրներն ու դրանց լուծումները դեռևս համակարգված չեն, չկա ռազմավարական մոտեցում վերջիններիս նկատմամբ. ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ազգային մակարդակում դրանցով զբաղվող համապատասխան կառուցվածքային միավորների, ստորաբաժանումների կամ հետազոտական մարմինների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է կամ ամբողջական չէ;
- եթե նույնիսկ առկա են համապատասխան կառուցվածքային միավորներ, ապա դրանց գործունեությունը հատույթավորված և գաղտնի է, բացակայում են այդ գործողությունների նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունն ու մասնակցությունը, ինչպես նաև ՀՀ նախագահի մակարդակով համապատասխան միասնական ռազմավարական մոտեցումն ու վերահսկողությունը;
- համապատասխան համակարգող կառուցվածքային միավորների բացակայությամբ պայմանավորված՝ գոյություն չունի միասնական մոտեցում ազգային կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության խնդրին, հետևաբար նաև չեն իրականացվել ազգային կրիտիկական ենթակառուցվածքների քարտեզագրում, պատրաստականության վերլուծություն և գնահատում, ռիսկերի վերլուծություն և նմանատիպ կարևոր գործընթացներ;
- չկա ենթակառուցվածքների հաշվառում, կամ այդ ցանկը գաղտնի է;
- վերը նշված գործոնների բացակայությամբ պայմանավորված՝ չկա նաև պետական և մասնավոր հատվածների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջև համակարգային գործակցություն;

- մշակված չեն կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանությանն ուղղված օրենսդրական դաշտ, պետական քաղաքականություն և ռազմավարություն, տեղական ինքնակառավարման մարմինների և մասնավոր հատվածի ծրագրեր;
- կրթության թե՛ ֆորմալ, թե՛ ինֆորմալ մակարդակներում բացակայում են կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանությանն ուղղված դասընթացներն ու կրթական ծրագրերը՝ միտված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանը, կայացած քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացների բարելավմանը:

Հաշվի առնելով ազգային մակարդակում կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության և ռազմավարության, այդ գործընթացով զբաղվող համապատասխան մարմինների, կարգավորումների, ծրագրերի բացակայությունը՝ առաջարկվում է.

1. ստեղծել Կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության ազգային հանձնաժողով (ԿԵՊԱՀ), որի կազմում պետք է ընդգրկված լինեն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բուհական համակարգի ներկայացուցիչներ, որոնք կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության գործընթացում կապահովեն շարունակական համագործակցությունն ու կխրախուսեն ոլորտային ներդրումները:

1.1. Բուհական համակարգի ներգրավումը կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանության գործընթացում պայմանավորված է այն հանգամանքով, որ բուհերը համարվում են կարևորագույն գիտահետազոտական կենտրոններ, որոնց ներկայացուցիչները կարող են նպաստել կրիտիկական ենթակառուցվածքների ռիսկայնության գնահատման իրականացմանը, ռիսկերի բացահայտմանը, դրանց կանխարգելմանն ու կառավարմանն ուղղված քաղաքականությունների, գործողությունների և մեխանիզմների մշակմանը, ինչպես նաև միջազգային լավագույն փորձի ուսումնասիրմանն ու ազգային մակարդակում դրանց կիրառման հնարավորությունների վերլուծությանը: Բարձրագույն կրթության համակարգի և բուհական համայնքի ներկայացուցիչները կարող են իրականացնել պետությանը կամ տվյալ տարածաշրջանին սպառնացող ռիսկերի բնույթի ու մասշտաբի վերաբերյալ վերլուծություն տարբեր բնածին և մարդածին վտանգների ու խոցելիության համար, որոնք կարող են պատճառել մարդ-

կային և նյութական կորուստներ, լուրջ վնաս հասցնել ենթակառուցվածքներին, ծառայություններին, կենսամիջոցներին: Այս համատեքստում գիտահետազոտական աշխատանքները կարող են անդրադառնալ նշված հիմնահարցերի ուսումնասիրմանն ու ներկայացնել համապատասխան ոլորտային լուծումներ:

Ընդհանուր առմամբ՝ տարբեր երկրներում գիտահետազոտական կառույցների ձևավորումն ու զարգացումը, ինչպես նաև վերջիններիս ներգրավումը նմանատիպ գործընթացներին պայմանավորված են երկրի գիտական ներուժի համախմբման, հասարակական, քաղաքական, տնտեսական հիմնախնդիրների լուծման գործում և որոշումների կայացման գործընթացներում այդ ներուժի կիրառման անհրաժեշտության գիտակցմամբ:

Հետևաբար, կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանության գործընթացում ակադեմիական հանրության և պետական հատվածի համագործակցության ընթացքում բուհերը, իրականացնելով գիտահետազոտական կենտրոնների գործառույթներ, կարող են կատարել հետազոտական աշխատանքներ ազգային կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության հիմնախնդիրների լուծման ուղղությամբ, կառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների և նախագծերի, նորմատիվ ակտերի, ծրագրերի մշակում և փորձաքննություն, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում մատուցել խորհրդատվական ծառայություններ ու կազմակերպել ոչ ֆորմալ վերապատրաստումներ: Նշված գործընթացների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է համապատասխան որակավորմամբ մասնագետների պատրաստում:

Կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանության համատեքստում բարձրագույն ուսումնական հաստատությունները կարող են վերանայել կրթության բովանդակությունը՝ անհրաժեշտ փոփոխություններ իրականացնելով «Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկայի դասավանդման պլաններում: Համաձայն ՀՀ կրթական համակարգում «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկայի ուսուցման կազմակերպման մասին ՀՀ կառավարության որոշման՝ այն համարվում է պարտադիր դասավանդվող առարկա ոչ միայն բարձրագույն, այլև հանրակրթական ուսումնական հաստատություններում:

Կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության գործընթացում բարձրագույն ուսումնական հաստատությունների ներգրավումը կարող է նպաստել պետական հատվածի կողմից մասնավոր հատվածին տրա-

մադրվող ֆինանսավորման և ներդրումների նկատմամբ վերահսկողության իրականացմանը, ինչպես նաև այդ գործընթացների թափանցիկության ապահովմանը:

Կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության և անվտանգության ապահովման հիմնախնդիրների՝ ակադեմիական մակարդակով ուսումնասիրությունն ու բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան ուղղվածության առարկաների դասավանդումը կարևորվում են ՀՀ-ում՝ հաշվի առնելով ՀՀ-ի առջև ծառացած ներքին և արտաքին, այդ թվում համաչափ և անհամաչափ սպառնալիքներն ու մարտահրավերները:

1.2. Առաջարկվում է վերոնշյալ հանձնաժողովում որպես պետական հատվածի ներկայացուցիչներ ներառել ՀՀ կառավարության մաս կազմող հետևյալ նախարարություններն ու առընթեր մարմինները՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, Ազգային անվտանգության ծառայություն, Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե, Քաղաքաշինության պետական կոմիտե, Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն:

1.3. Առաջարկվում է մասնավոր հատվածի ներկայացուցիչներից առաջադրել և ընտրել հետևյալ կազմակերպությունները. «Վեոլիա Ջուր» ՓԲԸ (ջրամատակարարում), «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (էներգամատակարարում), «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ (Մեծամորի էլեկտրակայան) (էլեկտրաէներգիայի մատակարարում), «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ (գազամատակարարում), Հրազդանի ջերմաէլեկտրակայան (էներգամատակարարում), Երևանի ջերմաէլեկտրակայան (էներգամատակարարում), «Հայփոստ» ՓԲԸ (փոստային կապ), «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» (ԱրմենՏել) ՓԲԸ (հեռահաղորդակցություն), «Հայաստանի ազգային հեռուստատեսություն» ՓԲԸ (հեռուստատեսություն), «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ (տրանսպորտային փոխադրումներ), «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ (հանքարդյունաբերություն):

1.4. Առաջարկվում է որպես տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչ ընդգրկել Երևանի քաղաքապետարանը, ինչպես նաև ներկայացուցիչներ այն մարզերից, որոնք աշխարհագրորեն սահմանամերձ են կամ ունեն բնակչության մեծ թվաքանակ: Որպես սահմանամերձ և գործառույթով սահմանապահ մարզ՝ առանձնացվել է Տավուշը (հյուսիս-արևելքում սահմանակից է Ադրբեջանին), իսկ բնակչության ամենամեծ թվաքանակ ունեցող մարզ՝ Արմավիրը (267 հազար մարդ)[1], որն արևմուտքից պետական սահմանով սահմանակից է Թուրքիային: Տեղական ինքնակառավարման մարմինները պետական կառավարման մարմինների հետ համատեղ պետք է կրեն պատասխանատվություն՝ աղետակայուն համայնքների կայուն զարգացման և դրա հետ կապված որոշումների ընդունման և իրականացման համար:

Նշված մարմինների ներկայացուցիչների հիմնական գործառույթներն են կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանության հիմնախնդիրների քննարկումներին մասնակցելն ու յուրաքանչյուր կրիտիկական ենթակառուցվածքի վերաբերյալ առաջարկություններով հանդես գալը, ինչպես նաև այս հիմնական գործառույթներից բխող այլ ենթագործառույթների իրականացումը:

Կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության ազգային հանձնաժողովի գործառույթները.

- ամրապնդել պետական և մասնավոր հատվածների միջև համագործակցությունը՝ ուղղված ազգային կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության ապահովմանը,
- համակարգել ազգային կրիտիկական ենթակառուցվածքների պատրաստականության գնահատման գործընթացը,
- անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրել ազգային կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պահպանման գործընթացում ներառված կառույցներին,
- կանխատեսման տեսանկյունից մշակել տարբեր սցենարներ,
- կրկնորդումներից խուսափելու համար հստակեցնել գործառույթները, լիազորությունների և իրավունքների շրջանակը,
- համախմբել ռեսուրսներն անհրաժեշտ ներդրումներ կատարելու համար,
- համագործակցել պետական, մասնավոր, տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ ստեղծելու վտանգների և սպառնալիք-

[1] ՀՀ ԱՎԾ, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ:

ների զգուշացման (վաղ ազդարարման), ռիսկերի վերլուծության և հետևանքների վերականգնման միասնական համակարգ,

- համակարգել ծրագրեր և մշակել քաղաքականություն՝ արձագանքելու ազգային կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության սպառնալիքներին՝ ներառյալ արտակարգ իրավիճակներում արդյունավետ հաղորդակցման ապահովումը կառավարման տարբեր մակարդակներում,
- ազգային կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանության գործընթացում ապահովել բուհերի հետ շարունակական համագործակցությունը:

2. Մշակել Կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության գործընթացը կանոնակարգող ազգային ռազմավարություն, որը կարող է լինել որպես ՀՀ կրիտիկական ենթակառուցվածքների քարտեզագրման, ազգային անվտանգության ապահովման սպառնալիքների և պահանջվող մեխանիզմերի, կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացման փուլերի, հստակ ժամկետների, պահանջվող ռեսուրսների թվարկմանն ու նկարագրությանը վերաբերող համալիր փաստաթուղթ:

3. Մշակել Կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության գործընթացը կանոնակարգող օրենսդրական դաշտ, որը կսահմանի կրիտիկական ենթակառուցվածքների հիմնական խնդիրները, գերակայություններն ու նպատակները, այդ ենթակառուցվածքների պաշտպանության սկզբունքները, գործընթացում ներառված կառույցների իրավասություններն ու պատասխանատու մարմինները, դերակատարության բաշխվածությունն արտակարգ իրավիճակներում:

Սույն հոդվածի շրջանակներում կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանությանն ուղղված միջազգային տարբեր մոդելների ուսումնասիրությունը փաստում է, որ կրիտիկական ենթակառուցվածքներն այն համակարգերն ու միջոցներն են, որոնց գործառության խափանումը ստեղծում է սպառնալիքներ երկրի ազգային անվտանգության, ինչպես նաև դրա առանցքային տեսակների՝ էներգետիկ, տնտեսական, կրթական, ժողովրդագրական անվտանգության համար: Կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանությունն ընդգրկում է ենթակառուցվածքների սեփականատերերի, շահագործողների և օգտագործողների այն բոլոր նախաձեռնությունները, որոնք ուղղված են ցանկացած վթարի, աղետի և

հարձակման դեպքում հնարավորինս քիչ վնասներով կարճ ժամկետում կրիտիկական ենթակառուցվածքների գործառության վերականգնմանը:

Ամփոփելով՝ անհրաժեշտ է նշել, որ կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության գործընթացում բարձրագույն կրթության համակարգն էական դերակատարություն ունի՝ նպաստելով այդ ոլորտին առնչվող գիտելիքի ստեղծմանն ու տարածմանը, ինչպես նաև մասնագետների պատրաստմանը, որոնք կարող են մասնակցել կրիտիկական ենթակառուցվածքների ռիսկայնության գնահատման, ռիսկերի բացահայտման գործընթացների իրականացմանը, դրանց կանխարգելմանն ու կառավարմանն ուղղված քաղաքականությունների, գործողությունների և մեխանիզմների մշակմանը, միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությանն ու ազգային մակարդակում դրանց կիրառման հնարավորությունների վերլուծությանը:

Մարտ, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Հարությունյան Լ.,* Ենթակառուցվածքների հասկացութային հենքի մշակումը տնտեսագիտական գիտակարգի զարգացման համատեքստում, ԵՊԼՀ, Բանբեր 2(37), Երևան «Լինգվա» հրատարակչություն, 2016:
2. *Gretchen, M., Campbell, R.* 2002. The New York Times Dictionary of Money and Investing.
3. *Elgin, M.B., Manuel, E.S.* International CIIP Handbook 2008/2009. Center for Security Studies, ETH, Zurich, 2008.
4. *Hromada, M.* et al. 2014. Critical Infrastructure Protection and Resilience as an Actual Challenge of Security Education, Computers and Technology in Modern Education, Kuala Lumpur, Malaysia.
5. EU. Directive on the identification and designation of European critical infrastructures and the assessment of the need to improve their protection. In Council directive 2008/114/EC.
6. *Հովհաննիսյան Ա.,* Մարդկային կապիտալի օգտագործումը ՀՀ-ում, Տնտեսական զարգացման քաղաքականության արդի հիմնախնդիրները Հայաստանում, «Տնտեսագետ» հրատարակչություն, 2014:
7. *Румянцева Е.Е. 2005. Новая экономическая энциклопедия, М.*
8. *Վարդանյան Գ.,* Գիտելիքահենք տնտեսություն, Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտությունների հրատարակչություն, 2008:
9. *Խաչատրյան Ռ.,* PEST վերլուծությունը որպես բուհերի արտաքին միջավայրի վերլուծության ռազմավարական պլանավորման գործիք, ԵՊԼՀ, Բանբեր 2(37), Երևան, «Լինգվա» հրատարակչություն, 2016:
10. ՀՀ 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, http://www.gov.am/files/docs/1603.pdf

11. ՀՀ 2017-2019 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, http://www.gov.am/files/docs/2015.pdf
12. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ, http://www.armstat.am/file/article/bnakch_01.01.2015.pdf
13. ՀՀ կառավարության որոշում «ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների ցանկերը հաստատելու մասին», http://www.arlis.am/documentview.aspx?docid=22423
14. ՀՀ կառավարության որոշում ՀՀ կրթական համակարգում «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկայի ուսուցման կազմակերպման մասին /27.09.2006/:
15. ՀՀ օրենքը Ազգային անվտանգության մարմինների մասին՝ ընդունված 28.12.2001, http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1278&lang=arm
16. Պայմանագիր ՀՀ-ի՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին՝ ընդունված 10.10.2014-ին:
17. *Ерошин В., Лысенко А., Райзберг Б.* 2016. Экономика и управление образованием. Словарь-справочник.
18. *Корчагин Ю.А.* 2009. Широкое понятие человеческого капитала, Воронеж, ЦИРЭ.
19. *Сметана М., Защита критической инфраструктуры.* Подходы государств Европейского Союза к определению элементов критической инфраструктуры, ВШБ-Технический Университет Острава, 2014/15.
20. *Смирнов В.Т., Сошников И.В., Романчин В.И., Скоблякова И.В.* 2005. Человеческий капитал: содержание и виды, оценка и стимулирование, М., Машиностроение-1, Орёл, ГТУ.
21. *Трапицына С.Ю.* 2016. Менеджмент в образовании. Учебник и практикум для бакалавриата и магистратуры.
22. *Хофрейтер Л.* 2014. Критическая инфраструктура-содержание, структура и проблемы ее защиты//Securitologia. Nr 1.
23. *Цыгичко В.Н., Смолян Г.Л., Черешкин Д.С.* 2006. Обеспечение безопасности критических инфраструктур в США (аналитический обзор). Труды Института системного анализа Российской академии наук, 27, 4-34.
24. *Baldoni R.* et al. 2014. Critical Infrastructure Protections: Threats, Attacks and Countermeasures.
25. Directive of the Council on a European Programme for Critical Infrastructure Protection. COM (2006) 786, Brussels, 2006.
26. George Mason University-Critical Infrastructure Higher Education Initiative, http://cip.gmu.edu/education-programs/critical-infrastructure-higher-education-initiative/
27. Government Security News-DHS wants to expand higher education in critical infrastructure field, http://gsnmagazine.com/article/27017/dhs_wants_expand_higher_education_critical_infrast

28. Homeland Security. Critical Infrastructure Security and Resilience Month-November, 2016.
29. National Infrastructure Advisory Council, https://www.dhs.gov/national-infrastructure-advisory-council
30. National Strategy for Critical Infrastructure, Canada, 2009. https://www.publicsafety.gc.ca/cnt/rsrcs/pblctns/srtg-crtcl-nfrstrctr/srtg-crtcl-nfrstrctr-eng.pdf
31. OECD: Development of Policies for Protection of Critical Information Infrastructures: Ministrial Background Report-DSTI/ICCP/REG (2007) 20/Final. https://www.oecd.org/sti/ieconomy/40761118.pdf
32. *O'Rourke, T.* 2007. Critical infrastructure, interdependencies, and resilience. Bridge-Washington-National Academy of Engineering, 37(1), 22.
33. *Stanisteanu, A.I.* 2013. Critical Infrastructure Protection. International Scientific Conference "Strategies XXI". "Carol I" National Defence University.
34. The American Heritage Dictionary of the English Language. 2000. Fourth Edition. Houghton Mifflin Company. Boston, MA.
35. The Report of the President's Commission on Critical Infrastructure Protection, October 1997. https://fas.org/sgp/library/pccip.pdf

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ռոբերտ Խաչատրյան, Ֆրիդա Հակոբյան

Ամփոփագիր

Հոդվածում հիմնական ուշադրությունը հատկացվում է կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանությանը, որոնք դիտարկվում են որպես ֆիզիկական օբյեկտներ և նյութական ռեսուրսներ, տեղեկատվական համակարգեր, ցանցեր, տեխնոլոգիաներ և ծառայություններ, որոնք կենսականորեն կարևոր նշանակություն ունեն պետության հիմնական գործառույթների համար կենսագործունեության բոլոր ոլորտներում՝ ազգային և տնտեսական անվտանգություն, առողջապահություն, տնտեսական բարգավաճում և կայուն զարգացում, պետական կառավարման համակարգի արդյունավետ գործառության համար: Կրիտիկական ենթակառուցվածքներն այն համակարգերն ու միջոցներն են, որոնց խափանումը սպառնալիք է ստեղծում ազգային անվտանգության, ինչպես նաև անվտանգության հիմնական տեսակների (տնտեսական, կրթական, ժողովրդագրական) համար:

Հոդվածում ներկայացվում են նաև «կրիտիկական ենթակառուցվածք» եզրի սահմանումները, կրիտիկական ենթակառուցվածքների հիմնական բաղադրիչները, ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանությանն ուղղված համակարգային մոդելները, նկարագրված են նաև բարձրագույն կրթության համակարգերի գործառույթները կրիտիկական ենթակառուցվածքների ազգային ապահովման պաշտպանության ոլորտում:

ФУНКЦИИ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ В ПРОЦЕССЕ ЗАЩИТЫ ОБЕСПЕЧЕНИЯ КРИТИЧЕСКИХ ИНФРАСТРУКТУР

Роберт Хачатрян, Фрида Акопян

Резюме

В данной статье основное внимание уделяется защите критических инфраструктур, которые рассматриваются в качестве физических объектов и материальных ресурсов, информационных систем, сетей, технологий и услуг, которые имеют жизненно важное значение для основных функций государства во всех сферах жизнедеятельности: национальной и экономической безопасности, здравоохранения, экономического процветания и устойчивого развития, эффективного функционирования системы государственного управления. Критические инфраструктуры – это системы и средства, нарушение которых создает угрозу для национальной безопасности, а также для основных видов безопасности – экономической, образовательной, демографической.

В статье также представляются определение термина «критическая инфраструктура», основные компоненты критических инфраструктур, системные модели, направленные на защиту безопасности инфраструктур, описаны также функции систем высшего образования в области защиты национального обеспечения критических инфраструктур.

FUNCTIONS OF THE HIGHER EDUCATION IN PROTECTING THE SECURITY OF THE CRITICAL INFRASTRUCTURES

Robert Khachatryan, Frida Hakobyan

Resume

The article focuses on the protection of critical infrastructures, which are defined as a combination of physical objects and tangible facilities, systems, networks, technologies and services essential for the maintenance of vital societal functions, such as health, safety, security, economic well-being of people, and the effective functioning of government. Critical infrastructures are the systems and facilities, the incapacity or destruction of which could have a debilitating impact on national security and its major forms, such as energy, economic, educational, and demographic security.

The article provides the fundamental description and definition, the framework and components of critical infrastructure. It also reviews the critical infrastructure protection issues and presents systematic and efficient models of critical infrastructure protection. The article highlights the significance and functions of higher education system in protecting the security of the national critical infrastructures.

ՀՏԴ 94/99(=419.81):351/354:06

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Վահրամ Հովյան*

Բանալի բառեր ՝ Սփյուռք, անվտանգություն, մարտահրավեր, գոյապահպանություն, արտագաղթ համայնքներից, ինքնություն, խառնամուսնություններ, վտանգվածություն, ինդեքս, աստիճան։

Սփյուռքի հայ համայնքների անվտանգությունն ընդհանուր առմամբ ունի երկու բաղադրիչ՝ ֆիզիկական և հոգևոր։ Ֆիզիկական բաղադրիչը հանգում է հայ համայնքների գոյությանը, իսկ հոգևորը՝ նրանց ազգային նկարագրի պահպանմանը։ Սփյուռքի հայ համայնքների առջև ֆիզիկական և հոգևոր անվտանգության առումով կանգնած են հիմնականում հինգ մարտահրավերներ՝ ինքնության բաղադրիչների կորուստ, խառնամուսնություններ, գոյապահպանության սպառնալիքներ, արտագաղթ համայնքներից (դրա հետևանքով վերջիններիս տարրալուծում) և մտավոր ներուժի կազմակերպման խնդիրներ։

1. Ինքնության բաղադրիչների կորուստը վերաբերում է հայոց լեզվի, մշակույթի, պատմական հիշողության և այլնի աստիճանական մարմանը սփյուռքահայության ներկայացուցիչների շրջանում։ Այս խնդիրը նկատելի է եղել դեռևս Սփյուռքի ձևավորման վաղ փուլում։ Ազգային խնդիրներով մտահոգ՝ Շահան Նաթալին դեռևս 1920-ական թթ. գրում է. «Չենք կարծեր, որ ռեւէ մէկը յաւակնի Ֆրանսիայի մէջ գտնուող Հային միայն մէկ տասնեակ տարի յետոյ ֆրանսերէն լեզուին փոխարէն հայերէնը խօսիլ տալ» [1, էջ 38]։ Բնակվելով օտար միջավայրերում՝ սփյուռքահայերն ինտեգրվում են այդ հասարակություններին և կամա թե ակամա իրենց վրա կրում դրանց սոցիալ-մշակութային ազդեցությունը։ Ըստ մասնագիտական գնահատականի՝ «...օտար քաղաքակրթությունների անընդհատ մեծացող ազդեցության ներքո Սփյուռքը, ենթարկվելով ինտենսիվ ազդեցության, աստիճանաբար կորցնում է իր ազգային դիմագիծը» [2, էջ 262]։ Այս երևույթը

* «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ, Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար։

դրսևորվում է նաև արտերկրի հայության՝ ազգային կյանքից աստիճանաբար հեռացմամբ և ազգային կառույցների հետ կապի կորստով: Համաձայն մեկ այլ մասնագիտական դիտարկման՝ «Հատկապես նոր սերնդի փոքր մասն է կապված ազգային կառույցների հետ, և նրանց ձուլման վտանգը շատ մեծ է» [3, էջ 111]:

Միևնույն ժամանակ, մայրենի լեզվի և ազգային ինքնությունը կազմող մյուս բաղադրիչների գործնական կիրառման փոքր հնարավորությունները զրկում են օտար երկրներում հաստատված հայերին դրանք սովորելու և պահպանելու խթանից: Այդ պատճառով էլ «…վերջին տասնամյակներում հայախոսությունը աշխարհում նվազել է, գնալով խորանում է հայերի լեզվական ուծացումը հատկապես արտերկրում» [4, էջ 124]:

Արդյունքում՝ սերնդեսերունդ սփյուռքահայերի շրջանում նվազում է հայոց լեզվին, ազգային մշակույթին, պատմական հիշողությանը և ազգային ինքնությունը կազմող մյուս բաղադրիչներին տիրապետելու մակարդակը, ինչը լուրջ սպառնալիք է արտերկրի հայության համար, քանի որ «...էթնոսները հոգեբանորեն թուլանում են և աստիճանաբար գնում են դեպի վերացում, երբ թուլանում ու աստիճանաբար վերանում է այն ցուցիչների ամբողջությունը, որի կրողն է էթնոսը՝ որպես սոցիալ-հոգեբանական ուրույն համակարգ» [5, էջ 40-41]:

Ուծացման առաջին փուլը, թերևս, հայ համայնքների ներկայացուցիչների ինքնության փոխակերպումն է: Մասնագետների գնահատմամբ՝ Սփյուռքի հայ համայնքներում տասնամյակների ընթացքում տեղի ունեցող ինքնության փոխակերպման արդյունքում հայ ինքնությունը փոխարինվում է օտար ինքնությամբ՝ պահպանելով որոշակի կապը հայկականի հետ: Եթե հարցը դիտարկենք ամերիկահայ համայնքի օրինակով, ապա նախկինում ամերիկաբնակ *հայը* որպես ինքնություն փոխակերպվում է հայկական արմատներով կամ ծագմամբ *ամերիկացու* (ընդգծումները մերն են- Վ.Հ.): Այս երևույթը նույն ամերիկահայ համայնքի օրինակով ցույց է տվել ազգագրագետ Հարություն Մարությանը [6, էջ 47-54]:

Այսպիսով, քանի որ «Սովորաբար սփյուռքը ենթարկվում է... տվյալ վայրի թելադրած պայմաններին», ապա նշյալ միտումների շարունակման պարագայում «Բոլոր ժողովուրդների մշակույթների պես, հայկականը նույնպես գաղթօջախներում կենթարկվի արևմտյան մշակույթների ոչնչացնող ազդեցությանը և տարիների ընթացքում կդադարի հայկական լինելուց» [3, էջ 113]: Հետևաբար, «Ընդունող երկրների գերիշխող մշակույթների մշտական և ուժգին ազդեցության ներքո արտերկրի հայության համար

բոլոր ժամանակներում առավել բարդ և կարևոր խնդիրը եղել և մնում է ազգային ինքնության պահպանումը ...» [7, էջ 113]:

2. Խառնամուսնությունները, մի կողմից՝ լինելով իրենց բնակության երկրների հասարակություններում սփյուռքահայերի ինտեգրվածության ցուցիչ, մյուս կողմից՝ նպաստում են հայ ինքնության խեղաթյուրման էլ ավելի խորացմանը: Դրանց արդյունքում ձևավորված ընտանիքներում նոր սերունդը, բացի ինքնության ճգնաժամի հետ կապված խնդիրներին բախվելուց, նաև ավելի մեծ չափով և ավելի անմիջականորեն է ենթարկվում օտար սոցիալ-մշակութային ազդեցությանը: Եթե հայկական ընտանիքներում նոր սերունդը միայն արտաքինից, այն է՝ հասարակական միջավայրի կողմից է ենթարկվում այդպիսի ազդեցության, ապա խառնամուսնությունների արդյունքում ձևավորված ընտանիքներում այն արդեն ներսից՝ ընտանեկան միջավայրից է իր վրա կրում օտար մշակութային արժեքների ներգործությունը:

3. Գոյապահպանության սպառնալիքները հայկական սփյուռքի համար հրատապ են այն երկրներում կամ տարածաշրջաններում, որոնք հանդիսանում են թեժ հակամարտությունների գոտի և որտեղ ազգային կամ կրոնական հողի վրա առկա է հայատյացությունը: Այդպիսի տարածաշրջաններում կամ երկրներում, որքան էլ հայ համայնքները փորձեն չեզոքություն պահպանել, փոթորկահույզ իրադարձություններն իրենց անմիջական ազդեցությունն են ունենում վերջիններիս վրա՝ սպանություններ, ավերածություններ և այլն:

Հայ համայնքների վրա տևական հակամարտությունները բացասական ազդեցություն են ունենում նաև անուղղակիորեն: Բանն այն է, որ դրանք առաջացնում են համընդհանուր քաոս և անիշխանություն, խաթարում են տվյալ երկրի տնտեսական կյանքը՝ այդ կերպ պատճառ դառնալով աղքատության և սոցիալական ճգնաժամերի, ինչն էլ իր հերթին առաջացնում է հանցագործությունների և այլ բացասական երևույթների աճ: Այս պարագայում հայ համայնքների ներկայացուցիչները տվյալ երկրի ընդհանուր բնակչության հետ մեկտեղ դառնում են այնպիսի հանցագործությունների թիրախ, ինչպիսիք են թալանը, սպանությունը, մարդկանց առևանգումը և նրանց ազատության համար փրկագին պահանջելը և այլն [տե՛ս, օրինակ, 8, էջ 102-103]:

Տևական հակամարտությունների և անկայունության արդյունքում հայ համայնքները կրում են թե՛ մարդկային և թե՛ գույքային կորուստներ: Մարդկային կորուստը զոհված, վիրավորված և փախստական դարձած մեր հայրենակիցներն են, իսկ գույքայինը՝ նրանց թալանված ունեցվածքը, ինչպես

նաև անհատական և համայնքային անշարժ գույքը (տներ, խանութներ, դպրոցներ, եկեղեցիներ և այլն), որը ենթարկվում է ավերածությունների:

4. Համայնքներից արտագաղթի պատճառներ, բացի վերը հիշատակված փոթորկահույզ իրավիճակներից, հանդիսանում են նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են ոչ հոգեհարազատ սոցիալ-քաղաքակրթական միջավայրը, ժողովրդավարական ազատությունների ցածր մակարդակը, սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանները, տնտեսական գործունեություն ծավալելու հնարավորությունների սահմանափակությունը և այլն: Այն երկրների հայ համայնքներում, որտեղ առկա են թվարկված գործոնները, դեռևս 20-րդ դարի կեսից նկատվում է հայերի արտագաղթ դեպի այնպիսի երկրներ, որտեղ առկա են հայերին ավելի հոգեհարազատ սոցիալ-քաղաքակրթական միջավայր, ժողովրդավարական ազատություններ, սոցիալական բարենպաստ պայմաններ և տնտեսական գործունեությամբ զբաղվելու ավելի լայն հնարավորություններ [մանրամասն տե՛ս 9, էջ 43-47]:

Ինչպիսին էլ լինեն հայ համայնքներից արտագաղթի պատճառները, միևնույն է, այն ունենում է հյուծիչ ազդեցություն վերջիններիս վրա: Արդյունքում՝ նոսրանում են նրանց ներկայացուցիչների շարքերը, ինչը բացասաբար է անդրադառնում նաև համայնքային կառույցների (օրինակ՝ դպրոցների) գործունեության վրա [տե՛ս, օրինակ, 10, էջ 6]: Պատմաբան Տիգրան Ղանալանյանը, ուսումնասիրելով Սփյուռքի ներքին տեղաշարժերը Երկրորդ աշխարհամարտից հետո, անմիջական կապ է տեսնում համայնքներից արտագաղթի և ձուլման գործընթացների ահագնացման, ինչպես նաև խառնամուսնությունների աճի միջև՝ գրելով. «Որպես կանոն արտագաղթի հետևանքների թվում էին խառնամուսնությունների աճը, ձուլման արագացումը և համայնքների աստիճանական թուլացումն ու կազմալուծումը» [տե՛ս 11, էջ 15]:

Արտագաղթի ժամանակակից միտումների պահպանման և խորացման դեպքում Սփյուռքի մի շարք համայնքներին սպառնում է լիակատար սպառման հեռանկարը: Լավագույն ապացույցը Հնդկաստանի երբեմնի ծաղկուն հայ համայնքի օրինակն է, որն այսօր գրեթե գոյություն չունի: Սփոփիչ հանգամանք այս պարագայում կարող էր լինել այն, որ իրենց համայնքը լքող հայերը հայրենադարձվեին Հայաստան: Սակայն նման միտումը ներկայում բավական թույլ է. վերջիններիս փոքր մասն է միայն բռնում Հայաստանի ճանապարհը:

5. Մտավոր ներուժի խնդիրները: Քանի որ ընդհանրապես հայ հանրության և մասնավորապես Սփյուռքի անվտանգության համար կարևոր

նշանակություն ունի նրա մտավոր ներուժը, ապա վերոհիշյալ չորս մարտահրավերներին ավելանում են վերջինիս հետ առնչվող խնդիրները՝ որպես ևս մեկ մարտահրավեր։

Եթե վերոնշյալ գործոններից երկուսը՝ գոյապահպանության սպառնալիքները և արտագաղթը համայնքներից, առնչվում են հոգևոր անվտանգությանը, ապա մնացած երեքը՝ ինքնության բաղադրիչների կորուստը, խառնամուսնությունները և մտավոր ներուժի խնդիրները, ֆիզիկականին։

Վտանգվածության չափման մեթոդաբանություն

Որպեսզի «մարտահրավեր», «անվտանգություն» և նման այլ արտահայտությունները վերացական չլինեն, անհրաժեշտ է դրանց դիտարկումն իրականացնել քանակական չափումների միջոցով։ Այդ նպատակով առաջ են քաշվել «վտանգվածության ինդեքս (ցուցիչ)» և «վտանգվածության աստիճան» հասկացությունները։

Վտանգվածության ինդեքսը չափվում է մաթեմատիկական բանաձևի միջոցով, որի հիմքում որպես փոփոխականներ ընկած են վտանգվածության չափորոշիչները։ Որպես այդպիսիք դիտվում են վերն առանձնացված հինգ մարտահրավերները, որոնք ներկայում ծառացած են Սփյուռքի առջև։

Ըստ այս չափորոշիչներից յուրաքանչյուրի՝ Սփյուռքի վտանգվածությունը կարող է ունենալ չորս աստիճան՝ զրոյական, ցածր, միջին և բարձր։ Վտանգվածության յուրաքանչյուր աստիճան արտահայտվում է թվային միավորի տեսքով. զրոյականը՝ 0, ցածրը՝ 1, միջինը՝ 2 և բարձրը՝ 3։ Հարկ է նշել, որ ըստ մտավոր ներուժի Սփյուռքի վտանգվածության աստիճանի որոշումը տարբերվում է մյուս չափորոշիչներով այդ հարցի որոշումից։ Ի տարբերություն մյուս չափորոշիչների, որոնց պարագայում որքան մեծ է մարտահրավերը, այնքան բարձր է վտանգվածության ցուցիչը, մտավոր ներուժի պարագայում գործում է հակառակ տրամաբանությունը՝ որքան մեծ է ներուժը, այնքան ցածր է վտանգվածության աստիճանը։

Քանի որ վտանգվածության չափորոշիչները հինգն են, իսկ դրանց առավելագույն աստիճանն արտահայտող ցուցիչը՝ 3-ը, ապա այդ չափորոշիչների համախումբ ամբողջությամբ վերցված՝ սփյուռքի վտանգվածության ինդեքսը գնահատվում է 15 միավորանոց սանդղակով (5x3 սկզբունքով), որտեղ 15 միավորը ցույց է տալիս վտանգվածության ամենաբարձր աստիճանը։

Սփյուռքի վտանգվածության աստիճանը որոշելու համար կիրառվում է հետևյալ բանաձևը. հինգ չափորոշիչների առավել բարձր ցուցիչների

գումարը բաժանած երեքի, քանի որ, ինչպես արդեն նշվել է, վտանգվածության աստիճանները երեքն են: Թվային արտահայտությամբ այն ունի հետևյալ տեսքը[1].

ՎԱ=(գ+ա+ի+խ+մ)/3, որտեղ.

ՎԱ – վտանգվածության աստիճան
գ – գոյապահպանական մարտահրավերներ
ա – արտագաղթ համայնքներից
ի – ինքնության բաղադրիչների կորուստ
խ – խառնամուսնություններ
մ – մտավոր ներուժի խնդիրներ

Ըստ այդմ էլ՝ Սփյուռքի վտանգվածության աստիճանը, ըստ համախումբ ինդեքսի, բաժանվում է երեք մասի՝ ցածր, միջին և բարձր: 15 միավորանոց սանդղակում ստորև ներկայացված միավորների յուրաքանչյուր կարգ ցույց է տալիս վտանգվածության աստիճանը՝ հետևյալ կերպ.

0-5 – ցածր աստիճան
5-10 – միջին աստիճան
11-15 – բարձր աստիճան

Հաշվի առնելով, մի կողմից՝ սույն հոդվածի ծավալների սահմանափակությունը, մյուս կողմից՝ այն հանգամանքը, որ սա վերոհիշյալ մեթոդաբանությամբ Սփյուռքի վտանգվածությունը գնահատելու առաջին փորձն է, այստեղ այդ վտանգվածության ինդեքսն ու աստիճանը բացահայտելուն ուղղված հետազոտությունն իրականացվել է ըստ հայկական համայնքներ ունեցող չորս խոշոր տարածաշրջանների (Մերձավոր և Միջին Արևելք, Հյուսիսային և Հարավային Ամերիկաներ, Եվրոպա, հետխորհրդային երկրներ)՝ ավելի ցածր մակարդակով (ըստ երկրների) հայկական համայնքների վտանգվածության ցուցչի և աստիճանի գնահատումը, թերևս, թողնելով հետագա հետազոտություններին:

Բացի այդ, ակնհայտ է, որ վտանգվածության չափորոշիչներին տրված ցուցիչները մոտավոր են, քանի որ անհնար է ճշգրիտ քանակական տվյալներ ունենալ այն մասին, թե տվյալ համայնքում որքան են խառնամուսնությունները, կամ համայնքի անդամներից քանիսի մոտ ինչ չափով է պահպանված կամ կորսված ազգային ինքնության այս կամ այն բաղադ-

[1] Բանաձևը մշակելիս լատինականի փոխարեն կիրառվել են հայկական տառեր՝ ընթերցողի համար առավել մատչելի դարձնելու նպատակով:

րիչը, օրինակ՝ լեզուն (համայնքի անդամներից քանիսը և որքանով են տիրապետում հայերենին)։ Եթե վտանգվածության ֆիզիկական բաղադրիչների՝ արտագաղթի կամ գոյապահպանական սպառնալիքների հետևանքով համայնքների կրած կորուստները, ինչպես նաև Սփյուռքի մտավոր ներուժը, թեկուզ դժվարությամբ, այնուամենայնիվ, ենթարկվում են քանակական արտահայտության (չափումների), ապա հոգևոր բաղադրիչների՝ ինքնության կորստի և խառնամուսնությունների պարագայում դա անելը խիստ դժվար է, քանի որ խիստ դժվար է ճշգրիտ վիճակագրական տվյալների ձեռքբերումը։ Հետևաբար, Սփյուռքի վտանգվածության չափորոշիչներին տրված մեր քանակական գնահատականները հիմնված են ոչ թե ճշգրիտ վիճակագրության, այլ սփյուռքահայ մեր հայրենակիցների հետ ունեցած զրույցների, մամուլում, մասնագիտական գրականության մեջ առկա տվյալների, գնահատականների (հաճախ՝ ոչ քանակական) ու տեղեկատվության վրա։ Արդյունքում՝ մոտավոր է նաև մեր հաշվարկած Սփյուռքի համայնքների վտանգվածության համախումբ ցուցիչը։

Չնայած հիշյալ խնդիրներին, այնուամենայնիվ, սույն աշխատանքը որոշակի կարևորություն է ներկայացնում երկու առումով.

1. հնարավորություն է տալիս քանակական արտահայտություններով կամ չափումներով թեկուզ մոտավոր պատկերացում կազմել ժամանակակից հայկական սփյուռքի վտանգվածության, նրա առջև ծառացած մարտահրավերների մասին,
2. կարող է ծառայել որպես մեթոդաբանական հիմք կամ ուղեցույց՝ հետագա ավելի խորքային հետազոտությունների համար, երբ կդիտարկվեն առանձին տարածաշրջանների կամ երկրների հայ համայնքները՝ հաշվի առնելով նաև, որ այդ մակարդակով հետազոտությունները ժամանակային և ծավալային առումով ավելի տարողունակ են։ Այս համատեքստում մեթոդաբանության հետագա ճշգրտումներն ու բարելավումները բացառված չեն։

Սփյուռքի վտանգվածության աստիճանը

Անվտանգության մարտահրավերների առումով, հարկ է նշել, որ աշխարհի տարբեր տարածաշրջաններում գտնվող հայ համայնքները, պայմանավորված այդ տարածաշրջաններին բնորոշ գործոններով, որոշակիորեն տարբերվում են միմյանցից։ Եթե արևմտյան երկրների հայ համայնքների համար, օրինակ, որպես մարտահրավերներ գերակայում են ազգային նկարա-

գրի պահպանման և խառնամուսնությունների խնդիրները, ապա Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքներում առաջնային են գոյապահպանության և արտագաղթի խնդիրները: Իրավիճակն ավելի հստակ պատկերացնելու համար դիտարկենք այն ավելի մանրամասնորեն:

Այսպես, աշխարհագրորեն Սփյուռքի հայ համայնքները գտնվում են հիմնականում աշխարհի հետևյալ չորս խոշոր տարածաշրջաններում.

1. Հյուսիսային և Հարավային Ամերիկաներ (ԱՄՆ, Կանադա, Լատինական Ամերիկայի երկրներ)
2. Եվրոպա (Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Բուլղարիա, Ռումինիա, Հունգարիա, Հունաստան և այլն)
3. Հետխորհրդային տարածք (Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուս, Ղազախստան և այլն)
4. Մերձավոր և Միջին Արևելք (Լիբանան, Սիրիա, Իրան, Իսրայել, Թուրքիա և այլն):

Վերոհիշյալ մեթոդաբանությունը կիրառելով ըստ տարածաշրջանների հայկական սփյուռքի համայնքների վրա՝ կարող ենք տալ վերջիններիս դասակարգումն ըստ վտանգվածության աստիճանի:

Սկզբից եթե նշենք, որ դիտարկվող չորս տարածաշրջաններում էլ թե՛ անհատական և թե՛ ինստիտուցիոնալ մակարդակներով հայկական սփյուռքն ունի պատկառելի մտավոր ներուժ [մանրամասն տե՛ս, օրինակ, 12 և 13]: Անգամ Մերձավոր և Միջին Արևելքում, որը ամենաանբարենպաստ տարածաշրջանն է արտերկրի հայ համայնքների համար, գործում է Սփյուռքի միակ բուհը՝ Բեյրութի Հայկազյան համալսարանը [մանրամասն տե՛ս 14, էջ 42-51]: Այդ իսկ պատճառով էլ, չնայած մտավոր ներուժի հետ կապված լրջագույն խնդիրներին, ինչպիսիք են, օրինակ, թույլ համակարգվածությունը, ֆինանսական անբավարարությունը, թույլ կապերը տեղի հայ համայնքների ու հայաստանյան գիտական հանրության ու հաստատությունների հետ և այլն, բոլոր չորս տարածաշրջաններում էլ մտավոր ներուժի չափորոշիչով Սփյուռքի վտանգվածության ցուցիչը գնահատվել է միջին՝ 2 միավորով (տե՛ս *Աղյուսակը*):

Ինչպես երևում է *Աղյուսակից,* Սփյուռքի ամենավտանգված համայնքները գտնվում են Մերձավոր և Միջին Արևելքում: Դրանց վտանգվածության ցուցիչը, ըստ վերոհիշյալ մեթոդաբանության, կազմել է 12 միավոր, որով նրանք դասվում են վտանգվածության բարձր աստիճան ունեցող համայնքների շարքին:

Աղյուսակ

Սփյուռքի վտանգվածության ինդեքսն ու աստիճանը

ՎԱ	Տարածաշրջան	Գաղութատիպ-ոչպետական վերնվերով	Քանակ	Ազգային վերնվերի դրսևորումների բազմազանություն	Ազգային-հասարակական կազմակերպումներ	Մասավոր ինքնակազմակերպում	Ընդհանուր
Բարձր	Մերձավոր և Միջին Արևելք	3	3	2	2	2	12
Միջին	Հետխորհրդային երկրներ	2	1	3	2	2	10
Միջին	Հս. և Հվ. Ամերի-կաներ	0	0	3	3	2	8
Միջին	Եվրոպա	1	1	2	2	2	8

Գոյապահպանության խնդիրների և համայնքներից արտագաղթի չափորոշիչներով Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների վտանգվածության ցուցիչը գնահատվել է ամենաբարձր՝ 3-ական միավորով։ Այդ փոթորկահույզ տարածաշրջանում հայ համայնքները մշտապես տուժում են իրենց երկրների ներքին և արտաքին ցնցումներից։ Այստեղ առկա են հայ համայնքների ֆիզիկական անվտանգությանը սպառնացող, ինչպես նաև արտագաղթի պատճառ հանդիսացող վերը հիշատակված գրեթե բոլոր գործոնները՝ հայատյացությունը (Թուրքիա), ներքին և արտաքին պատերազմները (Սիրիա, Լիբանան, Իրաք, Իսրայել և այլն), կրոնական անհանդուրժողականությունը քրիստոնյաների նկատմամբ (Թուրքիա, Իրաք, Սիրիա և այլն), սոցիալ-տնտեսական ոչ այնքան բարենպաստ պայմանները, հայերի համար սոցիալ-քաղաքակրթական ոչ հարազատ միջավայրը և այլն։

Այս բոլորի արդյունքը Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների նոսրացումն ու հյուծումն է։ Օրինակ՝ համեմատած նախորդ դարի 50-ական թթ. հետ 21-րդ դարի սկզբին Լիբանանի հայ համայնքի թվաքանակը 120 հազ.-ից հասել է 70-80 հազ.-ի, Սիրիայինը՝ 150 հազ.-ից՝ 65-70 հազ.-ի, Թուրքիայինը՝ 200 հազ.-ից՝ 80 հազ.-ի, Իրանինը՝ 140 հազ.-ից 80 հազ.-ի և այլն [տվյալները տե՛ս 15, էջ 246 և 16, էջ 290, 508, 175, 235]։ Ընդհանուր առմամբ, եթե 1970-ական թթ. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում բնակվում էր մոտ 1 մլն հայ, ապա ներկայում այդ ցուցանիշը կազմում է մոտ 300 հազ. [17, էջ 133]։ Սիրիական վերջին ճգնաժամի հետևանքով հայ

համայնքը տվել է հարյուրավոր զոհեր, ամենալավատեսական գնահատականներով կրճատվել ավելի քան կիսով չափ: Իրաքյան պատերազմի (2003թ.) հետևանքով գրեթե սպառման եզրին է հասել այդ երկրի երբեմնի ծաղկուն հայ համայնքը:

Փոթորկահույզ իրադարձությունների կործանարար հետևանքները հայ համայնքների վրա առավել ցայտուն կերպով երևում են Քուվեյթի հայ համայնքի օրինակով: Նախքան 1991թ. Ծոցի պատերազմը (առաջին պատերազմ) այդ երկրում հայերի թիվը հասնում էր մոտ 25 հազ.-ի: Թեև պատերազմը տևեց շատ կարճ (մոտ 1.5 ամիս), և հայերը որևէ կապ չունեին վերջինիս հետ, այնուամենայնիվ, դրանից հետո հայ համայնքի թվաքանակը նվազեց 5 անգամ: Ներկայում Քուվեյթում ապրում է ընդամենը 5 հազ. հայ:

Ինչ վերաբերում է ինքնության բաղադրիչների կորստին և խառնամուսնություններին, ապա այստեղ գերակշռող իսլամական միջավայրը, ինչպես նաև քաղաքական և տնտեսական գործունեության բնագավառներում սահմանափակումները որոշակիորեն առանձնացնում են հայ համայնքներին տեղի հասարակություններից[1]: Այս հանգամանքը որոշակիորեն նպաստում է ինչպես լեզվի և ազգային ինքնության մյուս բաղադրիչների պահպանմանը, այնպես էլ սահմանափակում է խառնամուսնությունների քանակը, ինչի արդյունքում էլ Մերձավոր և Միջին Արևելքի հայկական սփյուռքը, պահպանելով իր ավանդականությունը, երկար ժամանակ՝ մոտ 3-4 սերունդ, կարողացել է պահպանել նաև իր ազգային նկարագիրը և միևնույն ժամանակ մեծ մասամբ զերծ մնալ խառնամուսնություններից:

Վերջին տասնամյակներին, այնուամենայնիվ, այս չափորոշիչներով ևս նկատվում են անհանգստացնող միտումներ: Մասնավորապես, Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների ներկայացուցիչների շրջանում աստիճանաբար ավելի լայն տարածում է գտնում արաբախոսությունը՝ ի հաշիվ մայրենի լեզվի: Նույն միտումը կա խառնամուսնությունների պարագայում: Ըստ Բեյրութի Հայկազյան համալսարանի նախագահ Փոլ Հայդոստյանի, եթե 1960-70-ական թթ. Լիբանանի հայ համայնքում խառնամուսնությունները հազվադեպ երևույթ էին և ընդհանուր առմամբ դիտվում

[1] Չնայած առանձին հայ անհատներ իրենց տաղանդի և աշխատասիրության շնորհիվ կարողացել են մեծ հաջողությունների և բարձր դիրքերի հասնել Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հասարակություններում: Օրինակ՝ 2017թ. նոյեմբերին հայազգի գեներալներ Հովհաննես Քեշիշյանը և Պետրոս Լափաճյանը հրամանատարական պաշտոնների նշանակվեցին Լիբանանի նախագահական պալատի անվտանգության ծառայությունում [տե՛ս 18, նույնը՝ http://www.aztagdaily.com/archives/325019]

էին որպես ամոթալի երևույթ, ապա ներկայում դրանք ընկալվում են որպես սովորական[1]: Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքներում խառնամուսնությունների նկատելի աճը ժամանակին փաստել է նաև սիրիահայ ականավոր մտավորական, հայագետ, ներկայում՝ արդեն հայրենադարձ Հակոբ Չոլաքյանը: «Ես եկեղեցու պաշտոնյա չեմ, որ վիճակագրական տվյալներ ունենամ սիրիահայ համայնքում խառնամուսնությունների վերաբերյալ, բայց ամեն տարի հսկայական թվով աշակերտներ ունեմ, և բնական է, որ հենց առաջին օրվանից զգում եմ, թե ովքեր են խառնամուսնական ընտանիքների զավակներ: Որոշակի քանակությամբ երեխաներ կան, իհարկե, որոնց ծնողներից մեկն օտար է»,- նշում է Չոլաքյանը [17, էջ 98]:

Հաշվի առնելով հիշյալ միտումները՝ Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների վտանգվածության ցուցիչն ինքնության բաղադրիչների կորստի և խառնամուսնությունների չափորոշիչներով գնահատվել է միջին՝ 2-ական միավորով: Մխիթարական կարող է լինել այն, որ 15 միավորանոց սանդղակում Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների վտանգվածության համախումբ ցուցիչն առավելագույնը չէ, այլ երեք միավորով զիջում է դրան:

Մյուս տարածաշրջանների հայ համայնքները, ինչպես երևում է *Աղյուսակում*, դասվում են վտանգվածության միջին աստիճան ունեցող համայնքների շարքին: Սակայն վտանգվածության համախումբ ինդեքսը որոշակիորեն տարբեր է: Եթե հետխորհրդային երկրների հայ համայնքների պարագայում այն գնահատվել է 10 միավորով, ապա Հյուսիսային և Հարավային Ամերիկաների ու Եվրոպայի հայ համայնքների պարագայում՝ 8-ական միավորով:

Հետխորհրդային երկրների պարագայում վտանգվածության չափորոշիչներից ամենաբարձր ցուցիչը տրվել է ինքնության բաղադրիչների կորստին՝ հաշվի առնելով այդ երկրներում ուծացման խիստ բարձր տեմպերը: Ռուսաստանում, Ուկրաինայում, Վրաստանում և այլ երկրներում, որտեղ հաստատված հայության համար այնքան էլ խորթ չեն տեղի սոցիալ-քաղաքակրթական միջավայրերը, որտեղ հայությունը խորապես ինտեգրված է տեղի հասարակությունների մեջ, որտեղ հայերն իրենց վրա մեծապես կրում են նրանց սոցիալ-քաղաքակրթական ազդեցությունը, հայության ներկայացուցիչները լավագույն դեպքում արդեն երկրորդ սերնդի մակար-

[1] Փոլ Հայդոստյանն այս դիտարկումն արել է 2014թ. սեպտեմբերի 18-ին «Նորավանք» ԳԿՀ սեմինարի ժամանակ, տե՛ս Մերձավոր Արևելքի հայ համայնքները. հեռանկարներ և ռազմավարություն, http://noravank.am/arm/seminar/detail.php?ELEMENT_ID=12897

դակում մեծ մասամբ կորցնում են մայրենի լեզուն՝ հայախոսությունը, ինչպես նաև ինքնության մյուս բաղադրիչները: Մասնագիտական գնահատականի համաձայն՝ «...ռուսերենը շատ հայերի կողմից չի դիտվում որպես օտար լեզու, ինչն արագ հանգեցնում է համատարած ռուսախոսության և հայերենի արտամղման: Այս հանգամանքին նպաստում է այն, որ ռուսական միջավայրը մի շարք քաղաքակրթական ընդհանրությունների և ընդհանուր անցյալի հաշվին հակադիր մշակույթ չի ընկալվում, և դրա հաշվին ձուլվելուն դիմադրելու հստակ մեխանիզմներ և սահմանագծեր չեն հաստատվում, էթնոտարբերակիչ հատկանիշներ չեն ընդգծվում» [19, էջ 19]: Այս ամենի արդյունքում հետխորհրդային երկրների հայության շրջանում որպես ինքնության բաղադրիչներ թույլ կերպով մնում են Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ լինելը (ինչը հաճախ կրում է ձևական բնույթ) և թույլ ազգային հիշողությունը:

Գոյապահպանության խնդիրների և խառնամուսնությունների չափորոշիչներով վտանգվածության աստիճանը հետխորհրդային երկրների հայ համայնքներում գնահատվել է միջին՝ 2-ական միավորով: Գոյապահպանական խնդիրների առումով, թեև հետխորհրդային երկրներում իրավիճակն այն աստիճան անկայուն չէ, որքան Մերձավոր և Միջին Արևելքում, այնուամենայնիվ, այստեղ էլ ժամանակ առ ժամանակ տեղի են ունենում անկայունության դրսևորումներ՝ կապված պարբերաբար կրկնվող միջպետական և ազգամիջյան բախումների, սառեցված հակամարտությունների թեժացումների, ներքաղաքական ցնցումների, օտարերկրացիների նկատմամբ անհանդուրժողականության դրսևորումների, ահաբեկությունների և այլնի հետ: Աբխազական և օսական պատերազմները Վրաստանում, չեչենականը՝ Ռուսաստանում, Մերձդնեստրի ճգնաժամը Մոլդովայում, ռուս-վրացական հնգօրյա պատերազմը 2008թ. օգոստոսին, միջէթնիկ բախումները միջինասիական երկրներում և դրանց պատճառով միջպետական հարաբերություններում ժամանակ առ ժամանակ նկատվող լարվածությունը, գունավոր հեղափոխությունները, Դոնբասի պատերազմն ու ճգնաժամն Ուկրաինայում և այլն՝ դրա լավագույն վկայություններն են:

Ինչ վերաբերում է խառնամուսնություններին, ապա դրանք թեև բավական մեծ թիվ են կազմում հետխորհրդային երկրների հայ համայնքներում (ինչը տեղի հասարակությունների մեջ վերջիններիս խոր ինտեգրվածության վկայությունն է), այնուամենայնիվ, նկատի ունենալով, որ այդ համայնքները հիմնականում կազմված են հետխորհրդային շրջանում Հայաստանից արտագաղթածներից, կարող ենք ասել, որ վերջինների

շրջանում դեռևս թարմ է ավանդական հայկական ընտանիքի գաղափարը: Խոսքը վերաբերում է հատկապես իգական սեռի ներկայացուցիչներին: Հետևաբար, կարող ենք ասել, որ խառնամուսնությունները հետխորհրդային երկրների հայ համայնքներում թեև տարածված են, սակայն այնքան մեծ չափերի չեն հասնում, որպեսզի գնահատվեն ամենաբարձր՝ 3 ցուցանիշով:

Ինչ վերաբերում է արտագաղթին համայնքներից, ապա, չնայած հետխորհրդային երկրներում սոցիալ-տնտեսական պայմաններն այնքան բարենպաստ չեն, որքան Ամերիկայի և Եվրոպայի զարգացած երկրներում, սակայն այստեղի հայ համայնքների թիվը ոչ միայն չի նվազում, այլև ավելանում է Հայաստանից արտագաղթողների հաշվին: Այսինքն՝ հետխորհրդային երկրների հայ համայնքներում առկա է հակառակ գործընթացը. դրանք համալրվում են Հայաստանից արտագաղթողների հաշվին: Եվ չնայած Միջին Ասիայի երկրների իսլամական սոցիալ-քաղաքակրթական միջավայրերին, աշխարհիկ վարչակարգերի առկայությունն այդ երկրներում կանխում է կրոնական հողի վրա անհանդուրժողականությունը հայերի նկատմամբ և այդ կերպ չեզոքացնում հայերի հնարավոր արտագաղթը: Այնուամենայնիվ, կա բացառություն: Խոսքը Վրաստանի հայ համայնքի մասին է, որը, ավանդաբար լինելով աշխարհի հայաշատ երկրներից մեկը, ինչպես խորհրդային, այնպես էլ հետխորհրդային տարիներին գրանցել է հայերի թվաքանակի նվազման կայուն միտում: Համաձայն Վրաստանում վերջին մարդահամարի (2014թ.) տվյալների՝ հայերի թիվն այդ երկրում կազմում է մոտ 170 հազ.[1]: Խնդիրը կապված է սոցիալ-տնտեսական դժվարությունների, ինչպես նաև Վրաստանի ներքաղաքական կյանքում ազգայնականության դրսևորումների հետ:

Այսպիսով, չնայած հետխորհրդային երկրներում պարբերաբար դրսևորվող ցնցումներին և անկայունության միտումներին, հայ համայնքներն այդ երկրներում ներկայում մեծ հաշվով ֆիզիկական անվտանգության խնդիր չունեն, քանի որ կենսունակ են և շարունակաբար համալրվում են նոր ուժերով: Հաշվի առնելով այս հանգամանքները՝ այս տարածաշրջանի հայ համայնքների վտանգվածության ցուցիչն արտագաղթի չափորոշիչով գնահատվել է ցածր՝ 1 միավորով:

Եվրոպան և Հյուսիսային ու Հարավային Ամերիկաները քաղաքակրթական և որոշ չափով նաև՝ քաղաքական առումներով գտնվում են միևնույն՝ արևմտյան ծիրում: Հետևաբար, այս երկու տարածաշրջանների իրա-

[1] Грузия в цифрах – последняя перепись населения, http://sputnik-georgia.ru/georgia/20160429/231405303.html

վիճակների միջև կա որոշակի նմանություն: Այստեղի հայությունը հիմնականում չունի գոյապահպանության և արտագաղթի խնդիրներ: ԱՄՆ-ը, Կանադան, Արևմտյան և Արևելյան Եվրոպայի երկրները հիմնականում աչքի են ընկնում ներքաղաքական կայունությամբ: Այնտեղ սուր չեն նաև էթնիկ և կրոնական հակասությունները, որոնք ներքին և արտաքին տևական ու հաճախակի ցնցումների աղբյուր կարող են հանդիսանալ: Ինչ վերաբերում է արտագաղթին, ապա ներքին կայունությունն ու համեմատաբար բարեկեցիկ սոցիալ-տնտեսական պայմանները ոչ միայն չեզոքացնում են նման մարտահրավերի հնարավորությունը, այլև խթանում են սփյուռքի մյուս հայ համայնքներից, ինչպես նաև Հայաստանից հայերի ներհոսքը դեպի այդ երկրներ: Արդյունքում՝ այդ երկրների, հատկապես ԱՄՆ-ի, Կանադայի, Արևմտյան Եվրոպայի երկրների հայ համայնքները ոչ միայն չեն նոսրանում, այլև շարունակաբար համալրվում են նորեկ հայերով:

Փոխարենը այդ երկրներում սուր է դրված ուծացման կամ ազգային ինքնության կորստի խնդիրը: Ընդհանուր քրիստոնեական սոցիալ-քաղաքակրթական միջավայրը, տնտեսական և քաղաքական ազատությունները լայն հնարավորություն են ընձեռում հայությանը արագորեն ինտեգրվել այդ երկրների հասարակությունների մեջ՝ յուրացնելու նրանց լեզուն, սոցիալ-մշակութային արժեքները, բարձր դիրքերի հասնելու քաղաքական, հասարակական, մշակութային, տնտեսական և այլ բնագավառներում: Սա, մի կողմից, նպաստում է հայ համայնքների և ընդհանուր հայության ներուժի մեծացմանը, սակայն միևնույն ժամանակ որոշակի սպառնալիք է ստեղծում ազգային ինքնության պահպանման համար: Տեղական հասարակությունների մեջ սերտ և արագ ինտեգրման արդյունքում հայ համայնքների ներկայացուցիչները սերնդեսերունդ կորցնում են ազգային ինքնության բաղադրիչները:

Ի տարբերություն Մերձավոր և Միջին Արևելքի՝ արևմտյան երկրներում հայերի ձուլմանը նպաստում է ևս մի հանգամանք: Այստեղ ազգային ինքնությունը հաճախ ոչ թե ի ծնե տրված երևույթ է, այլ ձեռք է բերվում ընտրությամբ: Քանի որ Մերձավոր և Միջին Արևելքի շատ երկրների պետական կառուցվածքները հիմնված են կրոնական հիմքով բնակչության շերտավորման վրա, ապա մարդիկ էլ պետության կողմից դիտվում են որպես այս կամ այն համայնքի ներկայացուցիչ, այսինքն՝ պետությունը պաշտոնապես ընդունում է վերջիններիս պատկանելությունը այս կամ այն համայնքին: Հետևաբար, հայ համայնքում (հայկական ընտանիքում) ծնված անհատը պաշտոնապես համարվում է հայ: Նույն երևույթն առկա չէ

Արևմուտքի երկրներում, որտեղ յուրաքանչյուր անհատին է վերապահված ընտրել իր ազգային ինքնությունը: «Եթե Մերձավորարևելյան երկրներից, օրինակ՝ Լիբանանում, հայ լինելը մեծ ընտրության հարց չէ, քանի որ ի ծնե բոլոր հայ ծնողների զավակները պետական օրենքով պետք է պարտադիր կապվեն մի որևէ հայկական եկեղեցու հետ, Ֆրանսիայում, Ամերիկայում և մի շարք այլ երկրներում հայ լինելն առավել հաճախ միայն ինքնանույնացման և ընտրության հարց է»,- ասում է Միչիգանի համալսարանի դոկտոր Վահե Սահակյանը[1]:

Տեղական հասարակությունների և հայ համայնքների փոխադարձ ներթափանցումը լայնորեն խթանում են նաև խառնամուսնությունները, որոնք նորություն չեն. խառնամուսնությունների խնդիրը սրությամբ առկա է եղել դեռևս 19-րդ դարի վերջից՝ իր վրա հրավիրելով հայ հոգևոր և աշխարհիկ գործիչների ուշադրությունը [տե՛ս, օրինակ, 20, էջ 11-13]:

Ինչպես երևում է *Աղյուսակից*, Հյուսիսային և Հարավային Ամերիկաների և Եվրոպայի հայ համայնքների վտանգվածության ցուցիչը գնահատվել է 8-ական միավորով: Սակայն տարբեր չափորոշիչներով նրանց վտանգվածության ցուցիչները որոշակիորեն տարբեր են: Հյուսիսային և Հարավային Ամերիկաներում գոյապահպանության մարտահրավերների (աննշան բացառություններով) և արտագաղթի հետևանքով համայնքների քայքայման խնդիրներ չկան: Այդ պատճառով էլ հիշյալ չափորոշիչներով այդ տարածաշրջանի հայ համայնքների վտանգվածության ցուցիչները գնահատվել են 0-ական միավորով:

Փոխարենը, ամենաբարձր՝ 3-ական միավորով են գնահատվել մյուս երկու չափորոշիչներով (ինքնության բաղադրիչների կորստով և խառնամուսնություններով) այդ տարածաշրջանի հայ համայնքների վտանգվածության ցուցիչները, քանի որ Հյուսիսային և Հարավային Ամերիկաներում և՛ խիստ բարձր են ուծացման տեմպերը, և՛ խիստ շատ են խառնամուսնությունները: ԱՄՆ-ում, օրինակ, «Հայկական վարժարաններու ուսանողները՝ դպրոցին մէջ անգամ հայերէն չեն խօսիր» [21]:

Մի փոքր այլ է իրավիճակը Եվրոպայում: Թեև մինչև վերջին ժամանակներս Եվրոպան համարվում էր անվտանգ կեցության վայր, այնուամենայնիվ, վերջին տարիներին այնտեղ գրանցվող ահաբեկչությունները (2015թ. նոյեմբերին և 2016թ. հուլիսին՝ Փարիզում, 2016թ. մարտին՝ Բրյու-

[1] «Պատմագրությունը դեռևս չի արձանագրել հայրենիք վերադառնալու պատճառով այս կամ այն սփյուռքի ավարտը». Վահե Սահակյան, http://hayernaysor.am/պատմագրությունը-դեռևս-չի-արձանագրե-2/

սելում, դեկտեմբերին՝ Բեռլինում և այլն), ինչպես նաև Մերձավոր և Միջին Արևելքի ու Աֆրիկայի երկրներից միգրանտների գրեթե անկառավարելի ներհոսքը որոշակի անկայունության միջավայր են ստեղծում եվրոպական երկրներում, որի հետևանքով վտանգի մեջ են հայտնվում նաև հայ համայնքները: Օրինակ, 2015թ. նոյեմբերին Փարիզի ահաբեկչության ժամանակ զոհ գնաց նաև դեռատի մի հայ աղջիկ: Չնայած դրան, անկայունության դրսևորումները Եվրոպայում դեռևս այն աստիճանի ու ծավալների չեն, ինչպես Մերձավոր և Միջին Արևելքում: Դրանք համեմատաբար նոր երևույթ են հետպատերազմյան Եվրոպայում: Հետևաբար, գոյապահպանական սպառնալիքների չափորոշիչով Եվրոպայի հայ համայնքների վտանգվածության ցուցիչը գնահատվել է ցածր՝ 1 միավորով:

Համայնքներից արտագաղթի առումով իրավիճակը Եվրոպայում գրեթե նույնն է, ինչ հետխորհրդային երկրների և Հյուսիսային ու Հարավային Ամերիկաների հայ համայնքներում: Եվրոպայի հայ համայնքները նույնպես շարունակաբար համալրվում են Հայաստանից ու Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքներից հայերի ներհոսքի հետևանքով: Այնուամենայնիվ, հատկապես Արևելյան Եվրոպայի հայ համայնքներում (Հունաստան, Բուլղարիա և այլն), որտեղ տնտեսական պայմանները համեմատաբար անբարենպաստ են, նկատվում է հայերի գաղթ դեպի արևմտաեվրոպական երկրներ, ԱՄՆ և Կանադա: Սույն հանգամանքը հաշվի առնելով էլ՝ Եվրոպայում հայ համայնքների վտանգվածության ցուցիչն արտագաղթի չափորոշիչով գնահատվել է ցածր՝ 1 միավորով:

Ինչ վերաբերում է վտանգվածության մյուս չափորոշիչներին՝ ինքնության բաղադրիչների կորստին և խառնամուսնություններին, ապա այդ երևույթները նույնպես բավական տարածված են Եվրոպայի հայ համայնքներում: Բայց և այնպես, դրանք իրենց ծավալներով և աստիճանով որոշակիորեն զիջում են Հյուսիսային և Հարավային Ամերիկաների, ինչպես նաև հետխորհրդային երկրների (ինքնության բաղադրիչների կորստի առումով) հայ համայնքներում նկատվող նույն երևույթներին: Հետևաբար, այդ երկու չափորոշիչներով էլ Եվրոպայի հայ համայնքների վտանգվածության ցուցիչը գնահատվել է միջին՝ 2-ական միավորով:

Համեմատությունը ցույց է տալիս, որ չնայած Եվրոպայի և Հյուսիսային ու Հարավային Ամերիկաների հայ համայնքների առջև ծառացած են նույն մարտահրավերները, այնուամենայնիվ, գոյապահպանության և արտագաղթի հետևանքով համայնքների քայքայման խնդիրները մի փոքր ավելի սուր են Եվրոպայի, իսկ ինքնության բաղադրիչների կորստինն ու

խառնամուսնություններինը՝ Հյուսիսային և Հարավային Ամերիկաների հայկական սփյուռքում:

Այսպիսով, աշխարհի վերոհիշյալ չորս տարածաշրջանների հայ համայնքներն ունեն վտանգվածության բարձր կամ միջին աստիճան: Բարձր աստիճանի վտանգվածություն ունեն Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքները (համախումբ 12 միավոր): Հետխորհրդային երկրների, Հյուսիսային ու Հարավային Ամերիկաների և Եվրոպայի հայ համայնքները՝ համապատասխանաբար 10, 8 և 8 համախումբ միավորներով, կազմում են Սփյուռքի՝ վտանգվածության միջին աստիճան ունեցող համայնքները: Վտանգվածության ցածր աստիճան ունեցող համայնքներ, համաձայն մեր դիտարկումների, Սփյուռքում, ցավոք, չկան:

Փետրվար, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Նաթալի Շ.,* Թուրքերը եւ մենք, Եր., 2015:
2. *Մինասյան Էդ.,* Հայրենիք-Սփյուռք կապերի հիմնական ուղղությունները, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողով, զեկուցումների ժողովածու, Եր., «Լիմուշ», 2009:
3. *Մինասյան Էդ.,* Հայրենիք-Սփյուռք մշակութային առնչությունները 1990-ական թթ., «Նոր-դար», թիվ 4, 2004:
4. *Զաքարյան Հ.,* Լեզվաշինության արդի խնդիրները հայերենի մրցունակության բարձրացման տեսանկյունից, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով. «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», զեկուցումների դրույթներ, Եր., «Գիտություն», 2013:
5. *Նալչաջյան Կ.,* Հայրենիք և հայրենասիրություն (հոգեբանական վերլուծություն), Հայաստանի անվտանգությունը տարածաշրջանային ռազմաքաղաքական գործընթացների համատեքստում, Եր., ԵՊՀ հրատ., 2013:
6. *Մարության Հ.,* Ցեղասպանության հարյուրամյա հիշողությունը և «ամերիկահայ ազգության» ձևավորման գործընթացը, Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում, գիտաժողովի զեկուցումներ, Եր., ԵՊՀ հրատ., 2013:
7. *Մինասյան Էդ., Վարդանյան Ա.,* Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009թթ.), հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, «Պոլիգրաֆ», 2010:
8. *Հովյան Վ.,* Մերձավոր Արևելքի հայ ավետարանական համայնքները, «21-րդ ԴԱՐ», թիվ 4, 2012:
9. *Հովյան Վ.,* Հայկական սփյուռքի փոխակերպումը. մարտահրավերներ և հնարավորություններ, «Գլոբուս», թիվ 5, 2013:

10. *Մելքոնյան Ռ.,* Թուրքիայի հայության որոշ խնդիրներ, «Հանրապետական», թիվ 6, 2009:
11. *Ղանալանյան Տ.,* Սփյուռքի ներքին տեղաշարժերը 1945-1988 թվականներին, պատմական գիտությունների թեկնածուի ատենախոսության սեղմագիր, Եր., 2016:
12. *Հարությունյան Գ., Սիմավորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ.,* Սփյուռքի գիտավերլուծական հանրությունը. կազմակերպչական խնդիրներ և համագործակցության հեռանկարներ, Եր., «Գասպրինտ», 2013:
13. *Սիմավորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ.,* Արտերկրի հայագիտական կենտրոնները. ներուժի գնահատում, Եր., «Գասպրինտ», 2014:
14. *Ղանալանյան Տ.,* Բեյրութի Հայկազյան համալսարանը, «Գլոբուս», թիվ 2, 2013:
15. *Գասպարյան Ս.,* Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր. մշակութային կյանքի ուրվագիծ, Եր., Հայաստանի պետական հրատարակչություն, 1962:
16. «Հայ սփյուռք» հանրագիտարան, գլխ. խմբագիր՝ Այվազյան Հ., Եր., Հայկ. հանրագիտարան. հրատ., 2003:
17. *Փաշայան Ա., Հարությունյան Լ.,* Սիբիրյայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Եր., «Լուսակն», 2011:
18. Հայազգի Երկու Զօրավարներ Պաշտօնի Կոչուած՝ Նախագահական Պալատին Մէջ, Ազդակ, նոյեմբեր 17, 2016:
19. *Ժամակոչյան Ա.* և ուրիշներ, Հետխորհրդային երկրների հայկական համայնքների ինքնության խնդիրները և տեղեկատվական ռեսուրսները, Եր., «Գասպրինտ», 2010:
20. *Ավագյան Ք.,* Թուրքիայի հայոց պատրիարքարանի դիվանի փաստաթղթերը ԱՄՆ-ի հայ գաղութի վերաբերյալ (XIXդ. վերջ – XXդ. սկիզբ), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ (XIX), Եր., «Զանգակ-97», 2000:
21. *Քէօշկէրեան Գ.,* Ո՞ւր կերթաս, հայ ժողովուրդ..., Նոր օր, դեկտեմբերի 29, 2016:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Վահրամ Հովյան

Ամփոփագիր

Սփյուռքի հայ համայնքները հիմնականում բախվում են հինգ մարտահրավերների՝ ինքնության բաղադրիչների կորուստ, խառնամուսնություններ, գոյապահպանության սպառնալիքներ, արտագաղթ համայնքներից և մտավոր ներուժի կազմակերպման խնդիրներ: Տարբեր տարածաշրջաններում այս մարտահրավերներն ունեն սրության տարբեր մակարդակ: Ընդհանուր առմամբ՝ վտանգվածության բարձր աստիճան ունեն Մերձավոր և Միջին Արևելքի

հայ համայնքները: Հետխորհրդային երկրների, Հյուսիսային ու Հարավային Ամերիկաների և Եվրոպայի հայ համայնքներն ունեն վտանգվածության միջին աստիճան: Ցածր աստիճանի վտանգվածություն ունեցող համայնքներ Սփյուռքում, ցավոք, չկան:

ВЫЗОВЫ БЕЗОПАСНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ

Ваграм Овян

Резюме

Армянские общины Диаспоры в основном сталкиваются с пятью вызовами: утрата компонентов идентичности, смешанные браки, угрозы жизни, миграция из общин и проблемы организации интеллектуального потенциала. В разных регионах эти вызовы проявляются с разной степенью остроты. В целом, наибольшая степень уязвимости у армянских общин Ближнего и Среднего Востока. У армянских общин постсоветских стран, Северной и Южной Америки средняя степень уязвимости. К сожалению, в Диаспоре нет общин с низким уровнем уязвимости.

SECURITY CHALLENGES OF ARMENIAN DIASPORA

Vahram Hovyan

Resume

Armenian Diaspora communities mainly face five challenges: loss of identity components, mixed marriages, threats to survival, emigration from communities and problems of organizing the intellectual potential. In various regions these problems are at different levels of severity. Generally, Armenian communities of the Near/Middle East face high level of threat to their survival. In ex-Soviet countries, North and South America and Europe, Armenian communities are mildly endangered. Unfortunately, there are no Diaspora communities that face only minor risks.

ՀՏԴ 355.013.1

ՌԴ ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ. ՍԿԱՆԴԻՆԱՎՅԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՈՐՈՇ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Վահագն Ազլյան*

Բանալի բառեր ՝ Ռուսաստանի Դաշնություն, ռազմական կարողություններ, զինված ուժեր, սկանդինավյան հետազոտական կենտրոններ, հեռահար հնարավորություններ:

Կարողությունները չափազանց կարևոր բաղադրիչ են ոչ միայն պետական ինստիտուտների զարգացման ու արդիականացման գործում, այլ նաև սկզբունքային դերակատարում ունեն քաղաքականության մշակման և իրականացման հարթությունում: Կարողություններն, անշուշտ, ներառում են ինչպես նյութական ու ֆիզիկական, այնպես էլ քաղաքական ու հոգեբանական տարրեր: Դրանք ուղղակիորեն փոխկապակցված են ազգային հզորության չափումների հետ: Օրինակ, սահմանումներից մեկի համաձայն՝ ազգի/պետության (ազգային) հզորությունը 3 մակարդակներում է երևակվում. 1) ռեսուրսներ կամ կարողություններ (ուժի առկայություն), 2) ինչպես են այդ կարողությունները վերափոխվում (կոնվերտացիա), 3) հզորության վերջնարդյունքները [1, p. 1]: Այս ընկալման շրջանակում պետությունը դիտարկվում է իբրև «կարողությունների մի արկղ», որը կարիք ունի փոխակերպելու նյութական ռեսուրսները (ուժային) գործիքակազմի, որոնց շարքում կարող են լինել, օրինակ, ռազմական գործողություններ վարելու հմտությունները: Այսպիսով, հզորությունը միայն կարողությունները չեն, այլ նաև այդ կարողությունները փոխակերպելու ընդունակությունը, որն էլ, իր հերթին, կհանգեցնի հաջողված վերջնարդյունքների:

Դրա հետ մեկտեղ, հարկ է նկատել, որ կարողությունների թեման ավելի լայն քաղաքական և պատմական համատեքստի մաս է կազմում: Այսպես, պետության քաղաքականապես զարգացած լինելու բնորոշումնե-

* «Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ:

րի հենքում ընկած են տարաբնույթ չափանիշներ և չափորոշիչներ: Չնայած այդ բազմազանությանը՝ գիտնականների մեծ մասը քաղաքական զարգացածության գլխավոր նախադրյալ է տեսնում համակարգի կողմից հենց անհրաժեշտ կարողությունների, հնարավորությունների, ինչպես նաև հարատև աճի/զարգացման ներուժի առկայությունը: Ռեսուրսային ներուժի գոյությունը քաղաքական զարգացման կարևորագույն նախադրյալն է [2, p. 116]: Ս.Էյզենշտադտը և Ա.Դիամանտը հիշյալ մոտեցման հիմնական ջատագովներն են՝ գտնելով, որ քաղաքական զարգացումը տվյալ պետության համապատասխան կարողությունն է հարմարվելու և զարգանալու՝ նոր մարտահրավերներին ընդառաջ: Ս.Էյզենշտադտի կարծիքով՝ կայուն քաղաքական զարգացումը մոդեռնիզացման կենտրոնական պրոբլեմն է [3, p. 98]: Ըստ տեսաբանների՝ ճիշտ չէ ավանդական քաղաքական համակարգերի զարգացումը դիտարկել զուտ արևմտյան զարգացած պետությունների համակարգային չափորոշիչներով կամ համահավասարեցնել դրանք. «քաղաքական զարգացումը գործընթաց է, որի միջոցով քաղաքական համակարգը ձեռք է բերում *կարողություններ*՝ հաջողությամբ և հետևողականորեն հասնելու նոր նպատակների, հարմարվելու նոր տիպի պահանջներին, ինչպես նաև ստեղծելու նոր տիպի կազմակերպություններ» [4, pp. 4-15]:

Կարողությունների տիրապետումը սկզբունքային նշանակություն ունի քաղաքական իշխանության պահպանման և վերարտադրության ապահովման տեսանկյունից: Տեսակետներից մեկի համաձայն՝ ավտորիտար կամ կիսավտորիտար իշխանական ռեժիմների պարագայում «օպերացիոնալ» բնույթի 3 փոխկապակցված չափումներ են առկա, որոնք էլ կազմում են իշխանական կարողությունների հենքը. ավտորիտար պետական իշխանություն, էլիտայի կազմավորման և կազմակերպման առանձնահատկությունները, ինչպես նաև *know-how*-ի առկայությունը [5, pp. 234-235]: Ընդ որում՝ ավտորիտար պետական իշխանությունը ներառում է երեք չափումներ. գործող իշխանության կողմից *վերահսկման* կարողությունները, այդ կարողությունների *ծավալը* և *չափը* [5]:

Քաղաքականության մշակման և իրականացման վարույթում (*policy making and policy implementation*) կարողությունների նշանակությունն առավել ակնհայտ է դառնում, քանի որ հենց կարողություններն են հանդիսանում պետության կամ հասարակության տիրապետության ներքո գտնվող *ռեսուրսների* և կիրառվելիք (նախընտրելի) *գործիքների* միջև կապող կարևորագույն օղակը: Ֆրանսիական դպրոցը ռեսուրսներն անվանում է արտաքին քաղաքականության «հիմնական շարժիչ ուժը», տվյալ պետու-

թյան առավելությունների հանրագումարը, որը բխում է նրա աշխարհագրական դիրքից, կլիմայից, բնակչության չափից, կրթական մակարդակից, զարգացածության աստիճանից [6, pp. 130-133]:

Արտաքին քաղաքականության պարագայում պետությունների միջև տարբերություններն առավել ցայտուն են դառնում: Մեծ տերություններն իրենց տիրապետության ներքո ունեն բավական լայնածավալ գործիքակազմ՝ սկսած *hard՝* հզորության առավել զորեղ տեսակներից մինչև *soft՝* ազդեցության գործուն լծակներ: Նրանք կարող են նաև գործել իրենց աշխարհագրական զոտու սահմաններից դուրս, նույնիսկ գլոբալ մակարդակում: Դա, ըստ էության, գերտերության (*superpower*) առարկայական հատկանիշն է, երբ վերջինս կարող է որոշել վերջնարդյունքներն աշխարհագրական ցանկացած տարածքում՝ ցանկացած միջոցների/գործիքների օգտագործմամբ: Փոքր պետությունների համար, մյուս կողմից, իրական մարտահրավեր է սեփական ինքնավարության պահպանումը:

Այս համատեքստում, արտաքին քաղաքականության իրագործման գործիքների ընտրության հիմնախնդիրն ըմբռնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել երկու նկատառում. *նախ՝* գործիքները որպես այդպիսին կախված են դրանց հիմքում ընկած կարողություններից, որոնք իրենց հերթին ածանցյալ են տվյալ հասարակության տնօրինության ներքո գտնվող ռեսուրսներից; *երկրորդ՝* որոշումներ կայացնողները չեն ընտրում այս կամ այն գործիքը, ինչպես, օրինակ, դա կաներ վիրաբույժը գործողությունից առաջ. ընդհակառակը՝ առկա գործիքների բնույթն է որոշում ընտրվելիք քաղաքականության/մոտեցման հենքը [6]:

Վերոհիշյալի համատեքստում, համաշխարհային քաղաքականության ներկա փուլում առավել արդիական է դառնում խոշոր դերակատարների կարողությունների գնահատումը, ինչը վերջիններիս նպատակադրումների հետ մեկտեղ միջազգային և տարածաշրջանային զարգացումների (միտումների) կանխատեսման կարևոր աղբյուրներից մեկն է: Գործնական տեսանկյունից, կարողությունների գնահատումը կարևորվում է երկու դիտանկյունից: Նախ՝ համակարգված տեղեկություններն այդ ոլորտում կարող են հնարավորություն ընձեռել հարաբերականորեն ավելի լավ հասկանալու և «ներսից» ըմբռնելու այս կամ այն պետության արտաքին քաղաքականության տեսլականի ընտրությունը: Երկրորդ՝ կարողությունները որպես այդպիսին այն մատրիցան են, որի միջոցով է երևակվում կապը ներքին և արտաքին չափումների միջև:

Անկասկած, անվտանգության և պաշտպանական բնագավառում ՌԴ կարողությունների (գնահատման) հիմնահարցը շարունակում է մնալ արևմտյան ինստիտուտների ուշադրության կենտրոնում, մինչդեռ Վ.Պուտինի 2016թ. հայտարարությունը, թե «կարևոր է ներուժը, այլ ոչ թե մտադրությունները», ըստ էության, փաստում է ռուսաստանյան ղեկավարության կողմից մայրցամաքում ստեղծված ռազմաքաղաքական իրադրության ռեալիստական ընկալման մասին:

Հյուսիսային Եվրոպայի սկանդինավյան մի շարք պետությունների համապատասխան գերատեսչական մարմինների կողմից ՌԴ ռազմական և ռազմաքաղաքական կարողությունները գնահատող և վերլուծող աշխատությունների ընտրությունը պայմանավորված է մի քանի նկատառումներով: Նախ՝ այդ երկրները գտնվում են ՌԴ – ՆԱՏՕ անմիջական և ուղղակի շփման գծում, որի սահմանագոտին անցնում է մերձբալթյան տարածաշրջանով: Հենց այստեղ են ուղիղ սահմանային «շփման» մեջ գտնվում ռուսաստանյան և արևմտյան զորքերն ու ռազմական ենթակառուցվածքները, ինչն իր հերթին օբյեկտիվորեն ենթադրում է վերջիններիս կողմից առավել իրապաշտական գնահատականների և հավասարակշռված վերլուծությունների մշակում: Երկրորդ՝ հիշյալ երկրների պաշտպանական և անվտանգության բնագավառի գերատեսչությունները ՌԴ ռազմական և հարակից այլ կարողությունների գնահատման և վերլուծության հարատև ավանդույթներ ունեն, որոնք սկիզբ են առնում դեռևս խորհրդային ժամանակներից: Ինչ վերաբերում է ժամանակակից Ռուսաստանին, ապա, օրինակ, Շվեդիայի պաշտպանության նախարարությունն ավանդաբար գնահատում է ռուսաստանյան ռազմական կարողությունների տասնամյա հորիզոնը դեռ 1998/99թթ. ի վեր[1]: Երրորդ՝ ոչ բոլոր սկանդինավյան երկրներն են հանդիսանում ՆԱՏՕ անդամ պետություններ, թեև պահպանում են սերտ ռազմաքաղաքական և ինստիտուցիոնալ կապեր դաշինքի հետ (օրինակ՝ Շվեդիան և Ֆինլանդիան դեռևս չեն անդամակցում ՆԱՏՕ-ին՝ ի տարբերություն Դանիայի և Նորվեգիայի): Վերջին հանգամանքը որոշակի հետազոտական արժեք կարող է ներկայացնել՝ համեմատական համատեքստում հասկանալու գնահատականների նմանություններն ու տարբերությունները:

Վերջապես, հաշվի առնելով սկանդինավյան պետությունների ակադեմիական և հետազոտական աշխատանքների (այդ թվում նաև պետական-գերատեսչական մակարդակում) բարձր մակարդակը՝ վերջիննե-

[1] FOI, www.foi.se/en/

րիս կողմից իրականացված հետազոտությունները կարող են մեթոդաբանական տեսանկյունից արժևորվել որպես «օրինակելի» ուսումնասիրություններ այլ պետությունների կամ տարածաշրջանային ռազմական և հիբրիդային կարողությունների գնահատման հոլովույթում: Ստորև անդրադարձել ենք Դանիայի պաշտպանական և հետախուզական ծառայության ամենամյա զեկույցի՝ ՌԴ-ին վերաբերող հատվածին[1], Նորվեգիայի հետախուզական ծառայության ամենամյա զեկույցին[2], ինչպես նաև Շվեդիայի պաշտպանության նախարարության հետ համակցված *FOI* հետազոտական կառույցի հերթական՝ «Ռուսաստանի ռազմական կարողությունները տասնամյա հեռանկարում – 2016» աշխատությանը[3]:

Բացի սկանդինավյան հիմնաղբյուրներից՝ որպես հղման աղբյուրներ որոշ դեպքերում կանդրադառնանք նաև արևմտյան այլ կենտրոնների գնահատականներին, որոնք կվերաբերեն ՌԴ-ին կամ տարածաշրջանային անվտանգության հարցերին: Օրինակ՝ 2016թ. Ռուսաստանի ռազմական ներուժի համապարփակ ընդհանրական գնահատականը, որը ներկայացրել է հեղինակավոր *The Military Balance* 2017 (Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտ), ընդհանուր առմամբ համահունչ է սկանդինավյան գերատեսչությունների մոտեցումներին. «ՌԴ զինված ուժերը շարունակում են յուրացնել նոր ներդրումներ, որոնք ներառում են ավելի կատարելագործված զինատեսակների ներմուծում հնացածների փոխարեն: ՌԴ զինված ուժերը նաև պահպանում են նշանակալի ուժային գերակայություն ավանդական ոլորտներում, ինչպիսիք են զրահատեխնիկան և էլեկտրոնային ռազմական բնագավառը, կարողությունները հրթիռային հրետանային համակարգերում»[4]:

Ուշագրավ է, որ բոլոր հետազոտական խմբերի համար որպես մեկնարկային ջրբաժան-տարեթվեր են հանդիսանում 2008, ապա՝ 2014 թվականները: Առաջինն ընկալվում և ներկայացվում է որպես ռուս-վրացական զինված դիմակայությանը հաջորդած ռուսաստանյան ռազմական համակարգի բարեփոխման մեկնարկ[5], մինչդեռ 2014-ը՝ ռազմաքաղաքական

[1] *Intelligence Risk Assessment 2016: an Assessment of developments abroad impacting on Danish Security*, Danish Defence and Intelligence Service, 2016:
[2] *FOCUS 2017*, The Norwegian Intelligence Service: assessment of current security challenges, Norway 2017:
[3] *Russian Military Capability in a Ten-Year Perspective – 2016*, G. Persson (ed.), FOI-R-4326-SE, December 2016:
[4] The Military Balance 2017, IISS, UK, 2017, Press Launch, p. 2.
[5] *D.Trenin,* The Revival of the Russian Military: How Moscow Reloaded, *Foreign Affairs*, May-June, 2016 [www.foreignaffairs.com/articles/Russia-fsu/2016-04-18/revival-russian-military]:

առումով հաջողված «միահյուսված» գործողությունների օրինակ, երբ Ղրիմը միակցվեց Ռուսաստանի հետ՝ առանց որևէ լուրջ զինված միջադեպերի գրանցման:

Հատկանշական է, որ շվեդական հետազոտությունը փաստում է կարևորագույն «հարացուցային» տեղաշարժի մասին, որ հնարավոր է գրանցել ՌԴ ռազմավարական կարողությունների ակտիվում. «2013թ. մենք ելնում էինք այն կանխադրույթից, որ ՌԴ-ն արձագանքում է ի հայտ եկող սպառնալիքներին՝ չտիրապետելով ժամանակային ռեսուրսների՝ պատրաստվելու գործողություններ վարելուն: Վերջին իրադարձությունների լույսի ներքո՝ այժմ մենք գնահատում ենք առկա ակտիվները՝ ռազմական գործողություններ վարելու այնպիսի իրավիճակներում, երբ Ռուսաստանն ինքն է հանդես գալիս նախաձեռնողի դերում»[1]:

Այս համատեքստում, Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի հնարավոր «ֆինլանդականացման» մասին է նախազգուշացնում նաև ԱՄՆ հետազոտական կենտրոններից մեկի զեկույցը: Ըստ հեղինակի, Ռուսաստանը ՆԱՏՕ արևելյան ողջ սահմանագծի երկայնքով (Բալթյան երկրներից մինչև Բալկաններ) տեղակայում է արտաքին միջամտությունն արգելափակող «անձրևանոց» (A2/AD[2]). համալիր միջոցների և տեխնիկական կարողությունների համախումբ, որը կպատնեշի ՆԱՏՕ ներթափանցման կարողությունները: Ինչպես խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի արևմտյան հատվածում՝ Չինաստանի պարագայում, այստեղ ևս ուժային հավասարակշռությունը հօգուտ Ռուսաստանի փոփոխման ակնհայտ միտումներ են առկա: Սակայն հատկանշական է, որ ամերիկյան հետազոտության մեջ ՌԴ-ն չի ձգտում կրկնօրինակել ամերիկյան մեթոդներն ու ազդեցության եղանակները, բայց հենվում է առաջատար տեխնոլոգիաների և ռազմական բնույթի համակարգերի կիրառման նոր մոտեցումների վրա՝ արդիական հիբրիդային զորքերի և միջուկային հնարավորությունների ներգրավմամբ [7, p. 51]: Զեկույցի հեղինակի կարծիքով, եթե A2/AD կիրառումը վերածվի «սովորական» պրակտիկայի, ապա այն կարող է լրջորեն փոփոխել ռազմական հավասարակշռությունը Եվրասիայի ծայրամասերում՝ ի վնաս ԱՄՆ-ի:

Ամերիկյան հետազոտողները նույնպես հակված են ժամանակակից Ռուսաստանը դիտարկել իբրև ռևիզիոնիստական տերություն, որը, Չինաստանի և Իրանի հետ մեկտեղ, ի զորու է փոխակերպել ռազմավարական հավասարակշռությունը հանգուցային մակրոտարածաշրջաններում,

[1] *Russian Military Capability in a Ten-Year Perspective – 2016,* p. 18:
[2] A2/AD – Anti-Access/ Access Denial.

որտեղ ԱՄՆ-ը կենսական շահեր ունի: Բոլոր երեքն ի վիճակի են «ներազդելու ռազմական հավասարակշռության վրա իրենց աշխարհագրական տարածաշրջաններից դուրս՝ ուժերի հեռահար տեղակայման, հեռահար զինատեսակների կիրառման և իրենցից կախյալ պետությունների կամ ուժերի միջոցով» [7. p. 4]: Ավելին, նույն զեկույցի համաձայն, ՌԴ-ն ի զորու է վերափոխելու եվրոպական ռազմական թատերաբեմը հօգուտ իրեն, մինչ ամերիկյան ռազմական ներուժը կփորձի հետ բերել «կորսված տարածքները»՝ օգտագործելով եվրոպական թատերաբեմի ռազմավարական խորությունը և Արևմտյան Եվրոպայում ունեցած դիրքերը: Այլ խոսքերով՝ Արևելյան և Հարավային Եվրոպան տեսականորեն կարող են «զիջվել» Ռուսաստանին բացահայտ առճակատման պարագայում. մի բան, որ անհնարին էր տեսնել արևմտյան վերլուծություններում հետխորհրդային զարգացման առաջին փուլում:

Ընդհանուր առմամբ, բոլոր երեք սկանդինավյան հետազոտությունները վերլուծում են Ռուսաստանի կարողությունները «օպերացիոնալ» հարթությունում՝ գլխավորապես կենտրոնանալով ՌԴ պաշտպանական և հարձակողական կարողությունների վրա՝ կապված հենց իրենց հարակից մակրոտարածաշրջանի հետ: Այս համատեքստում, որպես կարողությունների գնահատման հարթություններ երկու ասպեկտներ են առանձնացվում. նախ՝ բուն նյութական կարողությունների հարթությունը (զինտեխնիկա, նոր զինատեսակներ, ենթակառուցվածքներ), ապա՝ այսպես կոչված «տրանսակցիոն» և լոգիստիկ կարողությունների տիրույթը, որն անմիջականորեն կապված է զինված ուժերի կառավարման որակի, որոշումների կայացման արագության ու գործողությունների արագագործության հետ: Այդ ամենի հետ համադրվում են «հիբրիդային» կարողությունները, որոնք, ի թիվս այլոց, ենթադրում են տարբեր պլատֆորմների միջև բարձր օպերացիոնալ համադրման հմտությունների զարգացում: Ի դեպ, ուշագրավ է, որ 2014-ից ի վեր փափուկ ուժի հայեցակետը սկսեց դիտարկվել նույն մակարդակում, ինչ ռազմավարական զսպումը. մի բան, որ տիպական էր միայն միջուկային զինատեսակների դասին կամ հեռահար բարձր ճշգրտության զինատեսակներին [8]:

Մասնավորապես, դանիական Ռիսկերի գնահատման զեկույցում մատնանշվում է ՌԴ ղեկավարության «ներկայիս կարողությունը՝ դիմելու կոշտ և վճռական որոշումների կայացման և ռազմական միջոցների օգտագործման՝ հասնելու երկրի առջև կանգնած ռազմավարական նպատակ-

ների ապահովմանը»[1], նկատի ունենալով Սիրիայում մեկնարկած գործողությունը: Ավելին, ի տարբերություն այլ պետությունների՝ որոշումների կայացման ժամանակահատվածը Ռուսաստանի պարագայում չափազանց կարճ է տևում, ինչը «հնարավորություն է ընձեռում Ռուսաստանի ղեկավարությանն արագ և կոշտ քաղաքական նախաձեռնություններ իրագործել Արևմուտքի հանդեպ»[2]:

Չնայած տնտեսական անկմանը՝ ՌԴ զինված ուժերի կարողությունները, ինչպես նաև նրանց կիրառման հնարավորություններն աճել են: Սիրիական գործողությունները փաստում են, որ Ռուսաստանն ի զորու է պահպանել բարձր օպերացիոնալ թափը և ինտեգրել հասանելի միջոցների լայն շրջանակ: Տեխնոլոգիապես բարձրակարգ զինատեսակների մշակումն ու զարգացումը կշարունակվի նաև 2017թ. ընթացքում՝ չնայած բյուջետային կրճատումներին և մի շարք ծրագրերի ժամանակավոր սառեցմանը[3]:

Ըստ նույն աղբյուրի, տարիներ շարունակ ներգրավված լինելով հակամարտություններում՝ Ռուսաստանի զինված ուժերը մարտական գործողություններ պլանավորելու և իրականացնելու նշանակալի փորձ են ձեռք բերել: Դրա հիմքում ընկած են նաև պրագմատիկ նկատառումներ՝ փորձարկել այսպես կոչված «մարտավարական խմբեր», ինչպես նաև օգտագործելով քաղաքացիական նավեր՝ լռեցնել ռազմական տրանսպորտային կարողությունների պակասորդը: Այս գնահատականին համահունչ են դանիական զեկույցի կանխադրույթները. Ռուսաստանը զգալիորեն բարձրացրել է իր արևմտյան սահմանին տեղակայված զինված ուժերի ոչ միայն մարտական պատրաստվածության աստիճանը, այլ նաև նրանց քանակը. «ՌԴ ռազմական հզորացումն ու արդիականացումը կզորեղացնեն ռուսաստանյան զինված ուժերի կարողությունը՝ բարձր ինտենսիվության մարտական գործողություններ վարելու Արևմուտքի դեմ, թեև Ռուսաստանը չի գնա ՆԱՏՕ-ի հետ ուղղակի առճակատման ռիսկի»: 2016-ից ի վեր Մոսկվան սկսեց իրականացնել իր ծրագրած ռազմական նախաձեռնությունները, իսկ հիմնական փոփոխությունները վերաբերում են ցամաքային ուժերի կարողությունների մեծացմանը:

Զինված ուժերի կիրառման արդյունավետությունն անմիջականորեն փոխկապված է Ռուսաստանի կողմից բոլոր հասանելի միջոցների միաժա-

[1] *Intelligence Risk Assessment 2016: an Assessment of developments abroad impacting on Danish Security,* p. 11.
[2] Նույն տեղում:
[3] *FOCUS 2017,* p. 9.

մանակյա օգտագործման պատրաստակամության և կարողության հետ: Ուժերի հանկարծակի տեղափոխման հնարավորությունների տիրապետումը պահանջում է ռազմավարական տրանսպորտային կարողություններ, արագ արձագանքման ուժեր և համակարգված ջանքեր՝ քողարկելու նմանատիպ տեղաշարժերը: Ռուսաստանը կատարելագործել է այդ ոլորտներում իր կարողությունները՝ վերջին 5-6 տարիների ընթացքում արդիականացնելով և բարեփոխելով ուժային կարողությունները[1]:

Ինչ վերաբերում է հետխորհրդային տարածաշրջանին, ապա ըստ նորվեգացի փորձագետների՝ Մոսկվան կշարունակի ձգտել պահպանել հիշյալ տարածաշրջանն իբրև «անվտանգության քաղաքականության բուֆեր արտաքին աշխարհի դեմ»: Եվ քանի դեռ ՌԴ ղեկավարությունը համարում է Ռուսաստանը բազմակենտրոն համակարգի համաշխարհային բևեռներից մեկը, ուստի անհրաժեշտ է գտնում շրջապատված լինել բարիդրացիական պետություններով, որոնք կողմնորոշված են դեպի Մոսկվան: Այդ իմաստով Ռուսաստանի համար հանգուցային նշանակություն ունի կանխարգելել հետխորհրդային պետությունների՝ Արևմուտքի հետ չափից ավելի սերտ տնտեսական և քաղաքական կապեր հաստատելը[2]:

Կոշտ ռազմավարական մրցապայքարը Ռուսաստանի և Արևմուտքի միջև կշարունակվի, ըստ նորվեգական զեկույցի, դեռևս երկար ժամանակ, և հղի կլինի շատ դեպքերում անկանխատեսելի զարգացումներով: ՌԴ հիմնական մարտահրավերները, որոնց դիմագրավմանն են ուղղված ներկայիս ռուսաստանյան իշխանությունների ջանքերը, միահյուսված են երեք ռազմավարական նպատակների հետ. պահպանել իրենց սեփական իշխանությունը (ռեժիմը), վերահսկել ՌԴ «մերձավոր արտասահմանը» և ապահովել Ռուսաստանի՝ մեծ տերության կարգավիճակն աշխարհում: Ըստ Մոսկվայի՝ Արևմուտքի քաղաքականությունը միտված է այդ երեք գերնպատակների խարխլմանը[3]:

Շվեդական կենտրոնի ուսումնասիրությունը նախ տարբերակում է զինված ուժերի մարտական/ռազմական հզորությունը՝ որպես հենց ԶՈՒ-ին բնորոշ մասնագիտական երևույթ, ընդհանուր ռազմական կարողությունից, որն արտացոլում է երկրի ուժն ու հզորությունն իր համապարփակ դրսևորման մեջ: Ըստ հիշյալ մեթոդաբանական մոտեցման՝ ՌԴ ռազմական կարողությունները գնահատելիս հարկ է նկատի ունենալ սոցիալական երևույթ-

[1] Նույն տեղում, p. 14.
[2] Նույն տեղում, pp. 19-20.
[3] Նույն տեղում, p. 21.

ների ներազդեցությունը, մինչդեռ բուն ռազմական կարողությունները ներառում են երեք նախապայման. դրանք են՝ անվտանգության քաղաքականությունը, պաշտպանական ծախսերը և ներքին պաշտպանական ինդուստրիալ հենքը[1]:

Հետևելով հենց այդ տրամաբանությանը՝ նախ քննարկվում են ՌԴ ԶՈՒ կառուցվածքային փոփոխությունները, ապա՝ մարտական հնարավորություններում գրանցված քանակական փոփոխությունները: Այստեղ կարևոր փաստերից մեկն է դեռևս 2015թ. ՌԴ ՊՆ որոշումը 3 հավելյալ դիվիզիաներ ստեղծելու և դրանք արևմտյան սահմանագոտու երկայնքով տեղաբաշխելու մասին: Հաշվի առնելով, որ բոլոր երեք զեկույցներում հաստատվում է Ռուսաստանի նոր լոգիստիկ և նյութական ռեսուրսներն արագ տեղաշարժելու բարձր պատրաստակամությունը զինված ստորաբաժանումների նշանակալի հեռավորությունների վրա, չի բացառվում, որ կազմավորված (կամ կազմավորման փուլում գտնվող[2]) դիվիզիաների կարողությունները ենթադրում են մի շարք նոր գերակայությունների ապահովում:

Այս առնչությամբ ամերիկյան մի հետազոտության մեջ նշվում են այդ նոր ստորաբաժանումների հավանական (արձագանքման) թիրախները. Ուկրաինայի տարածքում նոր լայնածավալ գործողությունների վերսկսման դեպքում կազմուպատրաստ զորքերի առկայություն ողջ սահմանամերձ գոտու երկայնքով; շարժունակ էլիտային ստորաբաժանումների հնարավոր կիրառում Կենտրոնական Ասիայի կամ հետխորհրդային այլ հանրապետությունում քաղաքական անկայունության զսպման նպատակով, կամ՝ Բելառուսում քաղաքական իրադրության կտրուկ վատթարացման դեպքում ուժային կարողությունների տիրապետում; վերջապես այդ ուժերը կարող են իրականացնել կոնվենցիոնալ տարածքային պաշտպանության գործառույթներ՝ գլխավորապես ընդդեմ հավանական հակառակորդ համարվող ՆԱՏՕ-ի [9, p. 9]:

Ցամաքային ուժերի հզորացումն ըստ էության զգալի չափով ռազմավարական ուղերձ է ՆԱՏՕ-ին և ԱՄՆ-ին առ այն, որ Ռուսաստանն ի զորու է զսպել այն, ինչ համարում է ռազմական սպառնալիք Բալթյան տարածաշրջանում և Արևելյան Եվրոպայում: Կարևորագույն երկու կանխատեսու-

[1] *Russian Military Capability in a Ten-Year Perspective,* p. 17.

[2] Դանիական հետախուզական զեկույցի համաձայն՝ Ռուսաստանը պլանավորում է հզորացնել այդ դիվիզիաները նոր ստորաբաժանումներով, որոնք կդարձնեն դրանք ավելի մեծ, ուժեղ և, հավանաբար, ամբողջությամբ կազմավորված կլինեն 2020թ. դրությամբ, Intelligence Risk Assessment 2016, p. 17.

մային նկատառումները, որոնք առաջ են քաշվում դանիական զեկույցում, հետևյալն են. 1) ՌԴ ցամաքային ուժերի ընդլայնումը և դիվիզիաների վերստեղծումը՝ որպես բանակային ստորաբաժանում, գալիք 5-10 տարիների ընթացքում կիզորացնի բարձր ինտենսիվության մարտական գործողություններում Ռուսաստանի ներգրավվելու հնարավորությունները (թե՛ հարձակողական և թե՛ պաշտպանական) հավասար հակառակորդի տարածքում՝ ՌԴ տարածքի անմիջական մերձակա տարածաշրջաններում; 2) Ռուսաստանը կշարունակի դիտարկել միջուկային զինատեսակները որպես հանգուցային միջոց միջուկային կամ սովորական հակամարտությունների զսպման համար[1]: Վերջապես, հաստատվում է այն մտայնությունը, որ զարգացնելով լուրջ, արագ արձագանքման ներուժ՝ Ռուսաստանն այդ ոլորտում բացարձակ գերակայություն ունի հետխորհրդային մյուս բոլոր հանրապետությունների համեմատ:

Ինչ վերաբերում է ՌԴ ռազմական կարողությունների օպերացիոնալ մակարդակին, ապա այստեղ դարձյալ առանձնացվում է 3 ուղղություն, որոնք կազմում են ՌԴ ռազմական կարողությունների հենքը՝ իրենց անմիջական առաքելությունների տեսքով. 1) օպերացիոնալ – ռազմավարական միասնական բազմապրոֆիլ մարտական գործողություններ (JISCOs); 2) հեռահար ռազմական/մարտական գործողություններ; 3) ռազմավարական զսպում: Հարկ է նշել, որ հեռահար ռազմական կարողությունների ներքո շվեդ մասնագետները նկատի ունեն ավելի քան 300 կմ հեռավորությունից մարտական խնդիրներ լուծելու կարողությունների գնահատումը (օրինակ, Կասպից կամ Միջերկրական ծովերից թիրախների ոչնչացումը Սիրիայի տարածքում կամ «Իսկանդեր» հրթիռների տեղադրումը Կալինինգրադում): Ռազմավարական զսպման տակ գլխավորապես հասկացվում է միջուկային և սովորական (գերճշգրիտ) միջոցներով հավանական հակառակորդների զսպումը[2]:

Երեք միմյանց հետ փոխկապակցված գործոններ են կարևորվում միջնաժամկետ հեռանկարում ՌԴ կարողությունների և դրանցից բխող հնարավոր տարածաշրջանային կեցվածքի պարագայում. մարդկային ռեսուրսներով ապահովվածության հարցը (գլխավորապես՝ զինվորական կադրերով համալրվածությունը), վերազինման նախագծված տեմպն ապահովելու ինդուստրիալ հնարավորությունները և ռազմական ծախսերի շա-

[1] Intelligence Risk Assessment 2016, p. 17.

[2] Նույն տեղում, p. 23.

րանն ապահովելու պետության ֆիսկալ հնարավորությունները: Հատկանշական է, որ եթե ռիսկերի գնահատման նորվեգական զեկույցում առկա են սցենարային վերլուծության որոշակի ասպեկտներ՝ ՌԴ մարտական գործողությունների հնարավոր ներփաթանցման շառավիղը և հաջողության հորիզոնը, ապա շվեդները մատնանշում են ՌԴ ռազմական կարողությունների քանակական «շառավղում» ենթադրվող աճի ցուցանիշները: Մասնավորապես նշվում է, որ Ռուսաստանն ի վիճակի է երկու ռազմական թատերաբեմում մարտնչել՝ ներգրավելով միասնական բազմապրոֆիլ մարտական գործողության մեջ առնվազն 150.000 զինծառայող: Այդ կարողությունը կարող է համալրվել հեռահար ռազմական գործողություններ (*stand-off*) մղելու կարողությունների նշանակալի կատարելագործմամբ. 2013-ից ի վեր սովորական և տակտիկական միջուկային մարտագլխիկներով հրթիռների և համապատասխան համակարգերի թիվը եռապատկվել է[1]: Միաժամանակ, զեկույցի հեղինակները փաստում են, որ ներկայիս ՌԴ ԶՈՒ կառուցվածքը և հասանելի հնարավորությունները թույլ կտան ձևավորել 250.000-300.000 զինծառայող ընդգրկող խմբավորում, սակայն այն հավանաբար թերապահովված կլինի տրանսպորտային և լոգիստիկ կարողություններով[2]:

Զորքերի և, մասնավորապես, նոր ստեղծվող ստորաբաժանումների համալրվածության աստիճանը, ըստ շվեդական զեկույցի, գնահատվում է 75%-ից ավելի, ինչն ադեկվատ է ռազմական խնդիրների լուծման համար, և անհամեմատ ավելին է, քան 2013թ. դրությամբ արձանագրված նիշը: Ինչ վերաբերում է վերազինման հեռանկարին և ակնկալվող արյունքներին, պետական սպառազինության պատվեր-2020 (*Гособоронзаказ* - 2020) հիմնական թիրախներն իրականացված կլինեն, և զեկույցի հեղինակների կարծիքով՝ 2025թ. պլանով նախատեսվող ծավալներն ավելի համեստ կլինեն՝ նկատի ունենալով տեխնիկայի և սպառազինության բավարարվածության պատշաճ աստիճանն արդեն 2020թ. դրությամբ[3]:

Ֆինանսաբյուջետային կարողությունների տեսանկյունից սկանդինավյան բոլոր երեք հաստատությունների գնահատականների համաձայն՝ հիշյալ խնդիրը ոչ միայն բուն ֆինանսական հնարավորություններին է վերաբերում, այլ նաև ՌԴ քաղաքական նախապատվության և հասարակա-

[1] FOI, p. 92.

[2] Նույն տեղում, p. 193.

[3] Այսպես, օրինակ, պլանով նախատեսվում է մինչև 2020թ. զորքերին մատակարարել 2300 տանկ, FOI, p. 171.

կան աջակցությամբ պայմանավորված հարց: Հետաքրքրական է, որ քաղաքական մակարդակի շարունակական հաստատակամությունը զինված ուժերի բարձր մարտունակության և տեխնիկական վերազինման ապահովման շուրջ մատնանշվում է նաև այլ պրոֆիլային հետազոտություններում[1] կամ գերատեսչական գնահատականներում[2]:

Ընդհանուր առմամբ, սկանդինավյան բոլոր երեք գերատեսչական հետազոտական կենտրոնների գնահատմամբ՝ ՌԴ կարողություններում նշանակալի որակական և քանակական աճ է գրանցվել, որը վերաբերում է թե՛ մարտական հնարավորությունների նշանակալի կատարելագործմանը և թե՛ ընդհանուր ռազմական կարողությունների զգալի ընդլայնմանը: Այդ կարողություններում գրանցված փոխակերպումը գլխավորապես պայմանավորված է երկու հարթություններում շաղկապված ձեռքբերումներով. նյութական ու մարդկային ռեսուրսների հետևողական ապահովման քաղաքական կամքով և լոգիստիկ հնարավորությունների աճով, ինչը հնարավորություն է ընձեռել ՌԴ-ին էապես մեծացնել և գործնականում կիրառել իր A2/AD կարողությունները:

Ապրիլ, 2017թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *G.F. Treverton, S.G. Jones, Measuring National Power*, RAND: CA, Santa Monica, 2005.
2. *F.Heady, Public Administration: A Comparative Perspective*, 6th Edition, Marcel Dekker: NY and Basel, 2001.
3. *S.N. Eisenstadt,* Bureaucracy and Political Development in J. LaPalombara, *Bureaucracy and Political Development*, Princeton, NJ: Princeton University Press, 1963.
4. *A.Diamant, Bureaucracy in Developmental Movement Regimes: A Bureaucratic Model for Developing Societies*, Bloomington: IN: CAG Occasional Papers, 1964.
5. *L.Way,* Authoritarian State Building and the Sources of Regime Competitiveness in the Forth Wave: The Cases of Belarus, Moldova, Russia, and Ukraine, *World Politics: A Quarterly Journal of IR*, vol.57, issue 2, Jan. 2005.
6. *E.Brighi, Ch. Hill,* Implementation and behavior in Foreign Policy: Theory, Actors, Cases, eds.S.Smith, A.Hadfield, T.Dunne, Oxford University Press, 2008.
7. A.Kepinevich, *Preserving the Balance: a US Eurasian Defense Strategy*, Center for Strategic and Budgetary Assessments, US: 2017.

[1] *2018 Security Outlook: Potential Risks and Threats* (a foresight project), Canadian Security Intelligence Service, Canada 2016, pp. 47-54.

[2] *Worldwide Threat Assessment*: Statement for the Record, Armed Services Committee, V.R. Stewart, March 2, 2016, p. 7.

8. *М. Гареев,* На мягкую силу найдутся жесткие ответы, *Военно-политический курьер*, 4 декабря, 2013 (N47):
9. *M.Kofman,* The Russian Military: A Force in Transition *in Russia's Military: Assessment, Strategy, and Threat* (A.Golts and M.Kofman), Center on Global Interests, Washington DC, June 2016.

ՌԴ ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ. ՍԿԱՆԴԻՆԱՎՅԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՈՐՈՇ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Վահագն Ազլյան

Ամփոփագիր

ՌԴ ռազմական կարողությունների գնահատման խնդիրն ավանդաբար գտնվում է արևմտյան գերատեսչական, ինչպես նաև ոչ պետական հետազոտական հաստատությունների ուշադրության կենտրոնում: Հոդվածում անդրադարձել ենք սկանդինավյան երեք պետությունների (Շվեդիա, Դանիա, Նորվեգիա) գերատեսչական զեկույցների վերլուծությանը, որոնք ամբողջությամբ կամ որոշ հատվածներով վերաբերում են Ռուսաստանի անվտանգության և պաշտպանության քաղաքականությանը, պաշտպանական և հարձակողական հնարավորությունների գնահատմանը, ինչպես նաև հիշյալ ոլորտներում ռուսաստանյան կարողությունների զարգացման միտումներին ու կանխատեսումներին: Քննարկման դիտակետում են ՌԴ կարողություններն օպերացիոնալ մակարդակում և հեռանկարային պլանավորման հարթությունը. սպառազինման բնագավառի օրախնդիր և նախագծային լուծումների հորիզոնը, ինդուստրիալ ապահովվածության խնդիրները, հեռահար եղանակով ռազմավարական խնդիրներ լուծելու եղանակներն ու հնարավորությունները, ինչպես նաև անվտանգության և պաշտպանական քաղաքականության տարաբնույթ ասպեկտների համադրման հարցեր:

ОЦЕНКА ВОЕННЫХ ВОЗМОЖНОСТЕЙ РФ: НЕКОТОРЫЕ ПОДХОДЫ СКАНДИНАВСКИХ ИССЛЕДОВАТЕЛЬСКИХ ЦЕНТРОВ

Ваагн Аглян

Резюме

Вопрос оценки военных возможностей РФ традиционно находится в центре внимания западных ведомственных, а также негосударственных исследовательских

структур. В данной статье мы анализируем ведомственные доклады трех скандинавских стран (Швеция, Дания, Норвегия), которые полностью или частично касаются безопасности и оборонной политики России, оценки ее оборонных и наступательных возможностей, а также прогнозов и тенденций развития российских возможностей в упомянутых сферах. Обсуждения фокусируются в основном на возможностях РФ на операциональном уровне и аспекте перспективного планирования: повестка сферы вооружений и горизонт проектных решений, задачи индустриального обеспечения, способы и возможности решения стратегических задач в долгосрочном плане, а также вопросы совмещения различных аспектов безопасности и оборонной политики.

ASSESSMENT OF THE RUSSIAN MILITARY CAPABILITIES: SOME APPROACHES OF SCANDINAVIAN RESEARCH CENTERS

Vahagn Aglyan

Resume

Russian military capabilities have traditionally been in the focus of the Western governmental and non-governmental research communities' interests and within the scope of their professional competence. The article concentrates mainly on the three Scandinavian (Denmark, Sweden, and Norway) governmental reports on the intelligence and military risks assessments that fully of partly concern the Russia's capacities in security and defense policies developed over the recent periods, evaluation of offensive and defensive capabilities, as well as some forecasts and development trends projections. The major emphasis is placed upon the level of Russia's operational capacities and planning horizon: armaments acquisition pace, industrial capacities, capabilities to achieve military objectives, and the issues concerning defense and security policy coordination.

ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

«21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱՐ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱՐ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 12 էջը:
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*, ինչպես նաև բանալի-բառեր:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա ամփոփագիր (հայերեն, ռուսերեն, անգլերեն):
4. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), с. (ռուսերեն), p. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, с. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝
   - *Մարգարյան Ա.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
   - *Шарипова Р.,* Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, с. 15, М., 1986.
   - *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from http://www.internews.ras.ru/books/media, Sept. 28, 1998.

5. Ինտերնետային աղբյուրների հղումները ցանկալի է նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրություն

«21-ՐԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 16.05.2017թ.
Թիվ 3 (73), 2017թ.
Տպաքանակը՝ 150:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 7 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում